

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА
BULLETIN OF YEREVAN UNIVERSITY

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ОБЩЕСТВЕННЫЕ НАУКИ
SOCIAL SCIENCES

сиря 6 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ,
ԶԱՂԱԶԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
СЕРИЯ 6 **МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ,
ПОЛИТОЛОГИЯ**
VOLUME 6 INTERNATIONAL RELATIONS,
POLITICAL SCIENCE

№ 3 (144)

ԵՐԵՎԱՆ - 2014

Հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Հրատարակվում է 1967 թվականից:
Журнал выходит три раза в год. Издается с 1967 года.
The Bulletin is published thrice a year. It has been published since 1967.

«ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ»
"БАНБЕР ЕРЕВАНИ АМАЛСАРАНИ"
"BANBER YEREVANI HAMALSARANI"

Գլխավոր խմբագիր՝ **Սիրզոյան Հ. Ղ.**
խմբագրական խորհուրդ.

Ալեքսանյան Ա. Ս., Ավետիսյան Լ. Վ. (գլխ. խմբագրի տեղակալ), **Գարուզյան Ա. Հ.,**
Գոնչար Ն. Ա. (գլխ. խմբագրի տեղակալ), **Խաչատրյան Ա. Կ.,** **Հարությունյան Է. Ա.,**
Հովակիմյան Ա. Է. (պատասխ. քարտուղար), **Հովսեփյան Լ. Ս.,** **Սիմոնյան Ա. Հ.**

Главный редактор: **Мирзоян Г. К.**
Редакционная коллегия:

Аветисян Л. В. (зам. главного редактора), **Алексамян А. С.,** **Арутюнян Э. А.,**
Габузян А. А., **Гончар Н. А.** (зам. главного редактора), **Овакимян А. Э.**
(ответ. секретарь), **Овсепян Л. С.,** **Симонян А. Г.,** **Хачатрян А. К.**

Editor - in - chief: **Mirzoyan H. Gh.**
Editorial Board:

Aleksanyan A. S., Avetisyan L. V. (Deputy editor - in - chief), **Gabuzyan A. H., Gon-**
char N. A. (Deputy editor - in - chief), **Harutyunyan E. A., Hovakimyan A. E.** (Ex-

ecutive Secretary), Hovsepyan L. S., Khachatryan A. K., Simonyan A. H.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԲԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ, ПОЛИТОЛОГИЯ
INTERNATIONAL RELATIONS, POLITICAL SCIENCE

խմբագրական խորհուրդ - **Ալեքսանյան Ա. Ս.** (պատասխանատու խմբագիր), **Ազյան Վ. Ռ.,** **Բայբուրդյան Վ. Ա.,** **Ենգոյան Ա. Փ.,** **Պետրոսյան Գ. Հ.,**
Սաֆարյան Ա. Վ., **Վարդազարյան Ս. Ե.,** **Վարդանյան Լ. Գ.,** **Քեռյան Գ. Ս.**

Редакционная коллегия: **Алексамян А. С.** (ответственный редактор),
Аглыан В. Р., **Байбурдян В. А.,** **Варданыан Л. Г.,** **Вартазарян М. Е.,**
Енгоян А. П., **Керян Г. М.,** **Петросян Г. А.,** **Сафарян А. В.**

Editorial Board: **Aleksanyan A. S.** (Managing Editor), **Aglyan V. R.,**
Bayburdyan V. A., **Engoyan A. P.,** **Keryan G. M.,** **Petrosyan G. H.,** **Sa-**
faryan A. V., **Vardanyan L. G.,** **Vardazaryan M. E.,**

© Բանբեր Երևանի համալսարանի - 2014

© Երևանի պետական համալսարանի հրատարակչություն - 2014

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Տարբեր երկրների զինված ուժերի և ընդհանրապես պաշտպանության ոլորտների միջև կապերն ունեն դարերի պատմություն: Ավանդական ռազմական դաշինքները, սպառազինությունների վաճառքը, զինվորական կցորդների աշխատանքները միջազգային ռազմական համագործակցության դասական օրինակներ են: Հատկապես վերջին երկու տասնամյակների ընթացքում նորանոր երկրներ են սկսում ներգրավվել պաշտպանական ոլորտում տեղի ունեցող միջպետական համագործակցության ձևաչափերում կամ էլ աջակցություն ցուցաբերում այլ երկրներին՝ իրականացնելու բարեփոխումներ իրենց զինված ուժերում: Այսինքն՝ զինված ուժերն իրենց ավանդական դերակատարությունից զատ, այն է՝ նախապատրաստել և անհրաժեշտության դեպքում կիրառել ուժ, ստանձնում են նաև խաղաղ պայմաններում համագործակցության միջոցով իրենց առջև դրված խնդիրների լուծման առաքելություն: Ընդ որում, այս ամենը բնորոշ է ոչ միայն ավանդաբար դաշնակից պետությունների, այլ նաև այնպիսի երկրների, որոնց միջև բարեկամական հարաբերություններ են հաստատվել ոչ վաղ անցյալում: Ռազմական պատմաբան Մ. Դյակոնովի կարծիքով, զինված ուժերն արտաքին քաղաքականության ոլորտում առանցքային տեղ են գրավել աշխարհում, առաջին հերթին բարձրացել է նրանց դերը Եվրոպայում անվտանգության ժամանակակից համակարգի ձևավորման գործում¹:

Միջազգային ռազմական համագործակցության գիտական վերլուծությունը համեմատաբար նոր երևույթ է հասարակագիտական հետազոտությունների ասպարեզում: 1950-ական թվականներից սկսած՝ հատկապես արևմտյան հեղինակներն իրենց աշխատություններում անվտանգության ուսումնասիրությունների շրջանակներում աստիճանաբար սկսում են ուշադրություն դարձնել այս խնդրին:

Թեև երևույթի նկատմամբ առայժմ գիտական հետաքրքրության աստիճանը բարձր չէ, սակայն տարբեր երկրների համապատասխան փաստաթղթերի վերլուծությունը ցույց է տալիս, որ պաշտոնական մակարդակում ռազմական դիվանագիտությանը առանցքային դերակատարություն է տրվում: Բավական է ասել, որ այնպիսի պետություններ, ինչպիսիք են ԱՄՆ-ը, Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան և Չինաստանը, միջազգային ռազ-

¹ Տե՛ս Дьяконов М. Оборонная дипломатия // <http://militaryarticle.ru/zarubezhnoe-voennoe-ozobrenie/2001-zvo/6786-oboronnaja-diplomatija>

մական համագործակցությունը կամ պաշտպանական (ռազմական) դիվանագիտությունը որդեգրել են որպես իրենց պաշտպանական դոկտրինների կարևորագույն առաքելություն և ռազմավարական հայեցակարգերի առաջնային բաղադրատարր²:

Արդեն 1994 թվականից սկսած՝ այլ պետությունների հետ ռազմական և ռազմատեխնիկական համագործակցությունը դասվել է Գերմանիայի ԶՈւ հիմնական խնդիրների շարքը³: 1998 թվականին Մեծ Բրիտանիան «Պաշտպանության ռազմավարական վերանայում» փաստաթղթում առաջին անգամ պաշտոնապես օգտագործում է «պաշտպանական դիվանագիտություն» եզրույթը, և տրվում է դրա սահմանումը: Միջազգային ռազմական համագործակցությունը դիտելով որպես Մեծ Բրիտանիայի զինված ուժերի առջև ծառայած ութ առանցքային խնդիրներից մեկը՝ փաստաթղթում այն սահմանվում է որպես «ՊՆ կողմից ձեռնարկվող միջոցառումներ՝ ուղղված թշնամանքի նվազեցմանը, վստահություն հաստատելուն և պահպանելուն, ինչպես նաև ժողովրդավարական, հաշվետու զինված ուժերի զարգացմանն աջակցելուն, որոնք էապես նպաստում են հակամարտությունները կանխարգելելուն և լուծելուն»⁴: 2012 թվականին Իսպանիայի ՊՆ ընդունած պաշտպանական դիվանագիտության ծրագրում ևս տրվում է հասկացության բավականին համապարփակ սահմանում՝ «Գլխավորապես երկխոսության և համագործակցության վրա հիմնված տարաբնույթ միջազգային միջոցառումներ, որոնք երկկողմ ձևաչափով իրականացնում է ՊՆ-ն դաշնակից, գործընկեր և այլ բարեկամ երկրների հետ՝ ուղղված պաշտպանական դիվանագիտության նպատակները Իսպանիայի արտաքին քաղաքականությանը ծառայեցնելուն»⁵: 2010 թվականի նոյեմբերի 10-ին Բելառուսի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանագրով ընդունված ՊՆ միջազգային ռազմական համագործակցության հայեցակարգում միջազգային ռազմական համագործակցությունը սահմանվում է որպես «բազմակողմ և երկկողմ բնույթի միջոցառումներ, որոնք իրականացվում են պաշտպանության նախարարության կողմից բանակաշինության, պաշտպանական պլանավորման, ԶՈւ պատրաստվածության բարձրացման, սպառազինությունների վերահսկման, զինվորական կրթության, գիտության, մշակույթի, սպորտի, ինչպես նաև ռազմատեխնիկական բնագավառներում»⁶: Ինչպես տեսնում ենք, տարբեր երկրների պաշտոնական փաստաթղթերում բնորոշումները տարբերվում են մինչև միջակայք՝ կախված պաշտպանության և անվտանգության ոլորտներում տվյալ պետության առջև ծառայած հիմնախնդիրների բնույթից, պետության աշխարհաքաղաքական դիրքից և այլն:

Ինչ վերաբերում է գիտական գրականության մեջ առկա սահմանումներին, ապա պետք է նշել, որ մասնագետների մեծ մասը դժվարանում է

² Տե՛ս **Winger, Gregory**, «A Theory of Defense diplomacy. In: What Ideas Do?», <http://www.iwm.at/publications/5-junior-visiting-fellows-conferences/the-velvet-gauntlet/>

³ Տե՛ս **Дьяконов М.**, նշվ. աշխ., էջ 6:

⁴ «New challenges to defence diplomacy», Strategic Survey, Volume 100, Issue 1, 1999, p. 41.

⁵ **Ministerio de Defensa** «Defence Diplomacy Plan», January, 2012, p. 18.

⁶ «Концепция международного военного сотрудничества Министерства обороны Республики Беларусь» // http://www.mil.by/ru/military_policy/international/#konceptcia

գիտական համապարփակ սահմանում տալ: Պատճառը թերևս այն է, որ միջազգային հարաբերությունների տեսության մեջ ավանդաբար հակադրվել են «համագործակցություն» և «ռազմական քաղաքականություն» եզրույթները: Համագործակցությունը և զինված ուժերի օգտագործումը դիտվել են որպես հակադիր բևեռներ, որոնց միջև ընկած տիրույթում էլ վերլուծվել են ինչպես պետությունների վարքագիծը, այնպես էլ միջազգային հարաբերությունների համակարգի գործառույթը: Իսկ միջազգային ռազմական համագործակցությունը մի գործընթաց է, որում ներգրավված զինված ուժերի միջև առկա է լայն համագործակցություն՝ ուղղված ինչպես հենց տվյալ երկրի անվտանգության, այնպես էլ միջազգային խաղաղության ամրապնդմանը: Նաև այն հանգամանքը, որ Սառը պատերազմի ավարտից հետո ռազմական դիվանագիտությունը դարձել է ավելի ընդգրկուն՝ ներառելով նաև ազգային և միջազգային անվտանգության ապահովմանը վերաբերող միջպետական հարաբերությունների որոշակի հատված, նույնպես մեծացնում է հասկացությունը համալիր գիտականորեն սահմանելու հնարավորությունը:

Հիմնահարցի մասնագետներ Ա. Քոթեյը և Ա. Ֆորսթերը պաշտպանական դիվանագիտությունը բնորոշում են խաղաղ ժամանակներում զինված ուժերի և նրանց ենթակառուցվածքների (պաշտպանության նախարարություններ)՝ որպես արտաքին և անվտանգության քաղաքականության գործիքների օգտագործում⁷: Մ. Էդմոնդը ևս շեշտը դնում է միջազգային ռազմական համագործակցության ժամանակ զինված ուժերի ոչ դասական կիրառման (ոչ պատերազմական իրավիճակներ) բնույթի վրա: Ըստ նրա՝ պաշտպանական դիվանագիտությունը ոչ պատերազմական իրավիճակներում զինված ուժերը օգտագործելն է արտաքին ասպարեզում պետության առջև ծառայած նպատակներն իրականացնելու համար⁸:

Մասնագետների մեկ այլ խումբ միջազգային ռազմական համագործակցությունը սահմանում է ըստ նրա նպատակների: Այսպես, Ս. Թանը և Բ. Սինգիը ռազմական դիվանագիտությունը դիտում են որպես ազգային պաշտպանական կառույցների և զինվորականների կողմից վստահություն հաստատելու, հակամարտությունները կանխարգելելու կամ կարգավորելու խաղաղ և համագործակցային նախաձեռնությունների իրականացում⁹, իսկ Ք. Մուֆհանայի բնորոշմամբ՝ միջազգային ռազմական համագործակցությունը կայուն համագործակցային հարաբերություն է, որը կոչված է նպաստելու վստահություն սերմանելու, հակամարտությունների կարգավորումը դյուրացնելու, պաշտպանական հարաբերություններում թափանցիկություն ապահովելու, ընդհանուր շահը գիտակցելու և այլ ոլորտներում համագործակցություն հաստատելու գործին¹⁰: Ի մի բերելով նշված

⁷ Տե՛ս **Cottey A, Forster A.** «Reshaping Defence Diplomacy: new roles for military cooperation and assistance». Oxford University Press with the IISS, 2004, էջ 6:

⁸ Տե՛ս **Edmonds, Martin and Greg Mills.** «Beyond the Horizon: Defence, Diplomacy and South Africa's Naval Opportunities». Johannesburg: South African Institute of International Affairs and the Centre for Defence and International Security Studies, 1998:

⁹ Տե՛ս **Tan Seng and Bhubhinder Singh.** «Introduction», Asian Security, Journal of Defense Studies, 8.3 (2011), էջ 225:

¹⁰ Տե՛ս **Muthanna, K. A.** «Military Diplomacy», Journal of Defence Studies, Vol. 5, № 1, 2011, 9:

սահմանումները՝ միջազգային ռազմական համագործակցությունը կարելի է բնորոշել որպես պաշտպանական ոլորտում պետությունների միջև տարաբնույթ առնչությունների համախումբ, որը միտված է լուծելու տվյալ պետության արտաքին և անվտանգության քաղաքականությանը, ինչպես նաև պաշտպանական ոլորտի արդյունավետության բարձրացմանը վերաբերող խնդիրները:

Միջազգային ռազմական համագործակցությունը ներառում է այնպիսի միջոցառումներ, որոնց մի մասը դարեր շարունակ բնորոշ է եղել միջպետական հարաբերություններին, իսկ մյուս մասը կարևորվում է հատկապես վերջին երկու տասնամյակների ընթացքում: Առաջին խմբի լավագույն օրինակ է ռազմական կցորդների գործունեությունը, որն առաջին անգամ երևան է եկել եվրոպական պետությունների հարաբերություններում XIX դարում: Յետաքրքիր է, որ ներկայումս միջազգային ռազմական համագործակցության տեսաբան Ա. Ֆրոլովը շարունակում է զինվորական կցորդների գործունեությունը դիտել որպես ռազմական դիվանագիտության հիմնական դրսևորում¹¹:

Ավելի երկար պատմություն ունեն տարբեր պետությունների միջև ռազմական դաշինքները, որոնք հատկապես մեծ թափ ստացան ժամանակակից միջազգային հարաբերությունների ձևավորման՝ Վեստֆալյան համակարգի հաստատման շրջանում: XX դարի առաջին կեսին պաշտպանության ոլորտում բավականին լայն հարաբերություններ էին հաստատվել եվրոպական տերությունների և նրանց գաղութների միջև: Այդ նպատակին էին ծառայում, մասնավորապես, պաշտպանության կայսերական քոլեջը Միացյալ Թագավորությունում և Ջու մասնագիտացված դպրոցը Ֆրանսիայում: Պատահական չէ նաև, որ գաղութային համակարգի փլուզումից հետո Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի գաղութների մեծ մասը նախընտրեց պաշտպանության ոլորտում շարունակել սերտ հարաբերություններն այդ երկրների հետ: Սառը պատերազմի ժամանակահատվածում ԽՍՀՄ-ը և ԱՄՆ-ը իրենց դաշնակիցներին մատակարարում էին սպառազինություններ, օգնում զինվորական պատրաստվածությունը բարձրացնելու և այլ հարցերում՝ պաշտպանության ոլորտում կիրառելով բազմակողմ և երկկողմ հագեցած համագործակցության ձևաչափեր: Միջազգային ռազմական համագործակցությունը բնորոշ է եղել ինչպես Յուսիսատլանտյան դաշինքին, այնպես էլ Վարշավյան պակտին: Սառը պատերազմի ավարտից հետո պաշտպանության ոլորտում համագործակցության մի շարք ձևաչափեր և ծրագրեր կիրառվեցին նաև նախկինում հակառակորդ, սակայն արդեն ռազմական դաշինքների անդամ պետությունների միջև, բացի այդ՝ միջազգային լարվածության էական թուլացումը նպաստեց աշխարհի տարբեր հատվածներում ռազմական դիվանագիտության ծավալմանը:

Ա. Քոթեյը և Ա. Ֆորսթերը միջազգային ռազմական համագործակցության ժամանակակից դրսևորումները դասակարգում են այսպես՝

1. Պաշտպանության ոլորտի զինվորական և քաղաքացիական պաշ-

¹¹ Стів Фролов А. В., Винокуров В. И. История военной дипломатии. В четырех томах. М., 2011:

տոնյաների միջև երկկողմ և բազմակողմ կապեր,

2. Ձինվորական կցորդների աշխատանք,

3. Ռազմական համագործակցության վերաբերյալ երկկողմ պայմանագրեր,

4. Պաշտպանական ուղորտի օտարերկրյա պաշտոնյաների ուսուցում,

5. Ձինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության, պաշտպանական և ռազմատեխնիկական կառավարման ուղորտներում խորհրդատվություններ,

6. Ձինվորական անձնակազմի և ստորաբաժանումների միջև կապեր, փոխանակումներ և փոխայցելություններ,

7. Մասնագիտական փոխանակումներ,

8. Խորհրդատվական խմբերի տեղակայում,

9. Ձինտեխնիկայի տրամադրում և այլ մատակարարումներ,

10. Մարտունակության բարձրացման նպատակով երկկողմ և բազմակողմ զորավարժություններ¹²:

Այս դասակարգման հիմքը միջազգային ռազմական համագործակցության բնագավառում ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի համապատասխան կառույցների ուրվագծած միջոցառումներն են: Մասնավորապես, ԱՄՆ-ում դրանց շարքին են դասվել միջազգային ռազմական կրթական ծրագրերը, զինվորաքաղաքացիական հարաբերությունները, պաշտպանական ուղորտի կառավարման և զինվորական արդարադատության բնագավառում խորհրդատվությունը, սպառազինությունների, զենք-զինամթերքի առևտուրը և մատակարարումները, միջազգային խաղաղապահ առաքելություններում տարբեր երկրների միջև համագործակցությունը, ռազմական ուղորտին տրամադրվող ֆինանսական օգնությունը, զինվորական պաշտոնյաների պաշտոնական կապերը և համատեղ զորավարժությունները¹³: Մեծ Բրիտանիայում նման միջոցառումներից են սպառազինությունների վերահսկման ուղորտում բանակցությունները և տեսչությունները, «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումները, պաշտպանական ուղորտի պաշտոնյաների, խորհրդատվական խմբերի փոխայցելությունները, փոխանակումները, համատեղ ուսուցումները և զորավարժությունները¹⁴: Այս ամենից կարող ենք եզրակացնել, որ միջազգային ռազմական համագործակցությունը ներկայումս ընդգրկում է ռազմաքաղաքական, ռազմատեխնիկական, ռազմակրթական և այլ ուղորտներում իրականացվող միջոցառումների լայն խումբ:

Վերջին երկու տասնամյակների ընթացքում ռազմական դիվանագիտության օրակարգի էական ընդլայնումը որոշակի փոփոխություն է առաջացրել նաև պաշտպանական դիվանագիտության բնույթի մեջ: Եթե պետությունները միմյանց հետ նախկինում համագործակցում էին բացառապես նեղ ազգային շահերն առաջ մղելու, հավանական հակառակորդ երկրներին դիմակայելու, սեփական ազդեցության գոտիներն ընդլայնելու համար կամ էլ տնտեսական շահագրգռվածությունից դրդված՝ հիմնակա-

¹² Տե՛ս A. Cottey and A. Forster, նշվ. աշխ., էջ 7:

¹³ Տե՛ս նույն տեղը:

¹⁴ Տե՛ս «Strategic Defence Review», Ministry of Defence of United Kingdom, էջ 291-292:

նուն դրսևորելով մրցակցային վարքագիծ, ապա ներկայումս միջազգային ռազմական համագործակցությունը հետապնդում է արտաքին անվտանգության քաղաքականության իրականացման, հաճախ նաև պետական ինստիտուտների կայացմանն ուղղված ավելի լայն նպատակներ, և միջպետական հարաբերությունների այս ոլորտում հետզհետե ավելի է մեծանում համագործակցային վարքագծի չափաբաժինը: Որոշ հեղինակներ, հաշվի առնելով այս միտումը, շրջանառության մեջ են դրել «հին ռազմական դիվանագիտություն» և «նոր ռազմական դիվանագիտություն» եզրույթները¹⁵: Կարծում ենք, սակայն, որ միջազգային ռազմական համագործակցության պատմական զարգացման փուլերի նման հակադրումը այնքան էլ տեղին չէ: Հարցն այն է, որ թեև միջազգային ռազմական համագործակցության օրակարգը, ինչպես նաև նպատակները էապես ընդլայնվել են, այնուամենայնիվ պետությունների մտահոգվածությունն իրենց անվտանգության հիմնախնդիրներով այսօր ևս առաջնային գործոն է ռազմական դիվանագիտության մեջ: Վերջին տարիներին միջազգային ասպարեզում ճգնաժամային մի շարք իրավիճակներ նույնպես ցույց են տալիս, որ մրցակցային վարքագիծը կամ այդ վարքագծի ընկալումը շարունակում է գերակայել պաշտպանական ոլորտում պետությունների հարաբերությունները կառուցելու գործում:

Գիտական գրականության մեջ և պաշտոնական փաստաթղթերում մշակվել են միջազգային ռազմական համագործակցության նպատակների մի քանի տարբերակներ: Մասնավորապես, Թեյլորը և Ֆրենսիսը ռազմական դիվանագիտության նպատակներից և գործառույթներից առանձնացնում են հետևյալ չորսը՝ 1. զինվորականների միջև ուղղակի շփումների հաստատում, 2. զինվորաքաղաքացիական հարաբերությունների, զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների զարգացում, 3. տարբեր երկրների պաշտպանական ոլորտների համատեղելիությանը նպաստում և 4. «կոշտ անվտանգության» նպատակների իրականացում, այն է՝ միջուկային զենքի չտարածում և սպառազինությունների վերահսկողություն¹⁶: Մեկ այլ մասնագետ՝ Դու Պլեսիսը, այս ցանկին ավելացնում է նաև պետությունների միջև ընդհանուր համագործակցային մթնոլորտին և պաշտպանական բնագավառի հնարավորություններին նպաստելը¹⁷: Ըստ Մուֆհանայի՝ ռազմական դիվանագիտությունը նաև միտված է տարբեր պետությունների միջև անվտանգության և պաշտպանության հարցերով քաղաքական երկխոսությունը դյուրացնելուն, պաշտպանական ոլորտների միջև իրավապայմանագրային հարթություններն ընդլայնելուն, պաշտպանական ոլորտների թափանցիկությունը և դրանով պետությունների միջև վստահությունը մեծացնելուն¹⁸: Ակնհայտ է, որ բերված դասակարգումներում հեղինակները հիմնականում հենվում

¹⁵ Տե՛ս Cottey A, Forster A. W., նշվ. աշխ., էջ 8:

¹⁶ Տե՛ս «New challenges to defence diplomacy», Strategic Survey, Volume 100, Issue 1, 1999, էջ 48:

¹⁷ Տե՛ս Du Plessis, Anton, «Defence Diplomacy: Conceptual and Practical Dimensions with Specific Reference to South Africa», Strategic Review for Southern Africa, November 2008, էջ 15:

¹⁸ Տե՛ս Muthanna K. A., նշվ. աշխ., էջ 11:

են այսպես կոչված «նոր ռազմական դիվանագիտության» նպատակների վրա, ինչպես նաև կարևորում են այն գործառնությունները, որոնք ռազմական դիվանագիտությունն իրականացնում է միջազգային հարաբերությունների համակարգի ընդհանուր համատեքստում:

Ինչ վերաբերում է տարբեր պետությունների կողմից այս ոլորտում իրենց առջև դրված նպատակներին, ապա պետք է ընդգծել, որ պաշտոնական փաստաթղթերում գերակայում է տվյալ պետության անվտանգության և պաշտպանության ոլորտի առջև ծառայած խնդիրների լուծման համատեքստում միջազգային ռազմական համագործակցության նպատակները դիտարկելու միտումը: Այսպես, Իսպանիայի պաշտպանական դիվանագիտության ծրագրում որպես նպատակներ են հիշատակվում պաշտպանական ոլորտում երկխոսության միջոցով տարբեր պետությունների միջև փոխըմբռնման և վստահության աճը, միջազգային կայունությանը նպաստելը, բարեկամ պետությունների պաշտպանական բարեփոխումներին աջակցելը, պատմական և մշակութային սերտ կապեր ունեցող պետությունների հետ ռազմաարդյունաբերական ու տեխնոլոգիական կարողությունների ոլորտում համագործակցությունը¹⁹: Բելառուսի ՊՆ միջազգային համագործակցության հայեցակարգում որպես նպատակներ են նշված երկրի ռազմական անվտանգության և ազգային շահերի պաշտպանության համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը, պաշտպանության ոլորտում իրավահավասար համագործակցության ձգտող պետությունների հետ փոխգործակցության զարգացումը, ՁՈւ կայացման և զարգացման ծրագրի իրականացմանը նպաստող արտաքին գործոնների ձևավորումը²⁰: ՀԱՊԿ անդամ մեկ այլ պետություն՝ Ղազախստանը, միջազգային ռազմական համագործակցության նպատակներ է համարում ռազմական անվտանգության ապահովման խնդիրների բալանսավորված լուծումը, միջազգային գործընթացներին իր կարողություններին համապատասխան մասնակցելը և տարածաշրջանում առաջատար պետության կարգավիճակի պահպանումը²¹:

Հայաստանի համար ներքին և արտաքին պաշտպանական քաղաքականությունը ռազմական անվտանգության ապահովման կարևոր գործոն է²²: Միևնույն ժամանակ, ՀՀ համապատասխան գերատեսչությունները գործընկեր երկրներից ստանում են պաշտպանական բարեփոխումների համար անհրաժեշտ խորհրդատվություն և օժանդակություն²³:

Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինում միջազգային ռազմական և ռազմատեխնիկական համագործակցության նպատակ-

¹⁹ Տե՛ս «Defence Diplomacy Plan», Ministerio de Defensa, January 2012, էջ 19:

²⁰ Տե՛ս «Концепция международного военного сотрудничества Министерства обороны Республики Беларусь» // http://www.mil.by/ru/military_policy/international/#konceptcia

²¹ Տե՛ս Указ Президента Республики Казахстан от 21 марта 2007 года № 299 "Об утверждении Военной доктрины Республики Казахстан" // <http://www.unesco.kz/cgi-bin/library?e=d-000-00---0HRCru-akalru%2cHRCru-01-1-0--0prompt-10---4-----0-11--1-ru-50---20-about---00021-001-1-0windowsZz-1251-10&a=d&c=HRCru&cl=CL4.1&d=HASH0197badbc2f400c3dcb39880>

²² Տե՛ս **Է. Մինասյան**, Հայաստանի երրորդ Հանրապետության պատմություն, Եր., 2013, էջ 532:

²³ Տե՛ս նույն տեղը, էջ 533:

ներ են նշված՝ 1) ռազմական անվտանգության համակողմանի ապահովումը և ռազմաքաղաքական դիրքերի ամրապնդումը, 2) տարածաշրջանում զինված ուժերի հավաքական կարողությունների, ինչպես նաև ռազմական և ռազմաքաղաքական դաշինքների հարաբերական հավասարակշռության պահպանումը, 3) զինված ուժերի արդիականացման համար միջազգային փորձի և օժանդակության կիրառումը, 4) զինված ուժերի կադրերի ուսուցման և վերապատրաստման, սպառազինության և ռազմական տեխնիկայի ապահովումը, 5) ռազմական արդյունաբերության համալիրի զարգացումը և վերակառուցումը, ՀՀ զինված ուժերի մարտունակության ու հեղինակության ամրապնդումը, պաշտպանական բարեփոխումների բարեհաջող և արդյունավետ իրականացումը²⁴: Միևնույն ժամանակ, ՀՀ ռազմական դիվանագիտությունը է դաշնակից ու գործընկեր երկրների զինված ուժերի հետ փոխգործակցության հնարավորությունների ընդլայնմամբ լուծում է ազգային և միջազգային անվտանգության ապահովման խնդիրները²⁵:

Ինչպես ընդգծում է ՀՀ պաշտպանության նախարար Ս. Օհանյանը, Հայաստանն իր անվտանգությունն ապահովող միջավայրն ընդլայնելու և ամրապնդելու նպատակով սերտ կապեր է հաստատել զարգացած պետությունների զինված ուժերի հետ, ինտեգրվում է հեղինակավոր ռազմաքաղաքական դաշինքներին և ակտիվորեն մասնակցում նրանց ծրագրերին²⁶: Բացի այդ, Հայաստանի ռազմական համագործակցության հիմնական ջանքերն ուղղվում են ՀՀ պաշտպանական բարեփոխումներն իրականացնելու, բանակն արդիականացնելու և զինված ուժերում միջազգային փորձը ներդնելու գործին²⁷: Հ. Քոթանջյանը, վերլուծելով Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության և ԱՊՀ մասնակից պետությունների ռազմական անվտանգության համաձայնագրի ստորագրման նշանակությունը, հանգում է այն եզրակացության, որ Հայաստանն այսպիսով դառնում է միջազգային անվտանգության կոլեկտիվ պատասխանատվության մասնակից²⁸: Նշենք, որ Հայաստանի բազմակողմ և երկկողմ ձևաչափերով միջազգային ռազմական համագործակցության մի շարք այլ օրինակներ, մասնավորապես՝ մասնակցությունը միջազգային խաղաղապահ առաքելություններին, ևս վկայում են այն մասին, որ ՀՀ ռազմական դիվանագիտությունը ստանձնել է նաև միջազգային անվտանգության ապահովման որոշակի առաքելություն²⁹:

²⁴ Տե՛ս «ՀՀ Ռազմական դոկտրին», Բաժին 2, գլուխ 5, կետ 23, <http://www.mil.am/files/mil-doctrine-arm.pdf>

²⁵ Տե՛ս <http://www.mil.am/1298098598>

²⁶ Տե՛ս Ս. Օհանյան, Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը, Եր., 2012, էջ 205:

²⁷ Տե՛ս ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի ելույթը բանակի 15-րդ տարեդարձի կապակցությամբ, // <http://www.mil.am/old-1299193981/page/77>

²⁸ Տե՛ս Հ. Քոթանջյան, Հակամարտության էթնոքաղաքագիտություն: Հայաստանի ռազմական քաղաքականության և ազգային անվտանգության հիմունքները, ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, Եր., 2010, էջ 494:

²⁹ Տե՛ս Գ. Հովհաննիսյան, Խաղաղապահ գործունեությունը Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության համակարգում, // «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», 2014, № 1, էջ 3-12:

Բանալի բառեր – միջազգային ռազմական համագործակցություն, պաշտպանական դիվանագիտություն, ռազմական դիվանագիտություն, պաշտպանական բարեփոխումներ, ազգային և միջազգային անվտանգություն, պաշտպանական քաղաքականություն

АНДРАНИК ГРИГОРЯН – *О концептуальных аспектах международного военного сотрудничества.* – В статье истолковывается понятие «международное военное сотрудничество». Хотя различные государства сотрудничают в военном отношении с древности, в последние два десятилетия повестка оборонной дипломатии существенно расширилась. Претерпел изменения также её характер. Особое внимание уделяется в статье сотрудничеству с другими странами, которое осуществляет в военной сфере Армения. Среди аспектов этого сотрудничества выделяются создание благоприятных условий для международной безопасности и её укрепление, а также последовательное развитие оборонной промышленности.

Ключевые слова: *международное военное сотрудничество, военная дипломатия, оборонная дипломатия, оборонные реформы, международная и национальная безопасность, оборонная политика*

ANDRANIK GRIGORYAN – *On the Issue of Conceptual Aspects of International Military Cooperation.* - This article focuses on the theoretical aspects of the International Military Cooperation. As a result of analysis of official documents and theoretical literature we have tried to define a concept, and framework of its aims and activities. It is stated that though some defense diplomacy activities were part of interstate relations during the centuries, in the past two decades the framework of defense diplomacy has essentially been enlarged. Some changes, regarding the character of defense diplomacy, have also taken place. Special attention is paid to the problem of aims of International Military Cooperation of Armenia. Amongst them the following ones have central importance: creation of favorable conditions for the State Security, assistance to the reforms of defense sphere and the participation in the strengthening of International Security.

Key words: *International Military Cooperation, Defense Diplomacy, Military Diplomacy, Defense reforms, National and International Security, Defense Policy*

ИДЕОЛОГИЧЕСКИЕ ОРИЕНТИРЫ СТРАН ЕВРАЗИЙСКОГО СОЮЗА

АШОТ ЕНГОЯН

В своем послании Федеральному собранию в 2013 г., а чуть позже и во время традиционной итоговой пресс-конференции президент РФ В. Путин выдвинул идею активизировать в российском обществе консервативные подходы к социальным процессам. Это было мотивировано, прежде всего, необходимостью защиты населения от навязываемых извне чуждых и “очень сложно воспринимаемых” им “квазиценностей”. По мнению В. Путина, следует оградить российских граждан “от достаточно агрессивного поведения некоторых социальных групп”, которые “не просто живут, как им хочется, а достаточно агрессивно навязывают свою точку зрения другим людям и в других странах”.

Президент РФ, бесспорно, подразумевает инициированную западными экспертами в 90-х годах прошлого века усиленную, а иногда и бесцеремонную вестернизацию постсоветских обществ, приведшую во многих аспектах к их морально-нравственной и духовной деградации. В настоящее время процессы вестернизации несколько затормозились, однако направляемое из одного геополитического центра “мировое общественное мнение” не прочь продолжить насаждение не свойственных постсоветским народам ценностных ориентиров. Поэтому предложение В. Путина выглядит защитной реакцией традиционно настроенных слоев общества на “ценностное принуждение”. Важным средством против него признается активизация в духовной жизни общества консервативного сегмента.

В данном случае выбран именно консерватизм, который традиционно оппонирует идеологической основе всех протекающих в постсоветский период преобразований – либерализму. Однако следует учесть, что современный либерализм предстает в форме политического либертарианства – логического продолжения англо-саксонской версии этой идеологии, основанной на собственном понимании демократии.

Вообще говоря, есть две разные традиции демократии и две базирующиеся на них версии либерализма. С одной стороны, англо-саксонская, сформулированная Дж. Локком: демократия как осуществление и гарантия прав индивида. Согласно этой концепции, демократичным считается государство, в котором не только гарантированы основные права индивида, но и максимально расширено пространство его свободы. И если человек лишен основных прав и свобод, то он вправе бороться за них.

Континентальная, главным образом французская традиция идет от Ж.-Ж. Руссо. Она понимает демократию не как экспансивное осуществление и рас-

ширение свобод и прав индивида, а как акт самоутверждения нации. Субъект демократии – не индивид, а нация, то есть коллектив. В основе демократии лежит право народа самому решать свою судьбу и строить свой образ жизни согласно собственным представлениям. Такое понимание демократии можно упрощенно, в отличие от либерально-индивидуалистического, обозначить как либерально-коллективистское. На практике демократические страны используют либо преимущественно национальную модель демократии, либо некую среднюю форму – между индивидуалистической и коллективистской. Постсоветские общества в силу объективных и субъективных причин двинулись к национальной и либерально-коллективистской модели демократического общества. Присущая им “пробуксовка” демократических реформ объясняется именно противоречиями между двумя различными пониманиями демократии, что связано с преобладающей в этих транзитных обществах ментальностью.

В своем историческом развитии либерализм пережил ряд идейно-политических кризисов, сопряженных с переоценкой ориентиров¹. Это было продиктовано изменяющимися социально-политическими условиями (две мировые войны, сильнейший экономический кризис 1929-1932 гг.). Кроме этого, соперничающие с либерализмом идеологии консерватизма и социализма за этот период буквально “растаскали” его идеи, соответственно справа и слева. Идеологические трансформации либерализма и значительная активизация других идейно-политических течений привели к поэтапному сокращению его социальной базы. Тем самым социальная почва либерализма была размыта деятельностью идеологий-конкурентов.

Становление нового облика либерализма идет по различным, во многом отрицающим друг друга направлениям. С одной стороны, заметен акцент на равенстве и справедливости, рационализации регулирующей роли государства, присущий либерал-реформизму, или социал-либерализму, который в политическом плане уже ослабел. С другой, распространяются антикейнсианские концепции, отрицающие вмешательство государства в экономику, его активное участие в социальной жизни. Таков неолиберализм, или либертаризм, который сегодня выступает под знаменами “истинного либерализма” и имеет большой политический вес и в западных обществах, и в мире в целом.

Либерал-реформизм, исходя из кейнсианских принципов, допускает как вовлеченность государства в экономическую жизнь общества, так и его активное участие в социальных программах, предполагает социальное сотрудничество и защиту, сочетание конкуренции с государственным регулированием. Тем самым, отказываясь от основополагающих принципов классического либерализма, это идеологическое течение вплотную приближается к социал-демократизму. По сути, в данном случае речь идет о совершенно новом идейно-политическом течении, свернувшем с либерального пути. В современном мире оно лишено сколь-нибудь серьезного политического влияния.

Это обстоятельство позволило некоторым идеологам заявить о возврате к истокам классического либерализма на идейной основе либертаризма (или

¹ См. Енгоян А. П. Идеологические основы социально-политических трансформаций в постсоветской Армении. Ер., 2011.

неолиберализма). Последний сформировался в середине XX века как оппозиция идеям социал-либерализма. Неопределенность названия этого течения объясняется тем, что существует почти противоположное понимание либерализма в европейской и американской традиции. В Америке слово “либерал” почти синонимично слову “социалист”. Либерализм в этой традиции – поддержка государственных социальных программ (и соответственно увеличение налогообложения) и национальных, религиозных и социальных меньшинств. В Европе слово “либерал”, наоборот, является антонимом слова “социалист”. Европейский либерал выступает за ограничение вмешательства правительства в экономику. В США в определении этого термина акцент ставится на его политической составляющей, в европейских же странах превалирует его экономическое толкование.

Как бы то ни было, в конечном счете оба понимания сводятся к продолжению англо-саксонской традиции классического либерализма, ставят акцент на свободу индивида в ущерб коллективным интересам. По словам известного исследователя либертариизма Дэвида Боуза, это идейно-политическое течение “можно рассматривать как политическую философию, последовательно применяющую идеи классического либерализма, доводя либеральную аргументацию до выводов, более жестко ограничивающих роль государства и защищающих свободу личности в большей степени, чем любые другие классические либералы”². Именно эта версия либерализма, несмотря на отсутствие серьезных предпосылок, в 1990-х годах была, по сути, навязана постсоветским обществам,

Многие сторонники подобных идей не называют себя либертарианцами или неолибералами, настаивая на традиционном обозначении своей идеологии (либерализм) и определяя себя в качестве классических либералов. Другие считают подобную приверженность к старым терминам ошибочной, вносящей путаницу в политическую картину мира и мешающей распространению либертарианских (неолиберальных) идей. По мнению В. Малахова, в отличие от либерализма, «термин “неолиберализм” применяется для обозначения не философской и мировоззренческой, а политической и идеологической установки»³.

С точки зрения либертариизма функционирование рынка обладает самоценностью и составляет фундаментальное основание этики. Соответственно либертариизм не видит различий между рыночной экономикой и рыночным обществом, а его этическая концепция возвращается к меркантилизму. Согласно либертарианцам рыночный обмен является основой для “целостной системы этических норм, достаточной для регулирования всех человеческих действий, которая заменила собой все предшествующие этические нормы”⁴.

Налицо некоторая примитивизация сложно организованной социальной действительности. Вопрос нельзя ставить подобным образом: либо рыночная экономика, автоматически влекущая за собой демократизацию, либо эконо-

² Боуз Д. Либертарианство: История, принципы, политика. Челябинск, 2009, с. 28–29.

³ Малахов В. С. Государство в условиях глобализации. М., 2007, с. 10.

⁴ Харви Д. Краткая история неолиберализма. М., 2007, с. 4.

мическое планирование, автоматически приводящее к ущемлению демократии. Многогранная социальная жизнь способна находить разнообразные, не менее эффективные пути к процветанию конкретного общества. Организация общественной жизни может применять элементы и принципы, присущие самым различным идейно-политическим течениям. Вопрос в данном случае касается лишь того, адекватно ли идейная система отражает реальную действительность, учитывает ли сложившуюся в обществе социальную картину.

Именно на такое прагматичное отношение к действительности направлен современный консерватизм. В процессе своего развития, уделяя должное внимание неотвратимости утверждения демократии, он многое перенял у своих либеральных оппонентов. Однако, исходя из своих принципиальных подходов к приоритету общего над частным, консерваторы восприняли как объективную континентальную (коллективистскую) трактовку либеральной демократии. Сегодня такое видение современных проблем в значительной мере соответствует настроениям многих транзитных постсоветских обществ.

За более чем двухсотлетний период идеологической борьбы с либерализмом консерватизм подвергался различным трансформациям. Так, идею сильного государства как охранителя традиционного общества консерваторы заменили идеей регулирования общественной жизни посредством морально-нравственных норм и традиций. Сейчас консерватизм является сторонником укрепления рыночных отношений, контроля над государственными органами посредством институтов гражданского общества, свободной предпринимательской деятельности на истинно конкурентных условиях и др.

В отличие от своих предшественников, современные консерваторы выступают против чрезмерного укрепления государственной власти, которое ограничивает свободу индивида, создает коррумпированную бюрократию, сдерживает излишним контролем предпринимательскую инициативу и неспособно улучшить качество жизни. В целом из партий, защищающих статус-кво, многие современные консервативные партии превратились в инициаторов и проводников кардинальных реформ, направленных на укрепление свободного общества, в том числе и в развитых индустриальных странах. Противопоставляя современный консерватизм либерал-реформистскому течению 1980-х годов, английский историк и журналист П. Колли отмечал, что истинными носителями идей классического либерализма стали именно консервативные партии, которые вновь подняли “знамя свободы”, “трусливо” брошенное социал-либералами⁵.

В постсоветских странах сегодня сохраняется неоднозначное отношение к консерватизму, что продиктовано недопониманием сути его ценностей. Насаждавшаяся в советском обществе революционная риторика приучила граждан критически относиться к таким понятиям, как сохранение статус-кво, приспособленчество угнетенных классов и народов, к чему якобы нацеливал политический консерватизм. Хотя на рубеже 1980–1990-х годов в изучении советской и постсоветской наукой феномена консерватизма наблюдался настоящий прорыв, настороженное отношение к нему продолжает сохраняться.

⁵ См. Colly P. *Studies in the History of ideas*. London, 1983, с. 41.

Давая определение консерватизма, исследователи встают перед вопросом: это апологетика прошлого, которая сродни реакционности либо конформизму, или недоверие к преобразованиям, то есть боязнь кардинальных перемен в обществе?

Здесь следует указать на отличие консерваторов от реакционеров, отмеченное еще в 1940 году Ч. Бердом. Реакционеры, писал он, это “те, кто предпочитает прошлое настоящему”, а консерваторы – “те, кто высказывает преданность вещам как они есть”⁶. Реакционеры готовы в корне отказаться от настоящего в пользу восстановления старых порядков. Консерваторы, наоборот, относятся к настоящему с уважением и оберегают его, стремясь при этом перенять все ценное из прошлого.

Кроме того, консерватизм и с конформизмом не имеет ничего общего. Конформизм – это “согласие, примирение, приспособление к общим настроениям, господствующим взглядам и мнениям; непротивление преобладающим тенденциям, несмотря на расхождение с ними, которое не высказывается”⁷. В отличие от конформизма, консерватизм не отвергает серьезных изменений в обществе, более того, ратует за них. Консерватизм лишь скептически подходит к революционным преобразованиям, чреватым, по убеждению многих консерваторов, ликвидацией всего ценного, что создано человечеством, и тоталитаризмом. Конформисты – это соглашатели, а консерваторы прагматики по убеждению.

Вообще говоря, все идеологические течения отличаются друг от друга тем, что по-своему рассматривают соотношение прошлого с настоящим и будущим. Так, либералы видят в будущем совершенное настоящее, в котором, как правило, нет прошлого. Левые идеологические течения готовы в настоящем легко расстаться с прошлым во имя светлого будущего и начать строить его прямо сегодня. Консерваторы, в свою очередь, не представляют ни настоящего, ни будущего без всего того, что накоплено людьми в прошлом. Будущее воспринимается ими “глазами настоящего, то есть реалистично и прагматично”⁸. Как отмечал Н. Бердяев, консерватизм “поддерживает связь времен <...> соединяет будущее с прошлым...”⁹.

Консерватизм выступает за сохранение не существующего общественного порядка (или, более того, возврат к прошлому), а традиционных правовых и морально-нравственных отношений, воплощенных в нации, религии, браке, семье и собственности и составляющих стержень общественной жизни любой страны, на который нанизывается форма общественного устройства. Консерватизм выступает против коренных изменений настоящего, но за его совершенствование с учетом исторического опыта. Резкие изменения, по мнению

⁶ Коцюбинский Д. А. Консерватизм в контексте политической истории Нового времени (к проблеме использования понятия) // «Философия и социально-политические ценности консерватизма в общественном сознании России (от истоков к современности)». Сборник статей. Выпуск 1. СПб., 2004, с. 74.

⁷ «Политология: Энциклопедический словарь». М., 1993, с. 144.

⁸ Енгоян А. П. Перспективы консерватизма в Армении // «Вестник Российско-Армянского университета», 2008, № 1, с. 42.

⁹ Бердяев Н. А. Философия неравенства. М., 2006, с. 285.

консерваторов, грозят нанести вред обществу, если не “апробированы” прошлым, не учитывают его уроков и направлены против его устоев и традиций.

В условиях недопонимания гражданами сути консервативных ценностей и при отсутствии единого уравновешенного подхода к ним переориентация постсоветских обществ в сторону консерватизма способна вызвать идейно-политические шатания. Особенно болезненно может воспринять ее многонациональное и многоконфессиональное российское общество с присущими ему различными морально-нравственными нормами и вековыми традициями.

Не секрет, что многие исследователи, чиновники и политические деятели по привычке могут втянуться в очередную кампанию и ринутся изучать консервативную идеологию, пропагандировать выученное с тем, чтобы показаться “еще большим католиком”, чем многие истинные патриоты. Однако, как и всякую другую идеологию, преподносить консерватизм только лишь заученными фразами, вырванными из общего контекста и логической структуры, невозможно и вредно. Как правило, такие шаги приводят к абсолютизации и догматизации идеологической системы, а, в конечном счете, и ее деградации.

В основе современного консерватизма лежит стремление к сохранению морально-нравственной чистоты общества и верности традициям. В таких условиях появляется реальная опасность “диссонанса” в общественном развитии. Ведь те нормы и идеалы, которые являются первостепенными для одних социумов, для других могут иметь второстепенное значение, и наоборот. Стремление к консолидации российского общества на подобных “частностях” грозит привести к принуждению путем “государствообразующих предписаний”.

Подобная картина может сложиться и в ходе евразийской интеграции. Как известно, новое объединение государств создается на базе экономической целесообразности и общности их интересов. В первую очередь подчеркивается очень понятная глашатаям свободного рынка материальная составляющая интеграции. Становящаяся приоритетной в России консервативная идейная система, безусловно, близка постсоветским обществам и в будущем Евразийском союзе также будет преобладать. Однако в противовес основной аргументации за интеграцию она выводит на первый план духовно-нравственные аспекты в общественном развитии, которые всегда существенно различались у народов, населяющих постсоветское пространство. Поэтому и здесь могут возникнуть определенные трудности, чреватые разладом нового союза.

Проблему консолидации постсоветских стран следовало бы решать исключительно на базе общности ценностных ориентаций, основы которых заложены благодаря совместному проживанию народов в границах единого некогда государства. История уже выдвинула такую систему. Это либерализм, понятный гражданам благодаря генетическому родству с социалистической теорией, которая десятилетиями внедрялась в сознание советских людей. Тем более что из его политических лозунгов многое переняли как социалисты, так и консерваторы. Как было отмечено выше, даже по мнению многих западных исследователей современный консерватизм считается истинным правопреем-

ником классического континентального либерализма. Поэтому принципиальной разницы в подходах относительно становления свободного рынка и общего политико-экономического пространства между этими течениями нет. Не следует забывать и то обстоятельство, что, несмотря на обострение международной ситуации в связи с украинскими событиями, идея создания большого евразийского пространства со свободной экономикой и совместимыми политическими институтами от Лиссабона до Владивостока с повестки дня мировой политики окончательно еще не снята. Консерватизм, преломленный в общественном сознании многих народов, несколько ограничивает ее реализацию, противопоставляя этой идее приоритет обычаев и традиций. В то время как континентально-национальный либерализм не только распространен в евразийских обществах, приобретая за последние двадцать лет значительное место в общественной жизни, но и не противоречит идее большого евразийского пространства.

Поэтому, на наш взгляд, активизация консервативного сегмента в духовной жизни как России, так и государств, стремящихся к созданию Евразийского союза, ни в коем случае не противопоставляет консерватизм либерализму. Она ставит целью оградить постсоветские общества лишь от крайней формы проявления либеральной идеи – либертариизма с его индивидуалистическим акцентом. Элементы консервативной идеологии призваны защитить эти общества от распространения чуждой ментальности, приостановить пагубную для них форсированную вестернизацию, направленную на ломку устоявшихся традиций и девальвацию сформировавшихся веками ценностей.

Вместе с тем постсоветские общества, в том числе и российское, не отказались от основополагающих принципов либерализма и по-прежнему стремятся к реализации его коллективистской, континентальной модели со своим видением демократии и преобразований. Именно это обстоятельство, как и настроения многих сторонников евразийской интеграции, делают коллективистскую версию либерализма базовой идейной основой для трансформаций в постсоветских обществах. Что касается консервативных принципов, то они призваны лишь сохранить самобытность населяющих пространство ЕАС народов. Кроме того, учитывая взаимозависимость и примерно одинаковый уровень развития их экономик, обеспечить сбалансированное развитие производственной сферы, что поможет им достойным образом включиться в мировые интеграционные процессы.

В целом консерватизм призван надеть своего рода смирительную рубашку на либеральные подходы. Ведь не секрет, что в ряде случаев именно абсолютизация индивида, превращение его в физиологическое существо и безоглядная защита его прихотей, а также диктат меньшинства по отношению к большинству рождает в обществе неприязненное восприятие гуманных по сути общечеловеческих ценностей. Происходит это, когда практические политические шаги даже в развитых странах предпринимаются без учета общественной психологии, а также сознания общества в целом.

Взгляд на либерализм сквозь призму консервативных ценностей позво-

ляет утвердить в обществе морально-нравственные принципы, отодвигая на второй план присущий современному либертаризму рациональный материализм. Консервативная трактовка либеральных принципов способна подвести под ментальность постсоветских обществ соответствующую ей идейную основу. Ведь к наиболее значимым причинам ориентации постсоветских обществ на консервативные ценности относятся следующие: верность традициям; уверенность в том, что справедливость важнее прав человека, а интересы государства и народа выше интересов отдельного гражданина; установка на сильное государство как фактор порядка и благополучия; возможность ограничивать права личности ради достижения общих целей и т. д. Ориентация на морально-нравственные нормы создает благодатную почву для проведения либерально-демократических преобразований с сохранением нациями своей идентичности. С другой стороны, либеральный подход толерантен к неунифицированным традициям и обычаям, что делает совместное проживание народов в одном государстве или союзе государств комфортным и безопасным.

Поэтому сегодня наиболее приемлемой для постсоветских обществ идейной системой можно считать именно консервативный либерализм, ставящий во главу угла либеральные ценности. Вместе с тем он подчеркивает значимость морально-нравственных, этических норм, рассматривает общественный прогресс как необходимый, но безболезненный, без потрясений и эксцессов процесс эволюционного развития, в основе которого лежат прагматизм и скепсис к радикальным преобразованиям. Консервативный либерализм способен объединить граждан вокруг традиционных ценностей и защитить постсоветские общества Евразийского союза.

Ключевые слова: *Евразийский союз, консервативные подходы, идеологическая система, либерализм, ценностные ориентации*

ԱՇՈՏ ԵՆԳՈՅԱՆ – ԵՎՐԱՍԻԱԿԱՆ միության երկրների գաղափարախոսական ուղենիշները – Ռուսաստանի հասարակական կյանքում ամրապնդվում է սոցիալական գործընթացների հանդեպ պահպանողական մոտեցումներն ակտիվացնելու գաղափարը: Ռուսաստանում գերակա դարձող պահպանողական գաղափարական համակարգը, անշուշտ, մոտ է հետխորհրդային հասարակություններին և ապագայում Եվրասիական միությունում նույնպես կգնահատվի որպես գերակշռող: Սակայն Եվրասիական ինտեգրման հիմնական փաստարկմանն ի հակակշիռ՝ այն առաջին պլան է մղում հասարակական զարգացման ոչ թե տնտեսական, այլ հոգևոր-բարոյական ասպեկտները, որոնք միշտ էապես տարբեր են եղել հետխորհրդային տարածքում բնակվող ժողովուրդների համար: Ուստի այսօր կարող են որոշակի դժվարություններ ծագել արդեն նոր միության գաղափարախոսական դաշտում: Հետխորհրդային հասարակությունների համար ամենաընդունելի գաղափարական համակարգ կարելի է համարել պահպանողական լիբերալիզմը, որը նախևառաջ լիբերալ արժեքային կողմնորոշում ունի: Միևնույն ժամանակ, այն ընդգծում է բարոյական նորմերի կարևորությունը, հանրային առաջընթացը դիտում է որպես մարդկային հանրակցության զարգացման անհրաժեշտ, բայց առանց ցնցումների գործընթաց:

Բանալի բառեր – *Եվրասիական միություն, պահպանողական մոտեցումներ,*

ASHOT ENGOYAN – *The Ideological Guidelines of Eurasian Union States.* – In Russian social life the idea of activating the conservative approaches towards the social processes is being strengthened. The conservative ideological system, which is becoming dominant in Russia, is definitely close to the post-Soviet societies and, in the future, it will be estimated as a dominant system in Eurasian Union as well. However, contrary to the main argument of the Eurasian integration, it is pushing forward not the economic but the spiritual-moral aspects of social development which have always been significantly different among the people who live in post-Soviet area. Therefore, there can appear some difficulties in the ideological field of already new union. The conservative liberalism could be considered as the most acceptable ideological system for the post-Soviet societies which, first and foremost, has a liberal orientation. At the same time it underlines the significance of moral norms, the social progress observes as a necessary process of human community development, but without shocks and excesses.

Key words: *Eurasian union, conservative approaches, ideological system, liberalism, value orientation*

БРИТАНСКАЯ ГЕОСТРАТЕГИЯ В ЗОНЕ ИНДИЙСКОГО ОКЕАНА НАКАНУНЕ ВТОРОЙ МИРОВОЙ ВОЙНЫ

ЮРИЙ МОСТЯЕВ

Обе мировые войны начались в Старом свете, который и оказался в некотором смысле их генератором. Однако велись они во имя интересов, затрагивающих не только Европу, но и другие районы мира – Азию, Африку, Ближний Восток и т. д. Конфликты наподобие сжатой массы концентрировались в Европе как в наиболее развитой части мира, где и происходил взрыв. Отсюда волны радиально расходились по всему свету¹. Вторая мировая война продлилась около шести лет, или 2194 дня, втянув в свою орбиту 61 страну.

XX век круто изменил геополитическую обстановку на планете. Впервые в истории человечества войны велись в мировом масштабе с использованием всех наличных средств и ресурсов. Война перестала быть занятием ограниченного числа профессиональных военных и превратилась в колоссальное предприятие, затрагивающее всё население не только конфликтующих государств, но и сочувствующих им, а жертвы мирного населения превысили количество погибших на фронте². Вторая мировая война послужила толчком к распаду колониальных империй, что наглядно видно на примере Индии.

Второй мировой войне, согласно каталогу библиотеки Конгресса США, посвящено более 20 тыс. публикаций, от романов и мемуаров многочисленных полководцев до многотомных исследований³. На первый взгляд кажется, что едва ли можно чем-то дополнить это море информации. Но это обманчивое впечатление.

В современном мире значительно повышается роль Азиатско-Тихоокеанского региона, где проживает около 2/3 населения Земли и находятся наиболее динамично развивающиеся страны. Одной из них является Индия, пытающаяся ныне играть на мировой арене роль великой державы. Корни этого во многом уходят в годы Второй мировой войны, которая способствовала росту самосознания индийского народа и точно показала значение страны.

Сегодня большинство индийцев относится к армии Британской Индии с не меньшим уважением, чем к выросшей из нее современной индийской армии. 67 лет назад страна избавилась от колониализма, но не отвергла старых боевых традиций, несмотря на ту противоречивую роль, которую индийская армия играла на различных этапах истории, в том числе и в годы Второй мировой войны.

¹ См. **Прозектор Д. М.** Мировые войны и судьбы человечества. Размышления. М., 1986, с. 30.

² См. **Горьков Ю. А., Сёмин Ю. Н.** О характере военно-оперативных планов СССР накануне Великой Отечественной войны. Новые архивные документы // «Война и политика 1939–1941». М., 2000, с. 280.

³ См. **Шнайдер Б.** Неизвестная война // «Вопросы истории», 1995, № 1, с. 104.

На Востоке и соответственно в Индии служба в армии издавна считалась наследственным делом. За исключением сравнительно небольшого числа английских офицеров здесь в годы британского правления служили предки тех, кто и сейчас несет службу в армии независимой Индии. Среди них – представители различных народов, каст, религий. Для Индии вообще характерно достаточно терпимое отношение к различным национальностям и вероисповеданиям. Во многом благодаря этой терпимости здесь равным уважением пользуются те, кто в годы мировой войны сражался по разные стороны фронта – одни в англо-индийской армии, другие в Национальной армии Субхаса Чандры Боса, воевавшей за японцев против англичан. Но каждый из них по-своему сражался за свободу своей страны и внес вклад в дело достижения Индией независимости.

Британская империя, несомненно, оказала настолько серьезное влияние на современный мир, что мы принимаем это почти как само собой разумеющееся. Либеральные капиталистические структуры, конечно, не смогли бы столь успешно укрепиться во многих странах с различными экономическими системами без экспансии Британии и распространения ее власти. Трудно поверить, что без британского правления институты парламентской демократии могли быть приняты большинством государств мира. Индия, крупнейшая демократическая страна, обязана британцам больше, чем это обычно признается. Ее элитарные школы, университеты, государственное управление, парламентаризм, пресса и, конечно, армия – всё это построено по британскому образцу.

Актуальность темы во многом определяется становлением новой мировой системы – однополярной, чего очень хотели бы США, или многополярной, что более отвечает интересам баланса сил. Индия стремится стать одним из полюсов многополярного мира. В этих условиях России крайне важно определить перспективы отношений с этой страной. Анализ участия Индии во Второй мировой войне помогает понять, может или нет Индия стать нашим союзником. Отметим, что некоторые российские геополитики отказывают индийцам в геополитической динамике и «воинственности»⁴.

Однако, на наш взгляд, предпочтительнее выглядит другой подход. Не исключено, что в будущем речь пойдет о новой биполярности: Запад во главе с США на одной стороне, Россия в союзе с Индией, арабским Востоком и, возможно, Китаем – на другой. Причём новое противостояние, скорее всего, ознаменуется более жёстким идейным водоразделом между Западом и Востоком, а не двумя западными идеологиями – социализмом и либерализмом⁵.

Одной из самых больших проблем явилось противоречие между желанием Великобритании и США как можно полнее использовать огромные материальные и людские ресурсы Индии и стремлением британского правительства сохранить Индию в составе своей колониальной империи. Несомненно, участие индийцев в мировой войне, приобретенный благодаря этому полити-

⁴ См., например: **Дугин А.** Основы геополитики. Геополитическое будущее России. М., 1997, с. 229–230.

⁵ См. **Панарин А. С.** Глобальное политическое прогнозирование. М., 2000, с. 69.

ческий и военный опыт и определенное изменение в экономическом положении оказали серьезное воздействие на процесс обретения независимости. Многие ветераны стали основой вооруженных сил самостоятельной Индии, хотя влияние Англии в этой, как и в других областях, продолжало сказываться еще долго.

В 1930-е годы на формирование военной доктрины Великобритании всё большее влияние оказывало не только стремление правящих кругов к упрочению и расширению своего влияния, но и международная обстановка, в частности агрессивный курс Германии и Японии, стремившихся к ревизии итогов Первой мировой войны и мировому господству.

Военная доктрина Великобритании складывалась во многом под влиянием истории и географического положения этой колониальной державы. Она традиционно строила свою политику на балансе сил, сколачивая коалиции более слабых государств против более сильных. У нее была развитая промышленность, но в случае глобального конфликта ей не хватило бы ресурсов. Отсюда – стремление к господству на море. По мнению М. Ю. Френкеля (Институт Африки РАН), лидеры страны связывали свои планы скорее с флотом, авиацией и бронетанковыми войсками, чем сухопутной армией. Великобритания неизменно стремилась избегать больших потерь в живой силе. Ее военных отличал большой опыт взаимодействия с политиками. Сформулированные военно-политическим руководством и положенные в основу имперской стратегии принципы ведения войны сводились к следующему:

– владения Великобритании разбросаны по всем частям света, поэтому море является основным средством связи между ними и метрополией и важнейшим театром военных действий в случае конфликта с другими государствами. Основные способы достижения победы – господство на море, операции на морских коммуникациях и морская блокада противника;

– Великобритания находится в непосредственной близости от европейских государств, с которыми традиционно поддерживает политические и экономические связи. Лишь они могут грозить ее безопасности. Поэтому ей следует проводить политику «равновесия сил», т. е. максимально использовать в своих интересах противоречия между другими странами, в случае же конфликта создавать коалиции, возлагая при этом основную тяжесть вооруженной борьбы на армии союзников;

– огромная протяженность сухопутных границ империи и постоянная угроза национально-освободительной борьбы требуют значительных сухопутных сил для поддержания в колониях британского господства⁶.

Таким образом, основными задачами имперской стратегии являлись безопасность морских коммуникаций, недопущение перехода их в руки противника; защита Британских островов от воздушного нападения; оборона сухопутных границ империи; подавление освободительного движения в колониях; выполнение союзнических и договорных обязательств в Европе.

Политическое содержание английской военной доктрины определяло и

⁶ См. «История второй мировой войны 1939–1945 гг.» в 12 томах. Том 2. Накануне войны. М., 1974, с. 389–390.

ее военно-техническую сторону. В обеспечении задач имперской стратегии участвовали все страны, составлявшие империю. Формы и степень этого участия определялись следующими моментами. В мирное время империя не имела единой армии, флота и военно-воздушных сил. Английские гарнизоны находились лишь в наиболее важных ее стратегических пунктах, остальные территории содержали собственные вооруженные силы, способные подавить внешнее вторжение или внутренние волнения до прибытия подкреплений из метрополии или соседних британских владений. В большой же войне должны были участвовать вооруженные силы всех колоний и доминионов. Для превращения этих разрозненных многонациональных сил в единую структуру, требовались единые организации и система военного обучения. После Первой мировой войны основой вооруженных сил Великобритании продолжал оставаться военно-морской флот, и его строительству уделялось наибольшее внимание. Он по-прежнему был сильнейшим в мире по составу и выучке (хотя его гигантскими шагами догонял флот США) и охранял морские пути сообщения, от которых зависело само существование страны. Под защитой военного флота рос торговый флот, успешно развивалась торговля и крепла империя.

Великобритания готовилась прежде всего к войне на море. Ее исход зависел в основном от наличия крупных надводных кораблей. Значение подводных лодок и морской авиации недооценивалось. Военно-морские силы предназначались, помимо борьбы с флотом противника и обеспечения морских коммуникаций, для переброски сухопутных войск.

В Индии усиленно укреплялись северо-западные провинции, имевшие огромное значение в силу границы с Афганистаном и близостью к России⁷. Только в конце 30-х годов английское командование изменит мнение об основных угрозах и потенциальном противнике. Будут предприняты серьезные усилия, но во многом уже запоздавшие.

К началу войны Англия продолжала придерживаться традиционной стратегии «непрямых действий», именуемой также «стратегией косвенного сближения». По английским понятиям этот термин обозначал нарушение «психологического и физического равновесия» противника, ослабление его еще до того, как вступят в действие вооруженные силы. Средства и методы могли быть различными⁸.

Основной разновидностью стратегии «непрямого действия» считается ведение войны до определенного времени армиями своих союзников. Участник проекта Гарвардского университета «Меняющаяся ситуация безопасности и американские национальные интересы», редактор немецкой газеты «Зюддойче цайтунг» Д. Джоффи так охарактеризовал политику Лондона: «Основное содержание британской балансирующей стратегии может быть выражено тремя словами: антигегемонизм без (союзных) обязательств... В плане используемых средств национальная стратегия Великобритании опиралась на

⁷ См. **Мио-Кай**. Военные приготовления Англии в Индии // «Международная жизнь», 1927, № 9, с. 42–48.

⁸ См. **Багреев А. Д.** Военное искусство капиталистических государств (1939–1945). М., 1960, с. 199.

четыре принципа: предпочтительная опора на морскую мощь, а не на наземные силы; упор на гибкие внешнеполитические комбинации, а не на постоянные союзы; балансирование, а не покорение; выборочная интервенция вместо прочного завязывания. Эта стратегия была чрезвычайно успешна, обеспечивая Великобритании единоличный глобальный статус в течение двух веков. До Первой мировой войны, когда Англия потеряла почти целое поколение в окопах, эта стратегия была также чрезвычайно экономна⁹.

В рамках этой стратегии, исходя из своих колониальных интересов, английское руководство основное внимание уделяло строительству военно-морского флота. Сухопутные силы были сравнительно небольшими (надежда возлагалась на армии союзников) и предназначались, в первую очередь, для использования в качестве экспедиционных сил с полицейскими функциями в колониях. К началу войны британские сухопутные войска состояли из 18 дивизий и отдельных частей общей численностью 832 тыс. человек (из них 480 тыс. находились в метрополии, остальные – в колониях). Численность военно-воздушных сил превышала 2000 самолетов (1460 в метрополии, 350 в колониях, 200 самолетов морской авиации). Военно-морской флот насчитывал 12 линкоров, 15 тяжелых крейсеров, 49 легких крейсеров, 184 эсминца и миноносца, 58 подводных лодок¹⁰.

Английский военный устав 1937 г. провозглашал, что «море является главным путем, связывающим широко раскрытые части Британской империи, которая имеет свои интересы во всех частях земного шара; поэтому контроль над морскими путями во время войны является ее первейшей задачей»¹¹.

Так строилась и военная стратегия в отношении Индии. Защита ее морских границ осуществлялась имперским военно-морским флотом. Накануне войны в индийских водах (база Тринкомали на острове Цейлон) базировалась лишь одна бригада крейсеров (2 легких и 1 тяжелый) и 14 сторожевых кораблей. Во время войны в связи с угрозой со стороны японских кораблей и воздушных сил число британских кораблей, находившихся в индийских водах, значительно возросло. Собственно индийские военно-морские силы состояли из нескольких мелких кораблей¹².

С вступлением Англии в войну возросла роль имперской консолидации. Ход военных действий поставил под удар не только метрополию и отдельные колонии, но и всю империю. Державы «оси», несомненно, рассчитывали на рост центробежных устремлений, на распад Британской империи.

Организация сил и ресурсов в интересах войны была сопряжена, как видно из положения в Индии, с решением ряда крайне важных проблем. Известно, что вопрос о статусе и роли этой колонии в Британской империи долгое время оставался открытым, давая пищу для нескончаемой полемики как в

⁹ Цит. по: **Сорокин К. Э.** Геополитика современности и геостратегия России. М., 1996, с. 56.

¹⁰ См. **Багров В. Н., Марков Н. И.** Военно-морское искусство капиталистических государств во Второй мировой войне 1939–1945 гг. М., 1960, с. 6.

¹¹ **Багреев А. Д.** Военное искусство капиталистических государств (1939–1945 гг.). М., 1960, с. 199.

¹² См. «Британская империя». М., 1943, с. 231.

Англии, так и, с начала XIX века, в самой Индии. Поскольку Индия в силу своей «массы и веса» не могла быть заурядной колонией, а была своего рода империей, подпавшей под иноземное господство, ей не удавалось отыскать место ни в общих рамках «большой» Великобритании, ни в структуре колониальных зависимостей. Швейцарский историк Герберт Люти писал: «Либо английское правление в Индии представляло собой промежуточный исторический акцидент, как полагал Маколей и большинство либеральных политиков, либо Индии предназначалось стать непосредственным местопребыванием и краеугольным камнем имперской власти, каким она представлялась в экзотическом видении Дизраэли»¹³.

Британская империя, разбросанная по всем частям света, охватывала районы, изобиловавшие разнообразными природными богатствами. Но формы, методы и масштабы взаимоотношений метрополии с отдельными колониями различались. Так, несмотря на то, что население империи накануне Второй мировой войны составляло 535 млн. человек¹⁴, Англия испытывала острый недостаток в людских ресурсах. Дело в том, что к активному участию в войне привлекалось только метрополия и доминионы, колонии же с их многомиллионным населением участвовали в ней лишь сообразно их возможностям.

Это хорошо иллюстрируется примером Индии, положение которой по признанию самих официальных кругов Великобритании было особенным: «Мы сможем разделить Британское содружество и империю на три части. Первая часть состоит из Соединенного королевства, Канады, Австралии, Новой Зеландии, Южной Африки и Ирландии; вторая – Индия и третья – всё остальное. Но членство в этих классах не фиксировано. Индия передвинется в первый класс после войны»¹⁵.

Если согласиться с тем, что значение той или иной страны в войне определяется тремя основными факторами: 1) территорией; 2) характером, менталитетом и численностью населения; 3) подготовкой и вооружением армии¹⁶, – то можно констатировать, что значение Индии во Второй мировой войне во многом определялось географическим фактором. Вся территория Индии составляла 1 576 000 квадратных миль, ее треть занимали княжества в количестве 562¹⁷ с общим населением 93 189 000 человек. Имея в виду географический фактор Индии, Дж. Неру подчеркивал: «Всё, что происходит в Южной Азии, Юго-Восточной Азии, в районе Персидского залива, в Западной Азии и районе Индийского океана, затрагивает Индию, и она не может не учитывать этого. Посмотрите на карту. Обратитесь к любому вопросу, касающемуся Ближнего Востока, и вы увидите, что он неизбежно затрагивает Индию. Любой вопрос, касающийся Юго-Восточной Азии, не может рассматриваться без Индии. То же самое относится и к Дальнему Востоку. Ближний Восток непо-

¹³ Люти Г. Замечания по поводу одной из проблем британско-индийской истории к вопросу об «имперском партнерстве» в годы Первой мировой войны и после ее окончания. М., 1970, с. 1.

¹⁴ См. Эвентов Л. Я. Военная экономика Англии. М., 1946, с. 9.

¹⁵ "The British Commonwealth and Empire". N. Y., 1944, p. 5.

¹⁶ См. Sarkar J. Military History of India. Calcutta, 1960, с. 1-2.

¹⁷ См. Menon K. V. K. Why Must India Fight? L., 1940, с. 5.

средственно не связан с Юго-Восточной Азией, но оба они связаны с Индией. Если даже вам кажется, что вы имеете дело только с одной Индией, вы неизбежно затрагиваете интересы других регионов»¹⁸.

Важную роль играли и основные коммуникации бассейна Индийского океана:

- северный трансиндийский путь, пролежавший между Красным морем и портами Среднего Востока, Индии и Юго-Восточной Азии;
- центральный трансиндийский путь, связывавший порты Южной Африки и Юго-Восточной Азии;
- южный трансиндийский путь, пролежавший между портами Южной Африки и портами Австралии и Новой Зеландии;
- западный индийский путь, связывавший выход из Красного моря с портами Восточной и Южной Африки;
- восточный индийский путь, соединявший порты Юго-Восточной Азии с Австралией и Новой Зеландией¹⁹.

Поэтому Индийский океан представлял исключительный интерес для Великобритании, т. к. многие ее владения и страны, зависимые от нее, омывались его водами. Индийский океан являлся как бы Средиземным морем Британской империи. У входа в Красное море, на небольшом острове, располагалась одна из важнейших ее военно-морских баз – Аден. Британская Индия на западе охранялась военно-морской базой Бомбея, а южная часть – крепостью Тринкомали на острове Цейлон. В Бирме находилась ещё одна база – Рангун. В Малаккском проливе – Сингапур. Сердцевиной обороны столь важного для Британии Индийского океана являлась, конечно, Индия.

Индия была важнейшим участком огромной дуги, образуемой берегами Индийского океана от Австралии до Южной Африки. По мнению английского генералитета для обороны этой дуги необходимо было обеспечить контроль или, по крайней мере, не допустить контроля со стороны потенциального противника над любым буферным государством, лежавшим вблизи этой дуги²⁰. К тому же через этот район проходили важнейшие воздушные коммуникации Британского Содружества.

Крайне важную роль играли людские резервы страны. К 1941 г. в ней проживало 388 998 000 человек, 1/5 всего населения мира²¹.

Людские резервы собственно Великобритании (47 млн. человек) были значительно меньшими, чем в Германии, насчитывавшей 79 млн. жителей²². Правда, защита Великобритании облегчалась ее островным положением и мощным военно-морским флотом. Кроме того, густо развитая сеть железных и шоссейных дорог давала возможность быстро сосредотачивать в угрожае-

¹⁸ Цит. по: Датт В. Внешняя политика Индии. М., 1988, с. 31–32.

¹⁹ См. «Блокада и контрблокада. Борьба на океанско-морских сообщениях во Второй мировой войне». М., 1967, с. 74.

²⁰ См. Кингстон-Макклори Э. Дж. Руководство войной. Анализ роли политического руководства и высшего военного командования. М., 1957, с. 230.

²¹ См. «The British Commonwealth and Empire». N. Y., 1944, с. 24.

²² См. Потемкин М. П. Британская империя во Второй мировой войне. Экономико-географический очерк. Киров, 1942, с. 10–11.

мых местах необходимые силы, снимая их с безопасных участков. Англия к весне 1942 г. поставила под ружье, включая даже местную охрану, лишь 8,5% своего населения, в то время как в Германии к этому моменту было мобилизовано свыше 20% населения. Великобритания в обеих мировых войнах смогла при крайнем напряжении мобилизовать в вооруженные силы 21,6–23,3% мужского населения. В современных войнах такой высокий процент является предельным.

Для сравнения. В Индии в период Второй мировой войны при примерной численности мужского населения в 201 млн. человек было мобилизовано 2,5 млн., примерно 1,2%²³. Ясно, что огромные людские ресурсы были задействованы лишь в значительно меньшей степени, чем в других странах.

Во Второй мировой войне Индия столкнулась с совершенно иными проблемами по сравнению с теми, которые стояли перед ней во время Первой мировой. На первое место встали вопросы механизации армии и подготовки для нее квалифицированных кадров. В предыдущей войне основная угроза самой Индии исходила только с запада, теперь к этой угрозе прибавилась и возможная опасность с востока. В предыдущей войне защита морского побережья почти полностью лежала на Британском флоте, теперь ей самой предстояло сделать значительные шаги в данном направлении²⁴.

Согласно стратегическому плану Великобритании, разработанному генералом Лиделлом Гартом, индийские вооруженные силы выступали в качестве ее главного стратегического резерва²⁵. В условиях начавшейся войны стратегическое и геополитическое значение Индии и индийской армии для Британской империи еще более возросло.

Ключевые слова: *Индия, Великобритания, Вторая мировая война, Индийский океан, военная доктрина*

ՅՈՒՐԻ ՍՈՍՏՅԱԵՎ – Բրիտանական աշխարհառազմավարությունը Յնդկական օվկիանոսի շրջանում երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեին – Հոդվածում ներկայացվում է երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեին բրիտանական կայսերական պաշտպանական համակարգում Յնդկաստանի դերը: Բրիտանական կայսրության համար Յնդկական օվկիանոսը նույն նշանակությունն ուներ, ինչ Միջերկրական ծովը, որովհետև Յնդկական օվկիանոսի պաշտպանության հարցում Յնդկաստանը առանցքային դեր ուներ: Մեծ Բրիտանիայի ռազմական հայեցակարգը հիմնականում ձևավորվել է աշխարհագրական դիրքի և այդ գաղութային կայսրության բազմադարյա զարգացման գործընթացի հիման վրա:

Կայսերական ռազմավարության հիմնական նպատակներն էին՝ ծովային հաղորդակցման անվտանգության ապահովումը, ցամաքային սահմանների պաշտպանությունը օդային և ծովային հարձակումներից, որին պետք է մասնակցեին այդ կայսրության կազմում գտնվող բոլոր երկրները: Այս ամենից ելնելով էր կա-

²³ См. **Тягуненко В. Л.** Войны и колонии. М., 1957, с. 113.

²⁴ См. **Moreland W. H., Chatterjee A. Ch.** A Short History of India From Earliest Times to 1947. L., 1953, с. 503.

²⁵ См. **Трыканова С. А.** Взгляды У. Черчилля на индийскую проблему в годы Второй мировой войны // «Политика и экономика в прошлом и настоящем». М.–Рязань, 1998, с. 41.

ռուցվում Անգլիայի ռազմավարությունը Յնդկաստանի նկատմամբ: Յնդկաստանի ծովային սահմանների պաշտպանությունը իրականացնում էր համակայսերական ռազմական նավատորմը: Պատերազմի ժամանակ Յնդկաստանի և հնդկական բանակի ռազմավարական ու աշխարհաքաղաքական նշանակությունը բրիտանական կայսրության համար էլ ավելի մեծացավ:

Բանալի բառեր – *Յնդկաստան, Մեծ Բրիտանիա, Երկրորդ համաշխարհային պատերազմ, Յնդկական օվկիանոս, ռազմական հայեցակարգ*

YURI MOSTYAEV – *British Geostrategy in the Region of the Indian Ocean in the Wake of the Second World War.* – This article has a deal with the role of India in the system of defence of the British Empire on the eve of the Second World War. The Indian Ocean was Mediterranean Sea of the British Empire and played an important role in the defence capability of Britain. India was the heart of the English military strategy at the area of the Indian Ocean. The military doctrine of Great Britain has formed basically under geographical situation and centuries-old process of development of this colonial Power.

The main tasks of the empire strategy were safeguarding of security sea communications, inadmissibility of their passing to the enemy; the defence Great Britain, the main arsenal, from the air attacks; the defence of land border of the Empire. All the countries, the members of the Empire, had to take part in these tasks. All this determined the military strategy of Britain to India. The defence of sea borders of India was realized by the Navy of common empire. During the war the strategic and geopolitics importance of India for the British Empire strongly increased.

Key words: *India, Great Britain, the Second World War, Indian Ocean, military doctrine*

**1254 թ. ԿՆՔՎԱԾ ՀԱՅ-ՄՈՆՂՈՒԿԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ**

ԱՐԱՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կիլիկիայի հայկական թագավորության պատմության մեջ հատուկ ուշադրության են արժանի արտաքին քաղաքականության և դիվանագիտության ուսումնասիրությունը, մասնավորապես դիվանագիտական այն պայմանագրերը, որոնք կնքել են Կիլիկիայի հայոց արքաները իրենց գահակալության ընթացքում:

Այսպես, անդրադառնալով Կիլիկիայի հայկական թագավորության արտաքին քաղաքականությանը՝ պետք է նշել, որ 13-րդ դարում հայկական թագավորության քաղաքական կյանքում չափազանց կարևոր նշանակություն ունեին Կիլիկիայի հայկական թագավորության և մոնղոլների հարաբերությունները: Կիլիկյան Հայաստանի և մոնղոլական կայսրության միջև սկսված դիվանագիտական բանակցությունների նախնական շրջանը սերտորեն առնչվում է Չմանկատուկի նշանավոր ճակատամարտին, որը տեղի ունեցավ 1243 թ.¹: Այս ճակատամարտում Իկոնիայի սուլթանության պարտությամբ քաղաքականապես նոր իրավիճակ ստեղծվեց փոքրասիական տարածաշրջանում:

Հայտնի է, որ մոնղոլական պետությունը, սկսելով իր մեծածավալ նվաճումները, գրավեց մի շարք երկրներ և 13-րդ դարի 40-ական թվականներին մոտեցավ Կիլիկիայի հայկական թագավորության սահմաններին: Անշուշտ, վերը նշված ժամանակաշրջանում հայոց թագավորության վերնախավը պետք է կարողանար քաղաքականապես ճիշտ կողմնորոշվել, քանի որ շրջապատված էր թշնամի մահմեդական պետություններով: Մոնղոլների հետ հարաբերություններ հաստատելու հարցում մեծ դեր խաղացին Կիլիկյան Հայաստանի քաղաքական գործիչները, որոնք քաջատեսությամբ էին մոնղոլների հետ Մեծ Հայքի որոշ իշխանների համագործակցությանը: Ուստի ԺԳ դարի 40-ական թվականներին Կիլիկիայի հայոց արքա Հեթում Ա-ն և նրա համախոհները որոշեցին զինական համագործակցության մեջ մտնել մոնղոլների հետ և համապատասխան առաջարկով դիմեցին նոր նվաճողներին²: Միջնադարյան պատմիչներից Կիրակոս Գանձա-

¹ Տե՛ս **Կ. Մուքաֆյան**, Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, Եր., 2001, էջ 416, **Գ. Միքայելյան**, Կիլիկիայի հայկական պետության պատմություն, Եր., 2007, էջ 316, «The Cambridge history of Iran», Cambridge, 1968, vol. V, էջ 338, «Encyclopaedia of Islam», vol. II, London, 1965, էջ 36:

² Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, Պատմութիւն Հայոց, Եր., 1961, էջ 367, **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 229, **Գրիգոր Ակնեցի**, Պատմութիւն վասն ազգին նետողաց, Յերուսաղէմ, 1970, էջ 22, **Հեթում պատմիչ**, Պատմութիւն թաթարաց, Վենետիկ, 1842, էջ 43, «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1842, էջ 148:

կեցին հետևյալ տեղեկություններն է մեզ հաղորդում. «Մեծահաւատ և քրիստոսասէր արքայն հայոց Յեթում, որ ի կողմանս Կիլիկեցոց, նստէր ի քաղաքն Սիս: Նա յառաջագոյն առաքեաց զեղբայր իւր Սմբատ, որ զօրավարն էր նորին, առ ղան Գիւղզ ընծայիւք և պատարագօք, և դարձավ ի նմանէ պատուով և հրովարտակօք ընդունելութեան»³: Սկզբնական շրջանուն հայկական պատմիրակությունը, որը գլխավորում էր Սմբատ Սպարապետը, հանդիպեց մոնղոլ ղեկավարությանը: Այս բանակցություններին աջակցում էր հայ իշխան Յասան Չալալը՝ Խաչենի տերը: Եվ ահա բանակցությունների ընթացքում որոշվեց, որ Յեթում արքան պետք է անձամբ մեկնի Կարակորում և հանդիպի Մանգու մեծ խանին: Հանդիպումը տեղի ունեցավ 1254 թ., և կնքվեց մի պայմանագիր, որը հաճախ է քննության մյուս դարձել պատմագրության մեջ: Այս մասին մեզ որոշ տեղեկություններ են հաղորդում միջնադարյան պատմիչները: Սմբատ Սպարապետը մասնավորապես հայտնում է. «Եւ յայնժամ թագաւորն առեալ զամենայն ցանկալի տեսողաց ընծայսն, զնաց առ խանն Մանգոյ և մատոյց նմա, և խանն ուրախութեամբ ընկալաւ զթագաւորն Յեթում, և զինչ և խնդրեաց ի նմանէ շնորհեաց նմա, և եղ ի սպասաւորաց իւրոյ անդ թագաւորին զալ յաշխարհ իւր Կիլիկիա...»⁴: Ինչպես նկատում ենք, Սմբատ Սպարապետը շատ մանրամասներ չի հաղորդում Յեթում արքայի և Մանգու մեծ խանի հանդիպման մասին: Նա պարզապես բավարարվում է նշելով, որ Մանգու խանը համաձայնություն տվեց Յեթում արքայի առաջարկներին: Ցավոք, պատմիչը հստակ չի նշում, թե որոնք էին պայմանագրի կետերը՝ հետազոտողներին ենթադրությունների մղելով: Այս պայմանագրի մասին խոսում է նաև Գրիգոր պատմիչը, ըստ որի՝ Յեթում արքան մեծարվեց խանի կողմից, և որ արքայի բոլոր խնդրանքները բավարարվեցին. «Կամօքն Աստուծոյ մեծարեցաւ ի ղանէն: Եւ արարեալ ղանն մեծ պատիւ և հարկիս թագաւորին հայոց և զամենայն բանն նորա հոգաց ըստ կամաց նորա, և դարձոյց մեծ ուրախութեամբ յաշխարհն իւր»⁵: Թեև Գրիգոր պատմիչը նույնպես նշում է, որ Յեթում արքայի առաջարկներն ընդունվել են, սակայն ինչպես Սմբատը, այնպես էլ ինքը, չի նշում, թե որոնք էին պայմանագրի բովանդակային դրույթները, և ընդհանրապես Կիլիկիայի հայոց պետությունն այս պայմանագրի կնքումից հետո ինչպիսի կարգավիճակ էր ձեռք բերում: Այս պայմանագրին անդրադարձել է նաև Հովհաննես Դարդեւը, որը, սակայն, նոր տեղեկություններ չի հաղորդում⁶: Միջնադարյան մյուս պատմիչներից միայն Յեթում պատմիչն է իր աշխատանքում կարևոր տեղեկություններ հաղորդում հայ-մոնղոլական պայմանագրի բովանդակության մասին: Այսպես, խոսելով հայոց արքայի և Մանգու մեծ խանի մասին նա նշում է. «Յայնժամ ինքնակալն Թաթարաց խորհուրդ արարեալ ընդ իշխանս և ընդ մեծամեծս իւր՝ ետ պատասխանի արքային Հայոց. Չաղաչանս քո յանձն առնունք. զիս տաց մկրտել, ընկալայց զքրիստոսական հաւատս, և խնամկալայց՝ զի ընկալցին ամենայն հպատակք իմ. բայց առանց ամենայն

³ Կիրակոս Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 350:

⁴ Սմբատ Սպարապետ, նշվ. աշխ., էջ 230:

⁵ Գրիգոր Ակնեցի, նշվ. աշխ., էջ 314:

⁶ Տես Հովհաննես Դարդեւ, Ժամանակագրութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1891, էջ 17:

բռնութեան: Ըստ երկրորդին՝ խաղաղութիւն լիցի ի մէջ մեր և ձեր մշտնջենաւոր՝ վնասողական և պաշտպանողական: Նույնպէս կամիմք, զի ամենայն եկեղեցիք քրիստոնէից՝ եկեղեցականք և աշխարհականք վայելեսցեն ի շնորհս ազատութե, և ոչ ոք իշխեսցէ նեղել զՅայս: Ձսք երկիրն եթէ կարասցուիք՝ անձամբ յարգեսցուք, այլ քանզի մեք յայլ...Թաթարք զամենայն ձեռնտութիւն արասցեն Յայոց. և զաշխարհս որ սեփական են Յայոց, կամիմք զի անյապաղ տացին նոցա անդրէն. և ևս հրամայենք զի, ամենայնիւ ամրոցք և երկիրն զորս առաք, տացին արքային Յայոց ի պաշտպանութիւն Յայաստան աշխարհի առանձին շնորհիւ»⁷:

Այսպիսով, եթէ վստահենք Յեթում պատմիչի վկայություններին, ապա Մանգու խանը ցանկություն է հայտնել մկրտվել: Այս տեղեկությունը մյուս պատմիչների աշխատություններում բացակայում է, ինչն էլ կասկածելի է դարձնում այդ տեղեկության հավաստիությունը: Խնդիրն այն է, որ Յեթում պատմիչը մոնղոլների ջերմ պաշտպանն էր, և հնարավոր է, որ գերագնահատել է մոնղոլներին: Ըստ այդմ՝ Ժամանակակից հետազոտողներից Գ. Միքայելյանը, չվստահելով այս տեղեկությանը⁸, գտնում է, որ եթէ նման բան լինէր, ապա այդ մասին Ռուբրուքը կհիմնար, քանի որ Կիլիկիայից վերադառնալիս նա Կոստանդինից տեղեկացել էր մոնղոլների հետ հայոց արքայի դիվանագիտական բանակցությունների մասին, և այդպիսի կարևոր փաստը, ինչպիսին մեծ խանի մկրտվելու ցանկությունն էր, Կոստանդինը կհաղորդէր Ռուբրուքին⁹: Մկրտության մասին տեղեկությունը կասկածի տակ է առնում նաև Կ. Մութաֆյանը¹⁰: Պայմանագրում խոսվում էր նաև երկու պետությունների միջև խաղաղություն հաստատելու մասին, որը շատ կարևոր էր: Բացի այդ, եկեղեցին, հոգևորականությունը և աշխարհականները պետք է ազատ լինեին, և ոչ ոք չպետք է նեղեր Յայաստան աշխարհը: Պայմանագրի այս կետը ցույց է տալիս, որ Կիլիկիայի հայկական թագավորությունը ապահովելու էր իր ինքնուրույնությունը: Հիշարժան է նաև այն միտքը, համաձայն որի՝ Յուլավուն պետք է գրավեր Սուրբ երկիրը և այն վերադարձներ քրիստոնյաներին: Այստեղ Յեթում պատմիչը փորձում է ցույց տալ, որ հայկական պատվիրակության խնդրանքով մոնղոլները որոշել էին գրավել Սուրբ երկիրը, սակայն այն վստահություն չի ներշնչում, քանի որ մոնղոլ հրամանատար Յուլավուն վաղուց էր ծրագրել գրավել Յալեպը, Երուսաղեմը և սիրիական նավահանգիստները՝ Առաջավոր Ասիայի հարուստ երկրների առևտրական ճանապարհների վրա մոնղոլների տիրապետությունը հաստատելու նպատակով: Կարծում ենք, որ հայկական պատվիրակության նպատակը պարզապես զուգահեռել է մոնղոլական կայսրության ծրագրերին, իսկ Յեթում պատմիչն էլ փորձել է օգտվել այդ իրողությունից: Այդ մասին իր տեսակետն է հայտնում նաև Աշոտ Յովհաննիսյանը, ըստ որի՝ Յեթում պատմիչի այս հավաստիացումների պատմական արժեքը խիստ կասկածելի է, իսկ դրանց հետապնդած քաղաքական միտումը՝ խիստ ակնբախ¹¹: Շարունակելով իր

⁷ Յեթում պատմիչ, նշվ. աշխ., էջ 43-44:

⁸ Տե՛ս Գ. Միքայելյան, նշվ. աշխ., էջ 318:

⁹ Տե՛ս նույն տեղը:

¹⁰ Տե՛ս Կ. Մութաֆյան, նշվ. աշխ., էջ 423:

¹¹ Տե՛ս Ա. Յովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. Ա, եր., 1957, էջ 175:

խոսքը՝ հեղինակը նշում է, որ այն գրվել է պապական Յոհաննի պատվերով: Ուստի այս ամենը անպետք է որպես պատմություն, պիտանի՝ որպես լեգենդ¹²: Դժվար է համաձայնել հեղինակի այս պնդմանը: Թեև հնարավոր է Յեթում պատմիչի երկում որոշ տեղեկություններ չափազանցված են, սակայն նրա աշխատությունը ունի պատմագիտական կարևոր նշանակություն: Այդ է վկայում այն փաստը, որ Յեթում պատմիչը վստահելի աղբյուր է համարվում ոչ միայն հայագիտության, այլ նաև համաշխարհային պատմագիտության կողմից: Փաստորեն, այս խոստումով Մանգու խանը ցույց էր տալիս իր հարգանքը և հավատարմությունը քրիստոնյա ժողովուրդներին և մասնավորապես՝ հայերին: Անշուշտ, Կիլիկիայի հայկական թագավորությանը շատ ձեռնտու էր նաև այն կետը, որ Յայաստանից զավթված ամրոցները և տարածքները պետք է վերադարձվեին հայերին:

Այսպիսով պետք է նշել, որ 1254 թ. հայ-մոնղոլական պայմանագիրը չափազանց շահեկան էր հայերի համար: Խնդիրն այն է, որ մոնղոլները դեպի Արևմուտք կատարելիք արշավանքների ժամանակ պետք է ունենային իրենց դաշնակիցները, որոնք կարող էին շատ հարցերում օգնել: Եվ հետագա տասնամյակների փորձը ցույց տվեց, որ մոնղոլական մի շարք արշավանքների ժամանակ հայկական թագավորությունը և՛ զինական մասնակցություն էր ունենում, և՛ իր պետության տարածքն էր տրամադրում մոնղոլներին, և՛ հագուստ ու սննդամթերք մատակարարում նրանց: Իսկ երբ սիրիական արշավանքների ժամանակ՝ 1259-1260, 1280-1281, 1299-1303 թթ. դաշնակիցների զորքերը պարտվելով նահանջում էին, փաստորեն տուժում էր միայն Կիլիկյան Յայաստանը, քանի որ մեն-մենակ էր մնում հարևան և մահմեդական թշնամիների դեմ:

Այժմ տեսնենք, թե ինչպիսի տեսակետներ կան ժամանակակից գիտական գրականության մեջ:

Պատմագրության մեջ հայ-մոնղոլական պայմանագրի մասին քննարկումները սկսվել են դեռևս 18-րդ դարի վերջերից: Վերոնշյալ խնդրի մասին առաջին անգամ խոսել է Միքայել Չամչյանցը¹³: Յեղինակը, օգտվելով մի շարք կարևոր սկզբնաղբյուրներից, կարողացել է բավականին մանրամասնորեն ներկայացնել Յեթում արքայի ուղևորությունը Մոնղոլիա, նրա հանդիպումը Մանգու մեծ խանի հետ, ինչպես նաև նրանց միջև կնքված հայ-մոնղոլական պայմանագիրը, սակայն, գիտակցելով խնդրի բարդությունը, զերծ է մնացել գնահատական տալուց: 19-րդ դարի վերջերին Ղևոնդ Ալիշանը հրատարակեց իր «Սիսուան» աշխատությունը, ու թեև այստեղ կան բանաթիվ կարևոր խնդիրների մեկնաբանություններ Կիլիկյան Յայաստանի մասին, խուսափում է այդ խնդրի մասին տեսակետ հայտնելուց¹⁴: 20-րդ դարի սկզբին իրենց հետազոտություններով աչքի ընկան Կ. Բասմաջյանը և Մ. Օրմանյանը: Այսպես, Կ. Բասմաջյանի գրքում ընդհանրապես հիշատակված չէ այս աշխատությունը¹⁵, իսկ ահա Մ. Օրմանյանը բավականին մանրամասնորեն է ներկայացնում հայ-մոնղոլա-

¹² Տե՛ս նույն տեղը:

¹³ Տե՛ս Մ. Չամչյանց, Յայոց պատմություն, հ. 9, էր., 1984, էջ 248-249:

¹⁴ Տե՛ս Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 451:

¹⁵ Տե՛ս Կ. Բասմաճեան, Լեւոն Ե Լուսինեան, Վերջին թագաւոր հայոց, Պարիս, 1908, էջ 12-13 :

կան պայմանագիրը, սակայն ձեռնպահ է մնում գնահատական տալուց¹⁶:

Հայ-մոնղոլական պայմանագրի գնահատության շուրջ քննարկումները շարունակվեցին նաև 20-րդ դարի երկրորդ կեսերին: Ասպարեզ եկան մի խումբ գիտնականներ, որոնք իրենց աշխատություններում որոշակի գնահատական են տվել քննարկվող խնդրին:

Յետազոտողներից Ս. Բոռնազյանը¹⁷, Թ. Բոեյզը¹⁸ և Ա. Սուքիասյանը¹⁹ կարծում են, որ 1254 թ. դաշինք է կնքվել Յեթում արքայի և Մանգու մեծ խանի միջև: Մասնագետների երկրորդ խումբը՝ Գ. Միքայելյանը²⁰, Դ. Կորոբեյնիկովը²¹, Լ. Բաբայանը²² և Մ. Կանարը²³ գտնում են, որ կնքվել էր պայմանագիր երկու պետությունների միջև, որի համաձայն հայոց թագավորությունը դարձել էր մոնղոլներին ենթակա կամ հպատակ: Ինքնուստիքյան հասկանալի է, որ մոնղոլների հետ դաշինք կնքելը, իսկ մյուս կողմից էլ ենթակայությունը կամ հպատակությունը ընդունելը բավականաչափ տարբեր կարգավիճակներ էին ենթադրում Կիլիկյան Հայաստանի համար: Այս խնդրի վերաբերյալ տեսակետ հայտնել է նաև Բ. Շպուլերը, որը ծայրահեղության մեջ ընկնելով, նշում է, որ Կիլիկյան Հայաստանը մի նահանգ էր, որը մտնում էր մոնղոլական տերության կազմի մեջ²⁴: Ակնհայտ է, որ Բ. Շպուլերի կարծիքը շատ հեռու է իրականությունից, և պետք չէ լուրջ ընդունել:

Վերադառնալով բուն խնդրին՝ նշենք, որ Կիլիկիայի հայկական թագավորությունը չի եղել մոնղոլների հիւս հպատակը, սակայն միևնույն ժամանակ պետք է փաստել, որ Կիլիկիայի հայկական թագավորության և մոնղոլական կայսրության միջև իրավահավասար պետությունների դաշինք էլ չի եղել, այլ հայկական թագավորությունը դարձել է մոնղոլների կրտսեր դաշնակիցը՝ պարտավորվելով մասնակցել մոնղոլների և նրանց դաշնակիցների ապագա արշավանքներին դեպի Սիրիա: Բայց դրա փոխարեն հայկական թագավորությունը ստացել է մի շարք առավելություններ:

1. Մոնղոլական զորքերը չէին մտնելու Կիլիկիայի հայկական թագավորության սահմանները:

2. Մոնղոլներն օգնելու էին հայերին օտար պետությունների հարձակումների ժամանակ:

3. Կիլիկիայի հայ առևտրականներին հնարավորություն էր ընձեռվում առևտուր անելու մոնղոլական լայնածավալ կայսրության սահմաններում:

¹⁶ Տե՛ս Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Բ, Էջմիածին, 2001, սյուն 1924-1930:

¹⁷ Տե՛ս Ս. Բոռնազյան, սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկյան հայկական պետությունում 13-14-րդ դարերում, Եր., 1973, էջ 33:

¹⁸ Տե՛ս T. Boase, The Cilician kingdom of Armenia, London, 1978, էջ 25:

¹⁹ Տե՛ս Ա. Սուքիասյան, Կիլիկիայի պետության և իրավունքի պատմություն, Եր., 1978, էջ 76-77:

²⁰ Տե՛ս Գ. Միքայելյան, նշվ. աշխ., էջ 318:

²¹ Տե՛ս Коробейников Д. Византия и государство Ильханов в 13-м – начале 14-го вв. Система внешней политики империи. Византия между Западом и Востоком. СПб., 2001, էջ 441:

²² Տե՛ս Լ. Բաբայան, Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը 13-14-րդ դարերում, Եր., 1964, էջ 211:

²³ Տե՛ս M. Canard, Le Royaume d'Arménie-Cilicie et les Mamelouks jusqu'au traité de 1285, Revue des Etudes Armeniennes, T. 4, Paris, 1967, էջ 217-218:

²⁴ Տե՛ս B. Spuler, The Muslim World, Part 2, Leiden, 1960, էջ 27:

4. Կիլիկիան շարունակում էր մնալ անկախ թագավորություն, նրա արքաները լիովին տնօրինում էին երկրի ներքին կյանքը, իրենք էին ազատորեն հարաբերություններ հաստատում ինչպես Արևելքի, այնպես էլ Արևմուտքի շատ երկրների հետ: Այդ մասին է վկայում նաև Ռուբրուքը, որը հաղորդում է հետևյալը. «Մանգու խանը նրան առավելություն տվեց, որպեսզի ոչ մի դեսպան ուր չդնի նրա երկիրը»²⁵: Հավանաբար խոսքն այն մասին է, որ մոնղոլ խաների պաշտոնյաները չպետք է մտնեին Կիլիկիայի հայկական թագավորության տարածքը: Եվ այս վկայությունը կարելի է դիտել որպես մոնղոլների կողմից Կիլիկիայի հայկական թագավորության ճանաչում:⁷

АРАМ ОГАНЕСЯН – К оценке армяно-монгольского договора 1254 года. – Оценка армяно-монгольского договора 1254 г. – одна из главных задач, стоящих перед историком Киликийского армянского царства. В статье речь идёт о времени, когда, захватив ряд стран, монголы вплотную приблизились к границе Киликийской Армении. Рассмотрены поездка царя Хетума в Монголию и его переговоры с великим ханом Мангу. Подробно описаны источники, проливающие свет на договор 1254 г. В заключение вкратце охарактеризованы современные исследования по данному вопросу.

Ключевые слова: *Хетум, Киликия, оценка, царство, договор, Смбат, мнения, источник*

ARAM HOVHANNISYAN – On Evaluation of the Treaty Between the Cilician King Hetum I and Great Ilkhan of Mangu Signed in 1254. – The estimation of Armenian-Mongol Contract in 1254 is one of the main problems of the history of Armenia. We have represented in the work how the Mongols conquered many countries and came to the borders of Kilikia. We have mentioned about the travelling of king Hetum and his negotiations with khan Mangu. We have thoroughly presented the sources of information about the contract in 1254. At the end of the work we have presented the estimations of different scientists concerning the problem mentioned above. For that we have combined the views of various investigators mentioning our point of view as well.

Key words: *Hetum, Cilicia, evaluation, author, kingdom, treaty, article, country, Smbat, view, source, Armenian king*

²⁵ «Ուղեգրություններ Ուիլյամ Ռուբրուքի (1253-1255)», Աղբյուրներ Հայաստանի և Անդրկովկասի պատմության, հ. Ա, ԺԳ-ԺԶ դարեր, կազմեց՝ **Յ. Հակոբյանը**, Եր., 1932, էջ 26:

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱՑԻԱՎԱՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ԱՇՈՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Քաղաքացիավարական ժողովրդախիշխանության կայացման ժամանակակից պայմաններում առանցքային նշանակություն ունի Հայաստանում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների ու հավասար հնարավորությունների ապահովման գործընթացը, որի արդյունավետ իրականացումը զգալիորեն պայմանավորված է միջազգային առաջավոր փորձի տեղայնացմամբ ու գիտականորեն մշակված գործընկերային մոդելների ներդրմամբ: Գենդերային հիմնախնդիրների համեմատական ուսումնասիրությունները նոր հնարավորություններ են ստեղծում հայ իրականության մեջ կանանց քաղաքացիավարական ներկայացվածության ապահովման և գենդերային դիսկուրսի, ինչպես նաև կանանց իրավունքների ու ազատությունների պաշտպանությամբ զբաղվող քաղաքացիական հասարակության ինստիտուտների համար:

Հետխորհրդային երկրների հասարակագիտության մեջ գենդերագիտությունը (genderology, гендерология) և գենդերային ուսումնասիրությունները (gender studies, гендерные исследования)¹ միջդիսցիպլինար նոր ուղղություն են, որոնք դիտարկում են գենդերային հիմնախնդիրների կարգավորման ընթացակարգերն ու մոդելները հասարակական կյանքի սոցիալ-տնտեսական, քաղաքական և հոգևոր-մշակութային ոլորտներում: Այս համատեքստում քաղաքական գենդերագիտությունն ուսումնասիրում է գենդերային քաղաքականության մշակման և իրականացման հիմնախնդիրները, գենդերային քաղաքացիավարական մշակույթը, քաղաքական ներկայացվածությունը, ինչպես նաև հանրային որոշումների ընդունման և ընտրական գործընթացներում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների ու հավասար հնարավորությունների ապահովման ընթացակարգերը:

ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում աստիճանաբար առանձնահատուկ նշանակություն է ստանում կանանց իրավունքների ու ազատությունների հիմնախնդիրների կարգա-

¹ Այդ մասին տե՛ս **Richardson D.**, Conceptualizing gender, in: *Introducing Gender & Women's Studies*: Edited by **D. Richardson** and **V. Robinson**. Palgrave Macmillan, 2007, էջ 3-17, **Lichtenstein D.**, Interdisciplinarity, in: *Rethinking Women's and Gender Studies*: Edited by **C. M. Orr**, **A. Braithwaite** and **D. Lichtenstein**. Routledge, 2011, էջ 34-59, *Women's Realities, Women's Choices: An Introduction to Women's and Gender Studies*: Edited by **S. Chinn**, **L. M. Alcoff**, **J. N. Brown** and **F. Denmark**. Oxford University Press, 2014, էջ 19-24, 104-116, "Гендерология и феминология. Учебное пособие". Владивосток, 2005, էջ 113-118, "Гендерология и феминология: Учебное пособие". М., 2009, էջ 34-57 և ուրիշներ:

վորումը, որը գլխավորապես պայմանավորված է հասարակության քաղաքական կյանքում կանանց քաղաքացիավարական մասնակցությամբ: Քաղաքացիական հասարակության մակարդակում կանանց քաղաքական առաջնորդության կայացումը կարող է սոցիալական երկխոսության միջավայր ստեղծել բազմաբնույթ հիմնախնդիրների կարգավորման համար:

Գենդերային հավասարության ապահովման ներպետական հիմնական ընթացակարգերն են՝ ՀՀ Անկախության հռչակագիրը, ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ-ում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թթ. ազգային ծրագիրը և դրա միջոցառումների ժամանակացույցը (ընդ. 08.04.2004 թ.), Գենդերային քաղաքականության հայեցակարգը (ընդ. 11.02.2010 թ.), «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքը (ընդ. 20.05.2013 թ.): Գենդերային հավասարության ապահովման ներպետական ընթացակարգերի կայացման առումով առանձնահատուկ նշանակություն ունի ՀՀ վարչապետին կից կանանց խորհուրդը, որի հիմնական խնդիրներն են կանանց հիմնահարցերի լուծման ուղղությամբ կատարվող աշխատանքների համակարգումը և կանանց իրավահավասարության ապահովումը, ինչպես նաև՝ «Ընդդեմ գենդերային բռնության» ազգային ծրագրի մշակման նպատակով ստեղծված Գենդերային բռնության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողովի գործունեությունը²:

Գենդերային քաղաքականության հայեցակարգում ամրագրված են Հայաստանում գենդերային քաղաքականության իրականացման հիմնական սկզբունքները, որոնցից են՝ քաղաքացիավարությունը, հարգանքը, հանդուրժողականությունը, իրավունքների և հնարավորությունների ընդլայնումը, իրավահավասարության ապահովումը, քաղաքացիների անձնական և հանրային շահերի ներդաշնակեցումը, սոցիալական գործընկերությունը, պետական գենդերային քաղաքականության շարունակականությունը, ինչպես նաև առաջադեմ փորձի ներդրումը³: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ այս հայեցակարգում կանանց և տղամարդկանց հավասար ներկայացվածությունը դիտարկված է հասարակության կայուն զարգացման և ժողովրդավարական վերափոխումների ապահովման, քաղաքացիավարական մշակույթի և «հանդուրժողական գենդերային երկխոսության ձևավորման»⁴ համատեքստում:

Հաշվի առնելով Հայաստանում գենդերային քաղաքականության մշակման և իրականացման առաջնահերթությունները՝ «Ընդդեմ գենդերային բռնության ազգային ծրագրում»⁵ և «Ընդդեմ գենդերային բռնության

² Տե՛ս ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պաշտոնական կայք՝ http://www.mlsa.am/home/index.php?menu_id=77&child_id=545&code_id=662

³ Տե՛ս «Գենդերային քաղաքականության հայեցակարգ» (Հավելված ՀՀ կառավարության 2010 թ. փետրվարի 11-ի № արձանագրային որոշման), // http://www.gov.am/u_files/file/kananc-xorh/Gender-hayecakarg.pdf

⁴ Նույն տեղում:

⁵ «Ընդդեմ գենդերային բռնության ազգային ծրագիր» (Հավելված № 1 ՀՀ կառավարության 2011 թ. հունիսի 17-ի նիստի № 23 արձանագրային որոշման), // [http://www.gov.am/u_files/file/kananc-xorh/Ynddem%20brmutyan%202011-2015%20programm\(1\).pdf](http://www.gov.am/u_files/file/kananc-xorh/Ynddem%20brmutyan%202011-2015%20programm(1).pdf)

2011-2015 թթ. ռազմավարական ծրագրում»⁶ ամրագրված ընթացակարգերի հետևողական ներդրումն առանցքային նշանակություն կարող է ունենալ գենդերային հավասարության ապահովման գործընթացում: 2011 թ. իրականացված «Ընդդեմ գենդերային բռնության միջոցառումների ծրագրի»⁷, ինչպես նաև ՀՀ-ում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թթ. ազգային ծրագրի⁸ համեմատական գնահատականներն ուրվագծեցին ռազմավարական կառավարման հիմնական մակարդակները: Վերջինիս համաձայն՝ կարևորվեց կանանց քաղաքացիավարական ներկայացվածությունը, և աշխատանքներ իրականացվեցին հետևյալ ուղղություններով՝ ա) կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների ու հնարավորությունների ապահովումը որոշումներ կայացնելու մակարդակում և հասարակական, քաղաքական ոլորտներում, բ) ՋԼՄ-ի և մշակութային հաստատությունների դերը կանանց հիմնահարցերի լուսաբանման և կնոջ ընդօրինակելի կերպարի ձևավորման գործում և գ) ինստիտուցիոնալ բարեփոխումներ⁹:

Համաշխարհային տնտեսական ֆորումի Գենդերային բացակի համաշխարհային ինդեքսի (ԳԲՀ) (Global Gender Gap Index) տվյալների համաձայն, եթե Հարավային Կովկասի երկրների շարքում 2007-2008 թթ. Ադրբեջանի ԳԲՀ-ի վարկանիշային տվյալները համեմատաբար բարձր են, ապա 2010-2013 թթ.՝ նվազել են (տե՛ս աղյուսակ 1 և գծապատկեր 1): Նույն ժամանակահատվածում Հայաստանն արձանագրել է ԳԲՀ-ի առաջընթաց՝ բարելավվելով երկրի վարկանիշային տվյալները: Սակայն 2007-2013 թթ. ԳԲՀ-ի տվյալների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ Հարավային Կովկասի երկրներն ունեցել են վարկանիշերի անկում: Հայաստանը 2007 թ. համեմատ 2013 թ. արձանագրել է վարկանիշի 23 միավորով անկում, Վրաստանը՝ 19, իսկ Ադրբեջանը՝ 40 միավորով անկում (տե՛ս աղյուսակ 1):

Ադրբեջանը, սկսած 2008 թ., ունեցել է ԳԲՀ-ի կորի կտրուկ անկում մինչև 2010 թ., որն անհամեմատ ցածր է Հայաստանի և Վրաստանի ԳԲՀ-ի կորերի մակարդակներից (տե՛ս գծապատկեր 1): Ադրբեջանի 2010 թ. ԳԲՀ-ն Հարավային Կովկասում արձանագրված ամենացածր վարկանիշն ունի: ԳԲՀ-ի 2011-2013 թթ. կորի տատանումները ցույց են տալիս, որ Ադրբեջանը շարունակել է պահպանել ամենացածր վարկանիշը: 2007-2013 թթ. ժամանակահատվածում Վրաստանի ԳԲՀ-ի կորի անկումը տե-

⁶ «Ընդդեմ գենդերային բռնության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագիր» (Հավելված № 2 ՀՀ կառավարության 2011 թ. հունիսի 17-ի նիստի № 23 արձանագրային որոշման), // [http://www.gov.am/u_files/file/kananc-xorh/Ynddem%20brnutyan%202011-2015%20programm\(1\).pdf](http://www.gov.am/u_files/file/kananc-xorh/Ynddem%20brnutyan%202011-2015%20programm(1).pdf)

⁷ Տե՛ս «Ընդդեմ գենդերային բռնության 2011 թվականի միջոցառումների ծրագիր» (Հավելված № 3 ՀՀ կառավարության 2011 թ. հունիսի 17-ի նիստի № 23 արձանագրային որոշման), // [http://www.gov.am/u_files/file/kananc-xorh/Ynddem%20brnutyan%202011-2015%20programm\(1\).pdf](http://www.gov.am/u_files/file/kananc-xorh/Ynddem%20brnutyan%202011-2015%20programm(1).pdf)

⁸ Տե՛ս «ՀՀ-ում կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թվականների ազգային ծրագիր» (Հավելված № 1 ՀՀ կառավարության 2004 թվականի ապրիլի 8-ի № 645-Ն որոշման), // <http://www.artis.am/DocumentView.aspx?docid=38293>

⁹ Տե՛ս նույն տեղը:

դի է ունեցել 2008 թ. և 2010 թ., իսկ 2011 թ. կորը սկսել է աճել (տե՛ս գծապատկեր 1): Նշված ժամանակահատվածում Հայաստանի ԳԲՀ-ի կորի անկումը տեղի է ունեցել 2009 թ., այնուհետև 2010 թ. կորն աճել է, իսկ 2011 թ. սկսած կորն անկում է ապրել (տե՛ս գծապատկեր 1):


Աղյուսակ 1

Գենդերային բացակի համաշխարհային ինդեքս (ԳԲՀ)¹⁰

Տարի	2013	2012	2011	2010	2009	2008	2007
Միավոր	միավոր	միավոր	միավոր	միավոր	միավոր	միավոր	միավոր
Վրաստան	0,6750	0,6691	0,6624	0,6598	0,6680	0,6654	0,6665
Հայաստան	0,6634	0,6636	0,6654	0,6669	0,6619	0,6677	0,6651
Ադրբեջան	0,6582	0,6546	0,6577	0,6446	0,6626	0,6856	0,6781
Վարկանիշ	վարկանիշ	վարկանիշ	վարկանիշ	վարկանիշ	վարկանիշ	վարկանիշ	վարկանիշ
Վրաստան	86	85	86	88	83	82	67
Հայաստան	94	92	84	84	90	78	71
Ադրբեջան	99	99	91	100	89	61	59

Գծապատկեր 1

Գենդերային բացակի համաշխարհային ինդեքս (2007-2013 թթ.)¹¹



Հարավային Կովկասի երկրների ԳԲՀ-ի քաղաքական ենթագործոնների վրա զգալիորեն ազդել են ընտրական գործընթացները, կառավարության կազմում և խորհրդարանում, պետական կառավարման և տարածքային ինքնակառավարման մարմիններում կանանց ներկայացվածությունը, կուսակցությունների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների գործունե մասնակցությունը կանանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության գործընթացում:

1991-2013 թթ. Վրաստանում կայացել են նախագահական վեց ընտրություններ (1991 թ., 1995 թ., 2000 թ., 2004 թ., 2008 թ., 2013 թ.)¹², որոնցից միայն 2008 թ. և 2013 թ. ընտրություններին են գրանցվել նախագահի թեկնածու կանայք: 2008 թ. նախագահական ընտրություններին մասնակ-

¹⁰ Տվյալների աղբյուրն ըստ՝ «The Global Gender Gap Report (the World Economic Forum)», // <http://www.weforum.org/reports>

¹¹ Տվյալների աղբյուրն ըստ՝ «The Global Gender Gap Report (the World Economic Forum)», // <http://www.weforum.org/reports>

¹² Այդ մասին տե՛ս ԵԱՀԿ ԺՅՄԻԳ-ի պաշտոնական կայք՝ «Elections in Georgia», // <http://www.osce.org/odihr/elections/georgia?page=1>

ցել է Իրինա Սարիշվիլի-Չանտուրիան՝ ստանալով ընտրողների ձայների 0,17%-ը: 2013 թ. նախագահական ընտրությունների արդյունքներով Նինո Բուրջանաձեն ստացավ ընտրողների ձայների 10,18%-ը, իսկ Նինո Չանիշվիլին՝ 0,14%-ը: Սակայն տեղին է նշել, որ դեռևս 2004 թ. արտահերթ նախագահական ընտրություններից առաջ խորհրդարանի խոսնակ Նինո Բուրջանաձեն դարձավ հանրապետության նախագահի ժամանակավոր պաշտոնակատար¹³: Ադրբեջանում կայացած յոթ նախագահական ընտրություններից (1991 թ., 1992 թ., 1993 թ., 1998 թ., 2003 թ., 2008 թ., 2013 թ.)¹⁴ միայն մեկում է գրանցվել նախագահի կին թեկնածու: Եթե 1998 թ. Լալա Շևկեթը, լինելով նախագահի հավանական թեկնածու, ի նշան հակաժողովրդավարական ընտրական համակարգի, բոյկոտեց Ադրբեջանի նախագահի ընտրությունները, ապա 2003 թ. մասնակցելով՝ ստացավ ընտրողների ձայների ընդամենը 3,62%-ը: Չնայած կին հասարակական գործիչների քաղաքական ակտիվությանը՝ այնուամենայնիվ Հայաստանում կայացած նախագահական վեց ընտրություններին (1991 թ., 1996 թ., 1998 թ., 2003 թ., 2008 թ., 2013 թ.)¹⁵ նախագահի կին թեկնածու չի գրանցվել:

2007-2013 թթ. ՀՀ ԳԲՀ-ի չորս ենթահինդեքսների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ գենդերային հիմնահարցերի համատեքստում առաջնային նշանակություն ունի կրթական մակարդակը, որի ենթագործոնների տեսանկյունից Հայաստանն ավանդաբար ունեցել է բարձր վարկանիշ (տե՛ս աղյուսակ 2): Մնացած ենթահինդեքսներով Հայաստանն ունեցել է ցածր վարկանիշ, իսկ դա նշանակում է, որ այդ ուղղությամբ դեռևս առկա են զգալի անելիքներ: 2007 թ. 128 երկրների շարքում Հայաստանը «քաղաքական հնարավորությունների» առումով զբաղեցրել է 125-րդ տեղը, 2008 թ. 130 երկրների շարքում՝ 118-րդ տեղը, 2009 թ. և 2010 թ. 134 երկրների շարքում՝ համապատասխանաբար 123-րդ և 106-րդ տեղերը, 2011 թ. և 2012 թ. 135 երկրներ շարքում՝ համապատասխանաբար 108-րդ և 114-րդ տեղերը, իսկ 2013 թ. 136 երկրների շարքում՝ 115-րդ տեղը (տե՛ս աղյուսակ 2): Միաժամանակ ակնհայտ է, որ ոչ միայն Հայաստանում, այլև Հարավային Կովկասի երկրներում կանանց քաղաքական հնարավորությունները շարունակում են մնալ սահմանափակ:

Հարավային Կովկասի երկրների ԳԲՀ-ի քաղաքական ենթահինդեքսների համեմատական վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ գործադիր իշխանությունում կանանց քաղաքացիավարական ներկայացվածությունը համեմատաբար ցածր մակարդակի վրա է (տե՛ս աղյուսակ 3): 2005-2014 թթ. ժամանակահատվածում, ըստ նախարարական պաշտոններում կանանց ներկայացվածության, Հարավային Կովկասի երկրների

¹³ Այդ մասին տե՛ս ԵԱՀԿ ԺՅՄԻԳ-ի պաշտոնական կայք՝ «Грузия: внеочередные президентские выборы 4 января 2004 г.» Заключительный отчет миссии по наблюдению за выборами Бюро демократических институтов и прав человека ОБСЕ. Варшава, 28 февраля 2004 г. // <http://www.osce.org/ru/odihr/elections/georgia/24600?download=true>

¹⁴ Տե՛ս ԵԱՀԿ ԺՅՄԻԳ-ի պաշտոնական կայք՝ «Elections in Azerbaijan», // <http://www.osce.org/odihr/elections/azerbaijan?page=1>

¹⁵ Տե՛ս ՀՀ ԿԸՀ պաշտոնական կայք՝ <http://www.elections.am/>, ԵԱՀԿ ԺՅՄԻԳ-ի պաշտոնական կայք՝ «Elections in Armenia», // <http://www.osce.org/odihr/elections/armenia>

շարքում առաջատարը Վրաստանն է (տե՛ս աղյուսակ 3): Սակայն 2005 թ. համեմատ Վրաստանի վարականիշը 2014 թ. անկում է ապրել 18 միավորով, իսկ Ադրբեջանի վարականիշը՝ 58 միավորով: Նույն ժամանակահատվածում Հայաստանի վարականիշը բարելավվել է 8 միավորով:

Աղյուսակ 2

ՀՀ գենդերային բացակի համաչխարհային ինդեքսի ենթահնդեքսները (2007-2013 թթ.)¹⁶

Ինդեքս	Ընդամենը		Տնտեսական մասնակցություն		Կրթական մակարդակ		Առողջություն և զրյատևում		Քաղաքական հնարավորություններ	
	Վարկանիշ	միավոր	Վարկանիշ	միավոր	Վարկանիշ	միավոր	Վարկանիշ	միավոր	Վարկանիշ	միավոր
2013 (136 երկրներ)	94	0,663	82	0,638	29	1,000	131	0,950	115	0,066
2012 (135 երկրներ)	92	0,664	76	0,645	25	0,999	130	0,944	114	0,066
2011 (135 երկրներ)	84	0,665	62	0,658	27	0,999	131	0,942	108	0,062
2010 (134 երկրներ)	84	0,667	59	0,669	26	0,999	130	0,937	106	0,062
2009 (134 երկրներ)	90	0,662	56	0,671	29	0,999	133	0,933	123	0,044
2008 (130 երկրներ)	78	0,668	36	0,697	29	0,999	130	0,928	118	0,047
2007 (128 երկրներ)	71	0,665	24	0,721	24	0,999	128	0,923	125	0,017

Աղյուսակ 3

Կանայք Հարավային Կովկասի երկրների նախարարական պաշտոններում (2005 թ., 2008 թ., 2012 թ. և 2014 թ.)¹⁷

Վարկանիշ				Երկիր	Կանայք (%)				Կանայք / Նախարարությունների քանակը			
2005	2008	2012	2014		2005	2008	2012	2014	2005	2008	2012	2014
24	44	50	42	Վրաստան	22,2	17,6	15,8	21,1	4/18	3/17	3/19	4/19
37	79	95	95	Ադրբեջան	15,0	6,7	2,9	2,8	3/20	2/30	1/35	1/36
77	82	69	69	Հայաստան	0,0	5,9	10,5	11,1	0/14	1/17	2/19	2/18

Գծապատկեր 2-ից երևում է, որ 2005-2014 թթ., ըստ նախարարական պաշտոններում կանանց ներկայացվածության (ՆՊԿՆ), Հայաստանի կորն աճել է (տե՛ս գծապատկեր 2): Նշված ժամանակահատվածում Ադրբեջանի ՆՊԿՆ-ի կորն էական անկում է ապրել՝ 2012-2014 թթ. Հարավային Կովկասում ընդունելով ամենացածր մակարդակը (տե՛ս գծապատկեր 2): Չնայած Վրաստանի ՆՊԿՆ-ի կորի անկմանն ու աճին՝ այնուամենայնիվ այն ամենաբարձն է:

Հայաստանում անկախացումից հետո տեղի են ունեցել խորհրդարանա-


¹⁶ Տվյալների աղբյուրն ըստ՝ «The Global Gender Gap Report (the World Economic Forum)» // <http://www.weforum.org/reports>

¹⁷ Տվյալների աղբյուրն ըստ՝ «The Global Gender Gap Report (the World Economic Forum)», // <http://www.weforum.org/reports>, «The Inter-Parliamentary Union (IPU)», // http://www.ipu.org/pdf/publications/wmnmmap05_en.pdf, http://www.ipu.org/pdf/publications/wmnmmap08_en.pdf, http://www.ipu.org/pdf/publications/wmnmmap12_en.pdf, <http://www.ipu.org/pdf/publications/wmnmmap14en.pdf>

կան հինգ ընտրություններ (1995 թ., 1999 թ., 2003 թ., 2007 թ., 2012 թ.), որոնցում կանայք ունեցել են ակտիվ մասնակցություն: Սակայն, ըստ 1997-2014 թթ. տվյալների, ակնհայտ է, որ խորհրդարանական ընտրությունների արդյունքներով կանանց ներկայացվածության ամենաբարձր ցուցանիշը Հայաստանում եղել է 2012 թ. (10,7%), իսկ ամենացածրը՝ 1999 թ. (3,1%) (տե՛ս աղյուսակ 4): Դիտարկունը նշված ժամանակաշրջանում ցույց է տալիս, որ Հայաստանում արձանագրվել է կանանց խորհրդարանական ներկայացվածության կայուն աճ, որը, լինելով անհրաժեշտ, սակայն բավարար չէ քաղաքացիավարական ժողովրդաիշխանության կայացման համար (տե՛ս աղյուսակ 4):

Գծապատկեր 2

Կանայք Հարավային Կովկասի երկրների նախարարական պաշտոններում¹⁸



Աղյուսակ 4

Կանանց խորհրդարանական ներկայացվածությունը (%)¹⁹

Երկիր/տարի	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014
Ադրբեջան	12	12	12	12	10.5	10.5	10.5	10.5	13	11.3	11.4	11.4	11.4	16	16	16	15.6	15.6
Վրաստան	6.9	6.9	6.9	7.2	7.2	7.2	7.2	9.4	9.4	9.4	9.4	6	5.1	6.5	6.6	12	12	12
Հայաստան	6.3	6.3	3.1	3.1	3.1	3.1	4.6	5.3	5.3	5.3	9.2	8.4	9.2	9.2	8.4	10.7	10.7	10.7

Վրաստանի անկախացումից հետո խորհրդարանական վեց ընտրությունների (1992 թ., 1995 թ., 1999 թ., 2003-2004 թթ., 2008 թ., 2012 թ.) արդյունքներով կանանց ներկայացվածության ամենաբարձր ցուցանիշը եղել է 2012 թ. (12%), իսկ ամենացածրը՝ 2009 թ. (5,1%) (տե՛ս աղյուսակ 4): Վրաստանում կանանց խորհրդարանական ներկայացվածության առումով թեև արձանագրվել են վարկանիշների էական տատանումներ, սակայն վերջին տարիներին նկատելի է դրական առաջընթացը (տե՛ս աղյուսակ 4):

¹⁸ Տվյալների աղբյուրն ըստ՝ «The Global Gender Gap Report (the World Economic Forum)» // <http://www.weforum.org/reports>, «The Inter-Parliamentary Union (IPU)», // http://www.ipu.org/pdf/publications/wmnmap05_en.pdf, http://www.ipu.org/pdf/publications/wmnmap08_en.pdf, http://www.ipu.org/pdf/publications/wmnmap12_en.pdf, http://www.ipu.org/pdf/publications/wmnmap14_en.pdf

¹⁹ Տվյալների աղբյուրն ըստ՝ «Women in National Parliament», // <http://www.ipu.org/wmn-e/classif-arc.htm>

Ադրբեջանում անկախացումից հետո խորհրդարանական չորս ընտրությունների (1995 թ., 2000-2001 թթ., 2005-2006 թթ., 2010 թ.) արդյունքներով կանանց ներկայացվածության ամենաբարձր ցուցանիշը եղել է 2010 թ. (16%), իսկ ամենացածրը՝ 2001 թ. (10,5%) (տե՛ս աղյուսակ 4): Յակաքաղաքացիավարական քաղաքական վարչակարգում նման վարկանիշը գլխավորապես պայմանավորված է Ադրբեջանի խորհրդանանում և «գերիշխող» կուսակցության մեջ Ադրբեջանի նախագահի տիկնոջ ներգրավվածությամբ*։ Տեղին է նշել, որ Ադրբեջանում, ի տարբերություն Յասստանի և Վրաստանի, բոլոր խորհրդարանական ընտրությունները միջազգային դիտորդական առաքելության կողմից գնահատվել են որպես միջազգային չափանիշներին չհամապատասխանող և ոչ ժողովրդավարական²⁰:

Գծապատկեր 3-ից երևում է, որ Յարավային Կովկասի երկրների կանանց խորհրդարանական ներկայացվածության (ԿԽՆ) կորերը տատանումներով աճել են: Սակայն ԿԽԻ-ի կորը բարձր է հակաքաղաքացիավարական Ադրբեջանում (տե՛ս գծապատկեր 3), որը բացատրվում է «Ալիևների ընտանքի կլանային գերակայությամբ»²¹:

Վերոհիշյալ դիտարկումներից ակնհայտ է դառնում, որ Յարավային Կովկասի երկրներում գործադիր և օրենսդիր իշխանություններում կանանց քաղաքացիավարական ներկայացվածությունը համեմատաբար ցածր մակարդակի է: 2005-2014 թթ. Յասստանում և Վրաստանում կանանց ներկայացվածությունը գործադիր իշխանությունում եղել է ավելի բարձր, քան օրենսդիր իշխանությունում, իսկ Ադրբեջանում՝ ընդհակառակը:

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի գենդերային անհավասարության ինդեքսի (Gender Inequality Index (GII)) և Գենդերային զարգացման ինդեքսի (Gender-related development index (GDI)) 2013 թ. տվյալների համաձայն՝ Յասստանը զբաղեցնում է 87-րդ վարկանիշային տեղը, Վրաստանը՝ 79-

* 2004 թ. ընտրվելով «Ենի Ադրբեջան» կուսակցության քաղաքական խորհրդի անդամ, իսկ 2013 թ.՝ փոխնախագահի պաշտոնում՝ Սեիրիբան Ալիևան 2005 թ. առ այսօր Ադրբեջանի խորհրդարանի պատգամավոր է (տե՛ս <http://www.mehriban-aliyeva.org/ru/article/item/4>)


²⁰ Տե՛ս ԵԱԶԿ ԺՅՄԻԳ-ի պաշտոնական կայք՝ «OSCE/UN report of the OSCE/UN joint electoral observation mission in Azerbaijan on Azerbaijan's 12 November 1995 Parliamentary election and Constitutional referendum», January 1996, // <http://www.osce.org/odihr/elections/azerbaijan/14291?download=true>; «Republic of Azerbaijan: Parliamentary Elections, 5 November 2000 & 7 January 2001 OSCE/ODIHR Final Report. Warsaw, 15 January 2001», // <http://www.osce.org/odihr/elections/azerbaijan/14265?download=true>; Republic of Azerbaijan Parliamentary elections 6 November 2005 OSCE/ODIHR Election Observation Mission: Final Report, Warsaw, 1 February 2006, // <http://www.osce.org/odihr/elections/azerbaijan/17945?download=true>; «Republic of Azerbaijan: Partial repeat Parliamentary elections 13 May 2006. OSCE/ODIHR Limited Election Observation Mission. Annex to the Final Report on the 6 November 2005 Parliamentary elections», Warsaw, 23 June 2006 // <http://www.osce.org/odihr/elections/azerbaijan/19596?download=true>; Republic of Azerbaijan: Parliamentary Elections, 7 November 2010 OSCE/ODIHR Election Observation Mission: Final Report, Warsaw, 25 January 2011, // <http://www.osce.org/odihr/75073?download=true>

²¹ "Выборы в Азербайджане: клан Алиевых готовится к новой победе, Запад закрывает глаза на нарушения прав человека" (09.10.2013) // <http://www.inopressa.ru/article/09oct2013/inopressa/azerbaijan.html>, "Азербайджанские кланы: завершен процесс первичного накопления" (13.03.2014) // <http://www.meydan.tv/ru/site/politics/975>

րո, իսկ Ադրբեջանը՝ 76-րդ²²: Ինդեքսների երեք չափումներով՝ Հարավային Կովկասի երկրներում դեռևս հրատապ են կանանց վերարտադրողական առողջության, իրավունքների ու ազատությունների ընդլայնման և աշխատաշուկայում մասնակցության հիմնահարցերը: Այդ մասին են վկայում Գեներային հավասարության ինդեքսի (Gender Equality Index)²³ 2006-2012 թթ., ինչպես նաև Շրջակա միջավայրի և գեներային ինդեքսի (Environment and Gender Index (EGI))²⁴ 2013 թ. վերլուծությունները: Վերջինիս համաձայն՝ Վրաստանն ու Հայաստանը ներառված են «չափավոր» երկրների շարքում՝ զբաղեցնելով համապատասխանաբար՝ 27-րդ և 37-րդ վարկանիշային տեղերը²⁵:

Գծապատկեր 3

Կանայք Հարավային Կովկասի երկրների խորհրդարաններում²⁶



Այսպիսով, կարևորելով կանանց քաղաքացիավարական ներկայացվածության կայացման նախադրյալները Հայաստանում, կարելի է ներկայացնել հետևյալ առաջարկությունները.

- ՀՀ կառավարության ռազմավարական ծրագրերի միջոցով անհրաժեշտ է հետևողականորեն աջակցել կանանց տնտեսական մասնակցության, առողջության պահպանման և քաղաքական հնարավորությունների հիմնախնդիրների կարգավորմանը,
- խորհրդարանական կուսակցությունների և կանանց ՀԿ-ի միջև համագործակցության միջոցով անհրաժեշտ է նպաստել կանանց քաղաքացիավարական ներուժի կայուն զարգացմանը,

²² Տվյալների աղբյուրն ըստ՝ «Human Development Reports of the United Nations Development Programme», // <http://hdr.undp.org/en/content/table-4-gender-inequality-index>
²³ Տվյալների աղբյուրն ըստ՝ Social Watch, // <http://www.socialwatch.org/taxonomy/term/527>
²⁴ Տվյալների աղբյուրն ըստ՝ The Environment and Gender Index (EGI), // <http://environmentgenderindex.org>
²⁵ Տվյալների աղբյուրն ըստ՝ IUCN (2013). The Environment and Gender Index (EGI) 2013 Pilot. Washington, D.C.: IUCN, էջ 26:
²⁶ Տվյալների աղբյուրն ըստ՝ «Women in National Parliament», // <http://www.ipu.org/wmn-e/classif-arc.htm>

- հաշվի առնելով Հայաստանում կանանց կրթական մակարդակի բարձր ցուցանիշները՝ հանրային նշանակություն կունենա կանանց ներգրավվածությունը կրթության, առողջապահության և սոցիալական քաղաքականության մշակման և իրականացման գործընթացում,

- գենդերային քաղաքականության ոլորտում սոցիալական գործընկերության և երկխոսության ապահովման նպատակով՝ անհրաժեշտ է ընդլայնել ՀՀ վարչապետին կից կանանց խորհրդի կազմը՝ ներառելով Հայաստանի արհմիությունների համադաշնության, Հայաստանի գործատուների հանրապետական միության, ՀՀ հանրային խորհրդի ժողովրդագրական և գենդերային հարցերի հանձնաժողովի, ԵՊՀ գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնի ներկայացուցիչներին,

- ՀՀ կառավարության գենդերային քաղաքականության արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է աջակցել գենդերագիտական հետազոտությունների իրականացմանը հանրապետական, մարզային և համայնքային մակարդակներում՝ համագործակցելով ԵՊՀ Գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնի հետ, ինչը հնարավորություն կտա իրականացնելու գիտական կառավարում և առաջիկայում հաղթահարելու հանրապետությունում առկա անհանդուրժելի վիճակը:

Բանալի բառեր – քաղաքացիավարական սոցիալական գործընկերություն, կանանց քաղաքական իրավունքներ և ազատություններ, գենդերագիտություն, գենդերային քաղաքականություն, գենդերային քաղաքացիավարական մշակույթ

АШОТ АЛЕКСАНИЯН – Проблемы цивилиархического представительства женщин в Армении. – В статье рассмотрены проблемы демократизации политической системы РА и правовой консолидации цивилиархических институтов. Подчёркнуто, что в процессе демократизации необходимы гендерное социальное партнёрство и диалог. На современном этапе демократических реформ центральное место занимает социально-политический статус армянских женщин, а также правовые механизмы защиты их прав. Эффективная защита женских прав и свобод оказывает демократизирующее влияние на армянское общество на всех уровнях – национальном, европейском и глобальном. На текущем этапе европейской интеграции в Армении постепенно формируются правовые основы такой защиты, и законодательство соответствует международно-правовым стандартам гендерной политики. Однако правовые нормы необходимо реализовать и консолидировать цивилиархические механизмы гендерного равенства. В заключение предлагается провести ряд институциональных реформ.

Ключевые слова: *цивилярхическое социальное партнёрство, политические права и свободы женщин, гендерология, гендерная политика, гендерная цивилиархическая культура*

ASHOT ALEKSANYAN – The Main Issues of Civilarchic Representation of Women in Armenia. – In this article the main issues of democratization of the political system of Armenia contributes to the realization of the constitutional rights and fundamental freedoms, basic values and interests of the individual and the legal consolidation of civilarchic institutions. The article also reveals the necessity of gender social partnership and dialogue in the process of democratization. At the present stage of democratic reform takes center stage analysis of the socio-political status of the

Armenian women, as well as a comparative analysis of the legal mechanisms to protect their rights. In this context, particular importance is the formation of an effective strategy to promote gender equality and social harmonization, which may be relevant in the regulation of social and labor relations, with the involvement of trade unions and women's NGOs. Particular attention is paid to the social dimension of legal activities and social orientation of public organizations is to protect the rights and freedoms of women, thereby contributing to the formation of the welfare state in Armenia. Effective protection of social rights and freedoms of women is an important characteristic of contemporary reality, which has an impact on the democratic integration of the Armenian society at national, European and global level. At this stage of European integration the legal framework for the protection of rights and freedoms of women is gradually formed in Armenia, and legislation complies with international legal standards in the field of gender policy. However, it is necessary that the relevant legal provisions have been implemented to ensure the socio-political development of women and consolidation of civiliarchic mechanisms for gender equality. In the conclusion, based on research by the author is invited to make a number of institutional reforms in Armenia.

Key words: *Civiliarchic democracy, civiliarchic representation of women, civiliarchic social partnership, political rights and freedoms of women, gender discourse, genderology, gender politics, gender civiliarchic culture*

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՊԱՎՈՐՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԲԱՂԱՔԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ԳԱՐԻԿ ՔԵՌՅԱՆ

Քաղաքական կուսակցությունների տիպավորման գիտամեթոդական սկզբունքների մշակումն ու զարգացումը արդի քաղաքական գիտությունների կարևոր խնդիրներից են: Մեր կարծիքով, տիպավորումը անպայման պետք է հենվի կուսակցությունները սահմանելու հայեցակարգերի վրա: «Քաղաքական կուսակցություն» հասկացության սահմանումների մեջ բավականին տարածված է **գաղափարական-դոկտրինալ** հայեցակարգը, որի համաձայն՝ կուսակցությունը միևնույն գաղափարախոսությամբ, առանձնահատուկ սկզբունքների վերաբերյալ բոլորի կողմից ընդունված համաձայնությամբ, միևնույն հայացքներն ունեցող համախոհների քաղաքական կազմակերպություն է կամ անձանց ընդհանրություն, որը հրապարակավ դավանում է նույն քաղաքական դոկտրինան: Կուսակցության կայացման գործում գաղափարախոսության (դոկտրինի) դերը նշվում է Բյորքի, Թոքվիլի, Կոնստանի, Շվարցենբերգի և այլոց սահմանումներում: Մարքսիզմի հայեցակետով, կուսակցությունը բնութագրվում է որոշակի գաղափարախոսությամբ, և դա էական դեր ունի կուսակցության կազմավորման գործում: Օրինակ՝ Լենինը կոմունիստական կուսակցության առաջացումը համարում էր հեղափոխական բանվորական շարժման հետ սոցիալիզմի գաղափարի միավորման հետևանք: Հետխորհրդային ժամանակաշրջանում հրատարակված քաղաքագիտական գրականության մեջ առկա սահմանումներում, որպես կանոն, «գաղափարախոսական և քաղաքական արժեքների» դերը նդվում է առաջնային պլան, նշվում որպես կազմակերպության հիմք:

Հայ քաղաքագիտական մտքի պատմության մեջ հազվագյուտ անդրադարձներ կան հիմնախնդրի առնչությամբ: Դրանցից հատկապես կարելի է նշել սփյուռքահայ Լևոն Չորմիսյանի «Կուսակցությունները» աշխատությունը, որում կան բավականին լուրջ և յուրօրինակ տեսական ընդհանրացումներ, բայց այն դեռ մնում է չուսումնասիրված և քիչ հայտնի: Չորմիսյանի կարծիքով, գաղափարական ընդհանրությունն ու անձնական շահերի հետապնդումը կուսակցությունների առաջացմանը նպաստող գործոններ են: Նրա կարծիքով, ուսմունքներն ու գաղափարախոսությունները դպրոցներ կարող են առաջացնել և գոյատևել նաև առանց կուսակցությունների, բայց երբ գաղափարին միանում է այն իրականացնել ցանկացող կամքը, առաջանում է նաև կուսակցական համախմբումը: «Կուսակցութիւն մը կազմակերպուած համախմբումն է այն մարդոց, որոնք ժողովուրդներու զարգացման եւ բարեշրջման ընթացքին եւ առհասարակ անոնց կեանքը պատրաստող տուեալներու զնահատման մասին նոյն ըմբռնումը եւ տեսակէտ-

ները ունին, որոնք իրենց պատկանած հաւաքականութեան ներկայի հասկացողութիւնը եւ ապագայի պատրաստութիւնը նույն ձեւով կը պատկերացնեն եւ կուզեն իրենց անձնական մասնակցութիւնը բերել, իրենց պէս մտածող անձերուն հետ գործակցաբար, պատրաստելու նպատակով հավաքականութեան կեանքը իրենց հաւատալիքներու հիման վրայ»¹: Յայ հեղինակներից անհրաժեշտ է նշել նաև Վաչե Ղազարյանին, որը Ռամկավար ազատական կուսակցության պատմությանը նվիրված գրքույկում տալիս է հասկացության բավական ընդարձակ սահմանում: Նա գրում է. «Դասական մոտեցմամբ, քաղաքական կուսակցությունը անհատների կամ խմբերի կազմակերպված ամբողջություն է, որը ջանում է իր ուժը գործադրել քաղաքական տվյալ դրության մեջ, անցնելով իշխանության գլուխ, կամ էլ ազդելով դրա վրա: ... Կուսակցությունը միևնույն աշխարհայացքն ու գաղափարախոսությունն ունեցող և ազգային քաղաքական միևնույն նպատակների տեր մարդկանց այն ամբողջությունն է, որոնք ուխտով (երդմամբ) կապված են իրար և համատեղ ջանքերով կենսագործում են պատկանած կուսակցության ընդհանուր նպատակները»²:

Իսկապես, քաղաքական կուսակցություններին բնորոշ առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ նրանք առաջանում են որոշակի գաղափարաքաղաքական հենքով: Կուսակցությունների գերակշիռ մասն իր ռազմավարությունն ու մարտավարությունը ձևակերպում է երկարաժամկետ քաղաքական ծրագրերում, որոնք հենվում են որոշակի գաղափարական սկզբունքների վրա: Եթե նույնիսկ կուսակցությունը չի հենվում հստակ արտահայտված որևէ գաղափարախոսական համակարգի վրա, նրա որոշակի գաղափարական նպատակաուղղվածությունը դրսևորվում է կոնկրետ գործունեության և պաշտպանվող քաղաքական արժեքների մեջ: Քաղաքական կուսակցություններն իրականացնում են նաև գաղափարական գործառույթ, որի էությունը, որոշակի դոկտրինայի համապատասխան, կուսակցականների և համակիրների քաղաքական լուսավորությունն է, նրանց դաստիարակումը ընդունված արժեքների ոգով և քաղաքացիների ներգրավումը քաղաքական կյանքի մեջ՝ կուսակցության պաշտոնական գաղափարախոսության կարգախոսներով: Ուսումնասիրողների գերակշիռ մասը գտնում է, որ գաղափարախոսության որդեգրումը անհրաժեշտ հրամայական է կուսակցության կայացման համար: Հիմնադիր գործիչները ընհանուր քաղաքական շահի հիման վրա ընտրում են այն դոկտրինան, որն ամենահարմարն է քաղաքականության մեջ մտնելու համար: Բանն այն է, որ ձգտելով իշխանության՝ քաղաքական կուսակցությունները չեն կարող թաքցնել իրենց վերաբերմունքը տիրող հասարակական-տնտեսական կարգերի նկատմամբ և հանդես են գալիս կամ այդ կարգերը պահպանելու, կամ էլ փոփոխելու դիրքորոշմամբ: Կուսակցությունների միջև սուր քաղաքական պայքարը պետական իշխանության համար հրամայական պահանջ է դարձնում **գործնական քաղաքականության տեսական հիմնավորումը**, որն էլ կատարվում է համապատաս-

¹ **Լեւոն Չորմիսեան**, Կուսակցութիւնները, Եր., 1995, էջ 22-23:

² **Վաչե Ղազարյան**, Ռամկավար Ազատական կուսակցություն - Ուղեցույց և համառոտ պատմություն, Եր., 1991, էջ 9-10:

խան գաղափարախոսության միջոցով: Գոյություն ունեցող հասարակական հարաբերությունների և տնտեսակարգերի պահպանմամբ շահագրգռված կուսակցություններն ընտրում են տվյալ հասարակարգը արդարացնող ու սրբագործող գաղափարախոսություն, իսկ այն արմատապես վերափոխելու քաղաքականություն վարող կուսակցությունները որպես գաղափարական զենք օգտագործում են քննադատող, մերժող և միևնույն ժամանակ նոր հասարակարգի մոդել առաջարկող գաղափարախոսություն: Իհարկե, չպետք է մոռանալ նաև, որ գաղափարախոսությունը կարող է ծառայել ոչ միայն որպես որոշակի կուսակցությունների պրակտիկ գործունեության տեսական, գաղափարական հիմնավորման միջոց, **այլ նաև որպես քող շահերն ու նպատակները թաքցնելու համար:** Հատկանշական է ֆաշիստական կուսակցությունների օրինակը: Հիտլերի նացիոնալ-սոցիալիստական կուսակցությունն իշխանության հասնելու և ձախ կուսակցություններին նախահարված տալու համար ամենանպատակահարմարը գտավ ֆաշիզմի գաղափարախոսությունը, որի ազգայնական-շովինիստական դրույթները շատ հարմար էին ինչպես զանգվածների գիտակցությունը մթազնելու, այնպես էլ հետագայում արտաքին քաղաքական նպատակներին հասնելու առումով: Ահա թե ինչու ներկայիս քաղաքագետների մեծ մասը **քաղաքական կուսակցությունների բնութագրման չափանիշ ընտրում է ոչ թե այն, ինչ նրանք ասում են, այլ այն, ինչ նրանք անում են**, որովհետև ժամանակակից կուսակցությունների զարգացման մեջ նկատվում են նոր միտումներ: Քաղաքական ասպարեզում հայտնվել են «ժողովրդական կուսակցություններ», «բոլորի համար» կամ «զավթիր բոլորին» կուսակցություններ, որոնց նախընտրական ծրագրերը, որպես կանոն, չունեն ծավալուն տեսական մշակումներ և նրանց բնորոշ է պրագմատիզմը, հակվածությունը ամեն տեսակ փոխզիջումների և առօրյա գործնական խնդիրների լուծմանը: Սրանով է պայմանավորված գաղափարական սկզբունքների նշանակության կտրուկ անկումը քաղաքական կուսակցությունների մեջ, որը ոչ վաղ անցյալում խիստ կարևոր էր կուսակցական շարքերի ընդլայնման ու նոր անդամների հավաքագրման համար: Ներկայումս այն խանգարում է կուսակցական էլիտային ընտրագանգվածի բոլոր հատվածներին տիրելու պայքարում: Իրադարձությունների զարգացման նման ընթացքի պայմաններում գաղափարախոսությունը զոհաբերվում է մերկ պրագմատիզմին՝ ընտրություններում հաջողության հասնելուն: Կուսակցական առաջնորդները խուսափում են իրենց կուսակցությունները կապել որևէ գաղափարախոսության հետ, որպեսզի ձեռք բերեն ցանկացած ընտրողի ձայն՝ անկախ նրա հանդեմունքներից: Այս գործընթացն առավել ցայտուն դրսևորվում է զարգացած երկրներում: Շատ դժվար է մատնանշել ամերիկյան, բրիտանական, գերմանական և արևմտյան այլ պետություններում գործող քաղաքական կուսակցությունների գաղափարաքաղաքական դրույթներում առկա էական տարբերությունները: Նրանց բոլորի նախընտրական ծրագրերում խոսվում է հասարակության համընդհանուր բարեկեցության, սոցիալական կողմնորոշում ունեցող տնտեսության, դեմոկրատական սոցիալիզմի, քաղաքական ազատությունների, դեմոկրատական իրավունքների և այլնի

մասին: Գրեթե նույն մոտեցումներն են նշվում ներքին և արտաքին քաղաքականության խնդիրների լուծման ուղղությամբ: Կուսակցությունների համար խիստ կարևոր է դարձել ընտրողներին ներկայանալ այնպիսի ծրագրով, որի մեջ հաշվեկշռված լինի հասարակության բոլոր հատվածների շահերը համազգային մակարդակով³: Իհարկե, դա շատ բարդ խնդիր է, որովհետև ընտրողների յուրաքանչյուր խումբ ունի իր տեղական սոցիալ-տնտեսական, կրոնական, մշակութային, կենցաղային և բազմաթիվ այլ շահեր, որոնք համադրել միշտ չէ, որ հաջողվում է: Մեր կարծիքով, այս զարգացումներն անշուշտ պետք է հաշվի առնել արդի կուսակցությունների բնութագրման համար, սակայն **ժամանակակից քաղաքական կուսակցությունների դասակարգումը ըստ գաղափարաքաղաքական ուղղվածության** դեռևս իր կայուն տեղն ունի տիպաբանության առաջնային սկզբունքների մեջ: Այս չափանիշը ընդունելով որպես հիմք՝ տարբերակում ենք կուսակցությունների երկու հիմնական խմբեր. **գաղափարական (դոկտրինալ) և պրագմատիկ**⁴: Առաջին խմբի մեջ մտնում են այն կուսակցությունները, որոնք իրենց նպատակ են հռչակում հասարակական կյանքի վերափոխումը իրենց գաղափարների, քաղաքական դոկտրինի և որդեգրած գաղափարախոսության արժեքներին համապատասխան: Պրագմատիկ կուսակցությունները խուսափում են իրենց կապել որևիցե գաղափարախոսության հետ, որովհետև նրանք կազմավորվում և քաղաքական դաշտ են մտնում միայն քաղաքական որոշակի նպատակներ իրականացնելու համար: Նրանք փոխում են իրենց գաղափարախոսությունը տվյալ քաղաքական իրավիճակին համապատասխան, ի տարբերություն դոկտրինալ կուսակցությունների, որոնք մշտապես կամ մի երկարատև ժամանակահատված առաջնորդվում են որոշակի գաղափարաքաղաքական դրույթների վրա հիմնված ծրագրերով: Այդ դրույթներն արտացոլում են կուսակցության քաղաքականության ուղղությունները և գլխավոր նպատակները, երբ մտնելով քաղաքական դաշտ՝ առաջին հերթին **որոշում, ձշտում և կանոնավորում է իր գաղափարաքաղաքական կողմնորոշումը**: Նա կարող է հենվել արդեն հայտնի քաղաքական գաղափարների վրա կամ էլ կարող է առաջ քաշել սեփական, այս կամ այն չափով յուրահատուկ գաղափարները:

Գաղափարաքաղաքական կողմնորոշվածությունը բնութագրում է նաև կուսակցությունների գործունեության **սկզբունքները**: Նրանցով կարելի է դատել կուսակցության հիմնական արժեքների և հասարակական առաջադիմության նկատմամբ նրա վերաբերմունքի մասին: Նույն գաղափարաքաղաքական ուղղվածությամբ ամեն մի երկրում կարող են առաջանալ և գործել մեկից ավելի կուսակցություններ, որոնք սովորաբար միմյանցից տարբերվում են նույն դոկտրինի հիմնական դրույթների մեկնաբանություններով, սկզբունքներով, քաղաքական նպատակներով և դրանց հասնելու միջոցներով: Օրինակ՝ ռուսաստանյան իրականության մեջ ներ-

³ Տե՛ս **Ваган И. С.** Интересы электората и партийные программы // "Вестник Московского университета", серия 12. Политические науки, № 1, 1995:

⁴ Գերմանացի քաղաքագետ Ջ. Նյումենը, հետևելով Մ. Վեբերի եզրութաբանությանը, սրանց անվանում է հովանավորչական կամ խնամակալական (պատրոնաժային):

կայունս գործում են մի քանի կոմունիստական, մի քանի սոցիալ-դեմոկրատական, երկու քրիստոնեա-դեմոկրատական կուսակցություններ և այլն⁵: Այս է պատճառը, որ միևնույն գաղափարական-քաղաքական ուղղվածությանը պատկանող կուսակցությունները հաճախ միմյանց դեմ մղում են քաղաքական անհաշտ պայքար և հայտնվում են հակադիր ճամբարներում: Այսպիսի բևեռացման գործում մեծ դեր են խաղում կուսակցությունների գործունեության **սկզբունքների տարբերությունները**: Սկզբունքները ներկայացնում են քաղաքական բազմապիսի շահերի խտացումն ու որոշում են կուսակցության մոտեցումը քաղաքական խնդիրների և դրանց լուծման տարբերակների նկատմամբ, որոնք էլ միևնույն դոկտրինին հետևող կուսակցություններին տանում են հակամարտության:

Գաղափարաքաղաքական կողմնորոշվածությունն էականորեն ազդում է կուսակցությունների **քաղաքական կուրսի** ձևավորման վրա, որը նպատակների, դրանց իրականացման միջոցների, քաղաքական խնդիրների լուծման առաջնային տարբերակների ամբողջություն է և բնութագրում է քաղաքական կուրսի բովանդակությունը: Քաղաքական կուրսը ամրագրվում և ձևակերպվում է կուսակցությունների ծրագրային փաստաթղթերում: Քաղաքական կուրսի մեջ արտացոլվում են նաև կուսակցության **ռազմավարությունը (ստրատեգիան) և մարտավարությունը (տակտիկան)**: Հեռահար նպատակները կարող ենք բնութագրել որպես կուսակցությունների **ռազմավարություն**, իսկ անմիջական նպատակներն ու արդեն կիրառվող միջոցները՝ **մարտավարություն**: Ռազմավարության և մարտավարության օրգանական մաս են կազմում մասնավոր և ընդհանուր քաղաքական խնդիրների լուծման առաջնային տարբերակների մշակումը, իշխանության և կառավարման ուղղումն ու արմատական վերափոխումը, ինչպես նաև դրա իրականացման ձևերը (պայքարի մեթոդները): Քաղաքական կուրսի ճիշտ որոշումն ու ժամանակի պահանջներին համապատասխանող գաղափարաքաղաքական կողմնորոշվածությունը պայմանավորում են **կուսակցության ճակատագիրը**: Ժամանակակից կուսակցությունների նորագույն փորձը վկայում է, որ նույնիսկ քաղաքական նպատակների համոզիչ հիմնավորումը և պայքարի մեթոդների ճիշտ ընտրությունն անբավարար են կուսակցության հաղթանակի համար, եթե նրանք չեն համապատասխանում հասարակության իրական հնարավորություններին և կուսակցության ուժերին: Այն կուսակցությունները, որոնք բացարձակացնում են իրենց գաղափարները, դրանք դարձնում են դոգմաներ և հաշվի չեն առնում տեղի ունեցող փոփոխությունները, դատապարտվում են պարտության կամ կործանման: Դրա փայլուն օրինակ կարող են ծառայել ԳԴՀ-ի, Ռումինիայի կոմունիստների մարտավարությունը 1989 թ.-ին և ԽՄԿԿ ղեկավարության գործունեությունը 1991 թ.: Այս առումով կենսունակ են այն կուսակցությունները, որոնք պահպանելով իրենց գաղափարաքաղաքական ուղղվածությունն ու սկզբունքները, կարողանում են հմ-

⁵ Տե՛ս "Политические партии современной России". М., 1993, "Политические партии, движения и блоки России". Н. Новгород, 1993, **Виноградов В. Д.** Многопартийность в России. Реальность или утопия? // "Вестник Санкт-Петербургского университета". 1993, серия 6, Вып. 2, էջ 42:

տորեն ու ժամանակին փոփոխել քաղաքական կուրսը (հատկապես մարտավարությունը) ժամանակի և քաղաքական իրադրության փոփոխություններին համապատասխան: Այս առումով հատկանշական է Չինաստանի կոմկուսի օրինակը, որը հավատարիմ մնալով իր գաղափարաքաղաքական կողմնորոշվածությանը և չիրաժարվելով կոմունիզմի գաղափարներից, ժամանակի թելադրանքով արմատականորեն փոխեց ներքին տնտեսական քաղաքականությունը, երկրում մտցրեց ազատ շուկայական տնտեսաձևեր, որով ապահովեց տնտեսության արագ վերելքը: Դրա շնորհիվ նա կարողացավ պահպանել իր մենատիրությունը և ամրապնդել միակուսակցական կոմունիստական վարչակարգը: Հատկանշական է գերմանական սոցիալ-դեմոկրատական առաջնորդներից մեկի մտքերից մեզ հասած այն թևավոր խոսքը, որ կուսակցությունը պետք է իր մարտավարությունը փոխի թեկուզ 24 ժամը մեկ, եթե այդպես են պահանջում ու թելադրում ժամանակն ու քաղաքական իրադրությունը:

Ինչպես նշեցինք, ժամանակակից կուսակցությունների ճնշող մասը հենվում է արդեն հայտնի, ճանաչում գտած և ընտրողներին քիչ թե շատ ծանոթ քաղաքական գաղափարախոսությունների վրա, որոնցով էլ հիմնավորում են գործունեության սկզբունքները, նպատակներն ու քաղաքական կուրսի ռազմավարությունն ու մարտավարությունը: Այստեղ անհրաժեշտ է տարանջատել կուսակցությունների երկու հիմնական խումբ: Առաջինի մեջ նպատակահարմար է դասել **համընդհանրական քաղաքական գաղափարախոսությունների**, իսկ երկրորդի մեջ՝ **ազգայնական-կրոնական գաղափարաքաղաքական դոկտրիններին** հետևող կուսակցություններին: Երկրորդ խմբին պատկանող կուսակցությունների գաղափարախոսությունները բնորոշ են մեկ ազգի, մեկ երկրի կամ էլ որոշակի տարածաշրջանի պետությունների կուսակցություններին, մինչդեռ առաջին խմբի մեջ մտնող գաղափարախոսությունները կարող են կիրառվել բոլոր երկրների կուսակցությունների կողմից առանց սահմանափակման, որովհետև դրանք չունեն ազգային - կրոնական երանգներ:

Համընդհանրական քաղաքական գաղափարախոսություններին հետևող կուսակցությունների հիմնական տիպերն են՝ **նեոպահպանողական, նեոլիբերալ, սոցիալիստական (սոցիալ-դեմոկրատական), եվրոկոմունիստական, նեոֆաշիստական**: Յուրաքանչյուր տիպին պատկանող կուսակցությունների ծրագրային դրույթներն ու քաղաքական կուրսը քիչ թե շատ համապատասխանեցված են տվյալ քաղաքական գաղափարախոսությանը: Գաղափարաքաղաքական ուղղվածությամբ միմյանցից տարբերվող այս տիպերը, չնայած տերմինաբանության կրկնությանը, չի կարելի նույնացնել զանգվածային (դասական) կուսակցությունների փուլում գոյություն ունեցած պահպանողական, լիբերալ, սոցիալիստական, կոմունիստական և ֆաշիստական կուսակցությունների հետ: Օրինակ, ոչ մի կերպ հնարավոր չէ նույնացնել ժամանակակից պահպանողականությունը այն պահպանողականության հետ, որ գոյություն ուներ բուրժուական հեղափոխությունների դարաշրջանում: Նույն կերպ միմյանցից տարբերվում են բոլշևիզմն ու ժամանակակից եվրակոմունիզմը: Միաժամանակ հարկ է նշել, որ **ժամանակակից գաղափարաքաղաքական տիպե-**

րը զանգվածային (դասական) կուսակցությունների պատմական տիպերի փոխակերպված (տրանսֆորմացված) տեսակներն ու նրանց քաղաքական ժառանգորդներն են: **Նեոպահպանողական** կուսակցությունները շեշտը դնում են ձեռնարկատիրության խրախուսման վրա: Նրանք հանդես են գալիս հարկային բեռի նվազեցման օգտին՝ որպես տնտեսական մրցակցությունը խթանող լուրջ պայման⁶: 1960-70-ական թթ.-ից **Նեոպահպանողականությանը** հետևող կուսակցությունները կարևորեցին իշխանության հարցը: Կարգ ու կանոն հասարակական կյանքի բուրր բնագավառներում անհնար է առանց ուժեղ պետության: Առաջ քաշվեց «իրավական սոցիալական պետության» հայեցակարգը, ըստ որի՝ պետությանը հատկացվում է տնտեսության և ընդհանրապես հասարակության գործունեության համար անհրաժեշտ իրավական երաշխիքների ստեղծման դերը: Ըստ գաղափարաքաղաքական ուղղվածության և քաղաքական կուրսի՝ բացի ԱՄՆ-ի Հանրապետական և Մեծ Բրիտանիայի Պահպանողական կուսակցություններից, նեոպահպանողական կարող ենք համարել ճապոնիայի Լիբերալ-դեմոկրատական կուսակցությունը, Ֆրանսիայի Հանրապետությանը աջակցող «Միավորում» գոլիստական կուսակցությունը և այլն: 1970-80-ական թթ. այս ուղղության կուսակցությունների վերելքի տարիներն էին: 1983 թ. ստեղծվում է Միջազգային դեմոկրատական միությունը, որը միավորում է Արևմտյան Եվրոպայի և ԱՄՆ-ի պահպանողական կուսակցություններին: **Նեոլիբերալ** կուսակցությունները, որոնք հիմնականում գտնվում են քաղաքական դաշտի կենտրոնում, իրենց քաղաքական կուրսի հիմքում դնում են «շուկայական հարաբերություններով տնտեսություն՝ պետության նվազագույն մասնակցությամբ» դրույթը: Ժամանակակից նեոլիբերալիզմը բավականին տարբերվում է հին, դասական լիբերալիզմից: Պետության դասական լիբերալիզմի հայեցակարգը (պետությունը որպես չարիք) փոխարինվեց «սոցիալական պետության» մասին տեսությամբ, որը պետությունը դիտում է անհատական իրավունքների և ազատությունների պահպանության երաշխիք: Այսօր նեոլիբերալ կուսակցությունների վարկը բավականին նվազել է, նրանք իրենցից ներկայացնում են փոքր, քիչ ազդեցիկ, սակավամարդ կուսակցություններ, որոնք հազիվ կարողանում են հաղթահարել 5%-ի շեմը: Դրանցից են, օրինակ, Գերմանիայի Ազատ դեմոկրատական, Շվեդիայի կենտրոնամետ, Իտալական լիբերալ կուսակցությունները և այլն⁷: Նեոպահպանողական և նեոլիբերալ ուղղության կուսակցությունների գաղափարախոսություններում լայնորեն օգտագործվում է այսպես կոչված «**հետարդյունաբերական** հասարակության» («պոստինդուստրիալ հասարակություն») և **կոնվերգենցիայի** մասին տեսությունները: «Հետարդյունաբերական հասար-

⁶ Տե՛ս Գալկին Ա. Ա., Рахмиров П. Консерватизм в прошлом и настоящем. М., 1987, "Современный консерватизм". М., 1992, Волкова И. В. Популизм и консерватизм. М., 1992, Осадчая И. М. Консерватизм против реформизма. М., 1984, Пияшева Л. И., Пинскер Б. С. Экономический неоконсерватизм: теория и международная политика. М., 1988, Френкин А. А. Западногерманские консерваторы: кто они? М., 1990:

⁷ Տե՛ս Ռևեն Հազան, Կենտրոնամետ կուսակցություններ. բևեռացումը և մրցակցությունը եվրոպական պառլամենտական դեմոկրատիաներում (անգլ.), Երուսաղեմ, 2000:

րակություն» հասկացությունը օգտագործվում է առաջատար երկրների սոցիալ-տնտեսական զարգացման նոր փուլը բնորոշելու համար⁸:

Գաղափարաքաղաքական ուղղվածության տիպերի շարքում ժամանակակից պետությունների քաղաքական դաշտում առավել բազմաքանակ են **սոցիալիստական (սոցիալ-դեմոկրատական)** կուսակցությունները: Նրանք 19-րդ դարի երկրորդ կեսին ձևավորված հին սոցիալիստական կուսակցությունների քաղաքական ժառանգորդներն են և ավելի շատ, քան մյուս ուղղությունների կուսակցությունները պահպանել են իրենց նախորդների գաղափարները: Չնայած սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները չեն փոխել իրենց անունները, բայց էականորեն վերակառուցել են իրենց քաղաքական կուրսը: Դրանք այլևս չեն դնում սոցիալական բնույթի հեղափոխական վերափոխումների և մասնավոր սեփականության վերացման խնդիրը: Նրանց քաղաքական կուրսը մյուս կուսակցություններից տարբերվում է նույն հարցերի համար առաջարկվող լուծումների այլ տարբերակներով, բայց ռազմավարական վերջնական նպատակ շարունակում է մնալ սոցիալիստական հասարակության ստեղծումը: Ժամանակակից սոցիալ-դեմոկրատները կողմ են տնտեսության մեջ պետության ակտիվ միջամտությանը և տնտեսական գործընթացներին պետության անմիջական մասնակցությանը: Նրանց կարծիքով՝ շուկայական մեխանիզմները անբավարար են ուժեղ և առողջ տնտեսություն ունենալու համար: Այսպիսի քաղաքական կուրս ունեն Մեծ Բրիտանիայի լեյբորիստական, Ֆրանսիայի, Իտալիայի, Ավստրիայի սոցիալիստական, ինչպես նաև Գերմանիայի և Սկանդինավյան երկրների սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները: Նրանց գաղափարախոսության հիմքում դրված է **«Դեմոկրատական սոցիալիզմի»** տեսությունը, որը ամուր կապված է ռեֆորմիզմի հետ և որպես գաղափարախոսություն մշակվել և ամբողջացվել է անգլիական լեյբորիստների և եվրոպական աջ սոցիալիստական առաջնորդների կողմից⁹:

Ըստ գաղափարաքաղաքական ուղղվածության և քաղաքական կուրսի՝ ժամանակակից սոցիալիստական կուսակցություններին բավականին մոտ են **եվրակոմունիստական** կուսակցությունները: Նոր ուղիների որոնումն ավարտվեց նոր գաղափարախոսության և նոր քաղաքական հոսանք

⁸ Այս հասկացությունը 1960-70-ական թթ. շրջանառության մեջ է դրել ամերիկյան սոցիոլոգ Դ. Բելը. այն ընդհանրացնում և զարգացնում է մինչ այդ տարածում գտած «միասնական արդյունաբերական հասարակության» (Ռ. Արոն), «նոր արդյունաբերական հասարակության» (Ջ. Կ. Գելբրայթ), «տնտեսական աճի փուլերի» (Ու. Ռոսթոն), «տեխնոտրոնային հասարակության» (Ջ. Բեթգինսկի), «հետկապիտալիստական հասարակության» (Ռ. Դարենդորֆ) մասին գաղափարները:

⁹ «Դեմոկրատական սոցիալիզմը» որպես նոր գաղափարախոսություն հռչակվել է Սոցիալիստական ինտերնացիոնալի Ֆրանկֆուրտի կոնգրեսի (1951) «Դեմոկրատական սոցիալիզմի նպատակներն ու խնդիրները» ղեկարացիայում՝ որպես հակամիջոց հեղափոխական մարքսիզմին: «Դեմոկրատական սոցիալիզմի» գաղափարաքաղաքական հիմնական դրույթները սահմանվեցին Լեյբորիստական կուսակցության 1957 թ. «Արդյունաբերությունը և հասարակությունը» հայտարարության, Ավստրիայի սոցիալիստական կուսակցության 1958 թ. ծրագրի, Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության 1959 թ. ծրագրի, Սոցիալիստական ինտերնացիոնալի՝ «Աշխարհն այսօր. Սոցիալիստական շարժման հեռանկարները» 1962 թ. ընդունած հռչակագրի և մի շարք այլ ծրագրային փաստաթղթերի մեջ: Այդ դրույթների հիմնավորմանն էին նվիրված լեյբորիստական առաջնորդներից Յեյսկելի, անգլիացի նշանավոր տնտեսագետ Կրոսլենդի և ֆրանսիացի սոցիալիստ Լ. Լորի տեսական մի քանի աշխատություն:

քի՝ «Եվրակոմունիզմի» (Եվրոպական կոմունիզմ) առաջացմամբ: Պահպանելով կոմունիստական հասարակության կառուցման վերջնական նպատակը՝ Եվրակոմունիզմի տեսաբաններն առաջադրեցին մի շարք նոր գաղափարաքաղաքական դրույթներ, որոնք հանգում էին հետևյալին. հրաժարում քաղաքական պայքարի հեղափոխական մեթոդներից, հատկապես՝ զինված ապստամբությունից, պրոլետարիատի դիկտատուրայից և քաղաքական գործադուլներից, միմիայն քաղաքական պայքարի սահմանադրական միջոցների կիրառում, նոր հասարակությանն անցման ճանապարհին սեփականության բոլոր ձևերի պահպանում և տնտեսական ռեֆորմների կիրառում. բռնապետական կարգերի դատապարտումը ԽՍՀՄ-ում և արևելաեվրոպական երկրներում. հավատարմությունը եվրոպական դեմոկրատիայի արժեքներին: Նման քաղաքական գիծը որակվեց որպես կոմունիզմին անցման եվրոպական ուղի՝ ի տարբերություն ռուսականի, որի համար էլ ստացավ «Եվրակոմունիզմ» անունը:

Որպես առանձին գաղափարաքաղաքական տիպ անհրաժեշտ է առանձնացնել **Նեոֆաշիստական (Նեոնացիստական)** կուսակցությունները: Երկրորդ համաշխարհային պատերազմն ամբողջովին դիմակազերծեց ֆաշիզմն ու նացիզմը, իսկ այս ուղղությանը պատկանող կուսակցություններն արգելվեցին և ցրվեցին: Սակայն ֆաշիզմը, որպես քաղաքական գաղափարախոսություն, չվերացավ, այլ փոխարինվեց, վերագգեստավորվեց և ծնունդ տվեց նոր՝ նեոֆաշիստական (նեոնացիստական) կուսակցություններին: Բավական է նշել, որ ֆաշիստական վարչակարգերը Իսպանիայում և Պորտուգալիայում պահպանվեցին մինչև 1974-75 թթ.: Ֆաշիզմի տարրեր են նկատվում նաև Արգենտինայի (1943-55 թթ.), Հունաստանի (1960-ական թթ. վերջեր), առանձին ժամանակահատվածներում՝ Հարավաֆրիկյան հանրապետության, Ուգանդայի, Բրազիլիայի և Չիլիի կառավարող կուսակցությունների ու զինվորական խումտաների քաղաքականության մեջ:

Հետպատերազմյան տարիներին նեոֆաշիստական կուսակցությունները շարունակում էին գործել՝ ակտիվորեն մասնակցելով քաղաքական կյանքին: 1964 թ. ԳՖՀ մի քանի աջ ծայրահեղական մանր կուսակցությունների միավորմամբ կազմավորվեց Նացիոնալ-դեմոկրատական կուսակցությունը, որը դարձավ նեոնացիստական ուժերի համախմբման կենտրոն: Իտալիայում բավականին ակտիվ գործում է «Իտալական սոցիալական շարժում-Ազգային աջ ուժեր» անունը կրող նեոֆաշիստական կուսակցությունը, որը, արդեն 1980-ական թթ., շահելով ընտրողների ձայների հինգ տոկոսից ավելին, կարողանում է խորհրդարանում իր ձեռքում պահել 35-40 պատգամավորական տեղ: Գրեթե նույնպիսի արդյունքի է հասել 1972 թ. Ֆրանսիայում կազմավորված «Ազգային ճակատ» աջ ծայրահեղական, ազգայնական կուսակցությունը, որի նախագահն է Լե Պենը: Նրա կուսակցությունը նույնպես պառլամենտում ունի իր հաստատուն խմբակցությունը: 1995 թ. մունիցիպալ ընտրություններում այն հաղթանակ տարավ, իսկ 2002 թ. ապրիլին կայացած նախագահական ընտրություններում Լե Պենը անցավ երկրորդ փուլ՝ հետևում թողնելով սոցիալիստների թեկնածու, վարչապետ Լ. ժոսպենին. դա ժամանակակից Ֆրան-

սիայի քաղաքական կյանքի սենսացիոն իրադարձություններից էր: Ազգայնական ծայրահեղական կուսակցությունները մեծ ազդեցություն ունեն հատկապես Ռուսաստանում: Այս ուղղությամբ պատկանող շատ կուսակցություններ են գործում նաև ասիական խոշոր երկրներում: Դրացից կարելի է նշել Թուրքիայի հատկապես «Գորշ գայլեր» (Նախագահ Թյուրքեշ) կուսակցությունը, որը ակտիվորեն մասնակցում է երկրի ներքաղաքական կյանքին և որոշակի ազդեցություն ունի ընտրողների վրա:

Նեոֆաշիզմը ծագումնաբանորեն կապված է ֆաշիզմի հետ, քանի որ քարոզում է նույն քաղաքական-գաղափարախոսական սկզբունքները, իսկ նեոֆաշիստական կուսակցությունները իրենց նպատակներին հասնելու համար հակված են բռնությունների գործադրմանը: Սակայն էականորեն տարբերվում են հին ֆաշիստական կուսակցությունների և ժամանակակից նեոֆաշիստական կուսակցությունների քաղաքական կուրսի ռազմավարական նպատակները: Իտալագերմանական ֆաշիզմը մեծ մասամբ նպատակամղված էր արտաքին քաղաքական ագրեսիվ գործողությունների հիմնավորմանը, իսկ այսօրվա նեոֆաշիստների և նեոնացիստների գործողություններն ուղղված են աֆրո-ասիական հետամնաց երկրներից դեպի արևմտյան զարգացած պետություններ ուղղված ներգաղթի հզոր ալիքի դեմ, որ, ըստ նեոֆաշիստների, սպառնում է «մշակույթ ստեղծող ռասաների» կենսունակությանը: Նրանք պահանջում են իշխանություններից խստացնել էմիգրացիոն ռեժիմները, վտարել բոլոր «գունավորներին» և սեփական ժողովրդին պաշտպանել նրանց պատճառած չարիքներից: Այս գաղափարները լայն արձագանք են գտնում Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի և եվրոպական մյուս երկրների ընտազանգվածի մեջ, հատկապես այն տարածաշրջաններում, որտեղ նկատվում է գործազրկության աճ և հասարակության մարզինալ խավերին պատկանող մարդկանց թվաքանակի ավելացում: Նման իրավիճակներում «հիմնական բնակչության» և «մաքուր հավատքի» պաշտպանության դիրքերում կանգնած նեոֆաշիստական կուսակցությունների վարկանիշը կտրուկ բարձրանում է: Այս ուղղության կուսակցությունների ազդեցությունը մեծապես աճում է բազմազգ այն երկրներում, որտեղ գոյություն ունի ազգային անջատողականություն: Այս դեպքում նեոնացիստները հանդես են գալիս ազգային շարժումների դեմ՝ զանգվածային բռնությունների կիրառման պահանջներով, ինչպես, օրինակ, Ռուսաստանում է¹⁰: Բոլոր դեպքերում նեոֆաշիստական կուսակցությունները լուրջ վտանգ են ներկայացնում դեմոկրատական վարչակարգերի համար: Ուսումնասիրողներից շատերը նշում են, որ պահպանելով գերմանական ֆաշիզմի շատ գծեր՝ նրանք այսօր էլ կարող են դառնալ ամբողջատիրության (տոտալիտարիզմի) վերականգնման ջատագովներ¹¹: Եվ պատահական չէ միջազգային հանրության բացասական այն մեծ արձագանքը, որը հետևեց 2001 թ. խորհրդարանական ընտրություններում ավստրիական և 2002 թ. Նախագահական ընտրություններում ֆրանսիական նեոֆաշիստների ունեցած հաջողություններին:

¹⁰ Տե՛ս "Политические партии России в контексте ее истории". Ростов-на-Дону, 1998, էջ 430-458:

¹¹ Տե՛ս **Замковой В.** Германский фашизм – одна из главных форм тоталитаризма. М., 1994:

Ինչպես վերը նշեցինք, համընդհանրական քաղաքական գաղափարախոսություններին հետևող կուսակցություններից բացի, գոյություն ունեն **ազգայնական-կրոնական** գաղափարաքաղաքական դոկտրիններին հետևող կուսակցություններ, որոնք կազմում են գաղափարաքաղաքական ուղղվածության և քաղաքական կուրսի կուսակցությունների երկրորդ խումբը: Ժամանակակից կուսակցություններից շատերը իրենց քաղաքական նպատակներին հասնելու համար լայնորեն և բավականին արդյունավետ օգտագործում են նման գաղափարախոսություններ: Իսլամական բնակչություն ունեցող երկրներում և հատկապես արաբական պետություններում, Իրանում, Աֆղանստանում և Պակիստանում կուսակցական ծրագրային դրույթներում նկատվում է իսլամի ազդեցությունը: Սակայն արդի իսլամամետ կուսակցությունների քաղաքական կուրսին բնորոշ է ոչ թե համաիսլամական պետություն ստեղծելու գաղափարը, այլ իսլամական պետությունների համերաշխության և համագործակցության անհրաժեշտությունը: **Իսլամամետ կուսակցությունների** ծրագրային նպատակներ են հռչակվում հիմնականում հասարակության իսլամացումը, դրան համապատասխան տնտեսական և քաղաքական կառուցվածքների ստեղծումը, Արևմուտքի ազդեցության վերացումը: «Իսլամամետ» որակումը ցույց է տալիս կուսակցության գաղափարաքաղաքական տիպն ու քաղաքական կուրսի ուղղվածությունը, ինչպես որ սոցիալիստական, նեոֆաշիստական, եվրակոմունիստական և վերը նշված մյուս որակումները: Ազգայնական-կրոնական բնույթի ցանկացած գաղափարախոսություն կարող է դրվել կուսակցությունների քաղաքական կուրսի հիմքում և դառնալ նրանց գաղափարաքաղաքական դասակարգման չափանիշ: Իհարկե, այս չափանիշով հնարավոր չէ թվել ու բնութագրել բոլոր տիպերը, որովհետև յուրաքանչյուր երկրի յուրաքանչյուր կուսակցություն ունի իր սեփական քաղաքական կուրսը, որն անհնար է ամբողջովին նույնացնել մեկ այլ կուսակցության քաղաքական կուրսին: Սակայն ազգայնական-կրոնական որոշ գաղափարների քարոզչությունը կուսակցություններին ապահովում է առավել մեծ ընտրազանգվածով, և դրանով են հիմնավորվում նպատակները, մարտավարությունն ու ռազմավարությունը: Բնականաբար, նույն դոկտրինը կարող առկա է բազմաթիվ կուսակցությունների ծրագրերում, որն էլ նրանց նույն գաղափարաքաղաքական տիպի մեջ խմբավորելու համար բավարար հիմք է տալիս: Օրինակ, Թուրքիայի, Ադրբեջանի և Միջին Ասիայի թուրքալեզու պետությունների ազգայնական կուսակցությունների գաղափարաքաղաքական դրույթների վրա բավականին ուժեղ է **պանթուրքիզմի** ազդեցությունը: Իհարկե, համաթուրքական մեծ պետության կամ բոլոր թուրքալեզու ժողովուրդներին մեկ պետության մեջ միավորելու նպատակներ չեն առաջադրվում, սակայն համագործակցությունն ու համերաշխությունը և հատկապես արտաքին քաղաքականության բնագավառում միասնությունը առաջնային տեղ են զբաղեցնում ծրագրային փաստաթղթերում: Դրա ցայտուն օրինակը Թուրքիայի կառավարող կուսակցությունների («Մայր հայրենիք», «Ճշմարիտ ուղի», «Բարօրություն», «Ժողովրդահանրապետական», «Արդարություն և զարգացում») դիրքորոշումն է հայ-ադրբեջանական հակամարտության նկատմամբ: Ներկայումս

պանթյուրքիզմի գաղափարները օգտագործում են Անդրկովկասի և Միջին Ասիայի ազգայնական մի շարք կուսակցություններ, հատկապես նրանք, որոնք վճռականորեն հանդես են գալիս ընդդեմ ռուսական ազդեցության հաստատման: **Ազգայնական-կրոնական** գաղափարաքաղաքական տիպի դասական օրինակ են հրեական կուսակցությունները: Նրանց ճնշող մասը կարող ենք բնութագրել որպես **սիոնիստական**, որովհետև ինչպես Իսրայելում, այնպես էլ մյուս երկրներում որպես ազգային նպատակների իրագործման համար մղվող պայքարի գաղափարական զենք օգտագործվում է **սիոնիզմը**: Այն նույնպես ազգայնական գաղափարախոսություն է, որի անունը վերցված է Երուսաղեմի Սիոն լեռան անունից: Սակայն սիոնիզմ ասելով չպետք է հասկանալ միայն գաղափարախոսություն, այն նաև այդ գաղափարախոսությանը հետևող քաղաքական կուսակցությունների և կազմակերպությունների ճյուղավորված համակարգ է և որոշակի քաղաքականություն¹²: Ժամանակակից քաղաքական կուսակցությունների կողմից օգտագործվում են նաև **պանսլավոնիզմի, պանամերիկանիզմի, իսպանաամերիկանիզմի, գանդիզմի** և այլ ազգայնական գաղափարախոսությունների քաղաքական դոկտրինները, որոնք բավականին արդյունավետ ազդեցություն են ունենում հատկապես նախընտրական գործընթացներում՝ որպես քարոզչական զենք: Սրանք կարող են ծառայել նաև որպես կուսակցությունների գաղափարաքաղաքական դասակարգման չափանիշներ:

Ավարտելով ցանկանում ենք նշել, որ ոչ մի կուսակցության գաղափարախոսություն ինչպես անցյալում, այնպես էլ ներկայումս մեծ մասամբ «մաքուր» չէ: Այսինքն՝ նրանց դրույթները վերցված չեն միմիայն մեկ քաղաքական ուսմունքից: Սովորաբար կուսակցությունների ծրագրերի տեսական մասերի մեջ կարելի է հանդիպել ինչպես դասակարգային, այնպես էլ ազգային և կրոնական քաղաքական ուսմունքների գաղափարներ: Մեկ ուրիշ կարևոր հանգամանք ևս: Միսալ է այն մոտեցումը, երբ որևիցե կուսակցության գործունեության գնահատական տալիս կամ նրա պատմական դերը նշելիս հիմք է ընդունվում այն գաղափարախոսությունը, որը պաշտոնապես որդեգրվել է: Ճիշտ չէ նաև դրա հիման վրա կուսակցության

¹² Որպես քաղաքական հոսանք սիոնիզմն առաջ է եկել 19-րդ դարի վերջերին: Սիոնիզմի գաղափարախոսներն առաջ քաշեցին հրեական հարցը լուծելու ծրագիր՝ մեծ տերությունների օգնությամբ ստեղծելու հրեական պետություն: 1897 թ. Բազելում տեղի ունեցավ սիոնիստական առաջին կոնգրեսը, որտեղ հիմնվեց համաշխարհային սիոնիստական կազմակերպությունը (ՅՍԿ), որը սիոնիզմի պաշտոնական նպատակ հռչակեց Պաղեստինում հրեական պետության ստեղծումը: Սիոնիզմի գաղափարախոսության հիմնական դրույթներն են. աշխարհի տարբեր երկրների հրեաները արտատարածքային (էքստերիտորիալ) համաշխարհային հրեական միասնական ազգ են, հրեաներն առանձնահատուկ, բացառիկ, Աստուծո ընտրյալ ժողովուրդ են, հրեաների ծովումը շրջապատի ժողովուրդների հետ հակաբնական և մեղսական է, հրեաներն ունեն պատմական իրավունքներ իրենց բիբլիական նախնիների հողերի՝ Պաղեստինի և նրան հարող տարածքների նկատմամբ, որտեղ պետք է ստեղծեն իրենց զուտ հրեական, հավասարապաշտ պետությունը: Սիոնիզմը բոլոր հրեաներին համարում է եղբայրներ և քարոզում է դասակարգային համերաշխություն՝ վճռականորեն մերժելով դասակարգային պայքարը, որը դրակվում է որպես ազգային դավաճանություն հրեական ազգի հանդեպ (տես **Иванов Ю. Осторожно: сионизм!** М., 1972, "Сионизм: теория и практика". М., 1973, **Вальтер Лакер. История сионизма.** М., 2000):

բնույթի որոշումը, որ հատկապես բնորոշ է խորհրդային ժամանակաշրջանի ուսումնասիրողներին: Որևէ գաղափարախոսություն քարոզելը այլ բան է, իրական քաղաքականությունը՝ այլ: Օրինակ՝ սոցիալիզմի գաղափարի առկայությունը ֆաշիստական կուսակցությունների ծրագրերում երբեք մեզ հիմք չի կարող տալ նրանց համարելու սոցիալիստական կուսակցություններ: Մեկ անգամ ևս նշենք. գաղափարախոսությունը կարող է կուսակցության հետին քաղաքական նպատակների իրագործման քող ծառայել: **Կուսակցության տիպավորման ճանապարհին առաջին քայլը պաշտոնական գաղափարախոսության և իրական քաղաքականության համապատասխանելիությունը պարզելն է:** Այսպիսի դիրքորոշումը անհրաժեշտ է ըստ գաղափարաքաղաքական ուղղվածության և քաղաքական կուրսի կուսակցությունների տիպաբանությունը գիտական հենքի վրա դնելու և քաղաքական դաշտի ճիշտ վերլուծության համար:

Բանալի բառեր – տիպավորում, կուսակցական գաղափարախոսություններ, դոկտրինալ և պրագմատիկ կուսակցություններ, քաղաքական կուրս, գործունեության սկզբունքներ

ГАРИК КЕРЯН – Проблема типологии партий по политико-идеологическому принципу. – Одним из основных критериев типологии политических партий является идеологический принцип. В согласии с ним партии классифицируются следующим образом. В первую группу входят доктринальные партии с определённой, официально заявленной идеологией. Во вторую – партии с неопределённой идеологией (они рассматриваются как партии прагматические). В основе классификации лежит и сущность партийной идеологии, и базирующийся на ней политический курс (партии либеральные, социалистические, консервативные, религиозные, националистические и т. д.).

Ключевые слова: типология, партийная идеология, доктринальные и прагматические партии, политический курс, принципы деятельности

GARIK KERYAN – Typology of Political Parties Based on the Political and Ideological Principles: Scientific-Methodological Issues. – Political and ideological principles are one of the main criteria for the typology of political parties. According to the classification by political and ideological principles, the first group consists of doctrinal parties with certain and officially proclaimed ideology. The second group includes parties with uncertain ideology, which we prefer to regard as pragmatic ones. Classification of political parties can be based either on the ideological specifics of political parties, or on the essence of developed policies /liberal, socialist, conservative, religious, nationalist, etc./.

Key words: political parties, typology, ideology of political parties, doctrinal and pragmatic parties, policy, principles of functioning

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԻՆԴԵՔՍԸ
(1995-2012 թթ.)**

ԱՐՈՒՄՅԱԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Ժողովրդավարացման «երրորդ ալիքը» նպաստեց ժողովրդավարության գնահատման ու չափման մեթոդները կատարելագործելուն ու նոր գործիքներ մշակելուն, որոնք այսօր բավականին հրատապ են ոչ միայն գիտական շրջանակներում: Միջազգային խոշոր կազմակերպությունները, հետազոտական ինստիտուտներն ու վերլուծական կենտրոնները, մշակելով ժողովրդավարության ինդեքսներ, սանդղակավորում են պետությունները ըստ ռեժիմների և ժողովրդավարացման աստիճանի: Սույն հետազոտության շրջանակներում, հիմնվելով ինդեքսների կառուցման մեթոդի վրա, մշակվել և որպես գործիք կիրառվել է ժողովրդավարության մակարդակի չափման մոդելը¹:

Մասնագիտական գրականության մեջ բազմազան են ոչ միայն ժողովրդավարության սահմանումներն ու տեսությունները, այլև պայմաններն ու գործոնները, որոնք մասնագետները դիտարկում են ժողովրդավարությունը չափելիս: Ամփոփելով ժողովրդավարության տեսական հիմնական գրականությունը՝ Դ. Ռոսթուն² առանձնացնում է երեք մոտեցում. առաջինի կողմնակիցները (Լիփսեթ³, Քաթրայթ⁴) կայուն ժողովրդավարությունը պայմանավորում են տնտեսական և սոցիալական գործոններով, օրինակ՝ ՅՆԱ-ն մեկ շնչի հաշվով, համատարած գրագիտության մակարդակը, գերակայող քաղաքային բնակչությունը և այլն: Երկրորդ մոտեցումը կենտրոնանում է «քաղաքացիների համոզմունքների և հոգեբանական տրամադրությունների վրա»: Քաղաքական կուլտուրայի մասնագետներ Դ. Լեռները⁵, Գ. Ալմոնդն ու Ս. Վերբան⁶ պնդում են, որ քաղաքացիական մշակույթը և հանրային քաղաքականությանը մասնակցելու ձգտումը ժողովրդավարության հաստատման անհրաժեշտ պայմաններ են: Երրորդ մոտեցումը ժողովրդավարությունը պայմանավորում է սոցիալ-քաղաքական կառուցվածքի առանձնահատկություններով: Օրինակ՝ Ռ. Դարենդոր-

¹ Մոդելի մեթոդաբանության մշակումը կատարվել է հեղինակի կողմից ՀՈԿԿ-Հայաստան և Նյու Յորքի «Կարնեգի» կորպորացիայի թիվ R03 կրթաթոշակի շրջանակներում:

² Տե՛ս **Rustow, Dankwart A.** Transitions to Democracy: Toward a Dynamic Model. *Comparative Politics* 2(3), 1970, էջ 337-338:

³ Տե՛ս **Lipset, Seymour M.** Some Social Requisites of Democracy: Economic Development and Political Legitimacy. // *American Political Science Review* 53(1), 1959, էջ 69-105:

⁴ Տե՛ս **Cutright, P.** National Political Development: Measurement and Analysis. // *American Sociological Review* 28, 1963, էջ 253-264:

⁵ Տե՛ս **Lerner, Daniel, Lucille W. Pevsner.** The Passing of Traditional Society: Modernizing the Middle East, Glencoe, 1958:


⁶ Տե՛ս **Almond, Gabriel A., Verba, Sidney.** The Civic Culture: Political Attitudes and Democracy in Five Nations, Princeton, 1963:

Ֆր⁷, Ա. Լեյփհարթը⁸ ժողովրդավարության համար կարևորում են կոնֆլիկտն ու հաշտությունը, իսկ ըստ Ռ. Դալի⁹ ժողովրդավարական կայունությունը ենթադրում է ժողովրդավարական արժեքների և կանոնների նկատմամբ հավատարմություն ոչ այնքան ընտրազանգվածի, որքան արհեստավարժ քաղաքական գործիչների շրջանում:

Հիմնվելով հիմնական տեսական դրույթների ու գործող ինդեքսների մեթոդաբանությունների վրա՝ մոդելավորման ժամանակ ելակետ է ընդունվում այն դրույթը, որ ժողովրդավարության վրա ընդհանուր առմամբ տարբեր չափերով ազդում են հինգ գործոն՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական*, կրթական, առողջապահական (տե՛ս գծապատկեր 1)**:

Գծապատկեր 1

Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի գործոնները



Ժողովրդավարությունը պայմանավորող քաղաքական գործոններն են՝ 1. օրենքի գերակայությունը (Օր.), 2. քաղաքական կայունությունը/բռնության բացակայությունը (Կայուն.), 3. քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների ինդեքսը (ՔԻ), 4. մամուլի ազատությունը (ՄԱ), 5. կոռուպցիայի ընկալման ինդեքսը (ԿԸԻ), 6. քաղաքական համակարգը (ՔՀ), 7. խորհրդարանական մեծամասնությունը (ԽՄ), 8. սոցիալական անհանգստությունները և քաղաքական ճնշումները (ՍԱ), 9. գենդերային հավասարությունը (Գեհդ.), 10. կրոնը (Կ), 11. հակամարտության առկայությունը (ՀԱ):

⁷ Տե՛ս **Dahrendorf, Ralf**. Class and Class Conflict in Industrial Society, Stanford: Stanford University Press, 1959:

⁸ Տե՛ս **Lijphart, Arend**. The Politics of Accommodation: Pluralism and Democracy in the Netherlands, Berkeley: University of California Press, 1968:

⁹ Տե՛ս **Dahl, Robert**. Who Governs?: Democracy and Power in an American City, New Haven: Yale University, 1961:

* Սոցիալական գործոններից կրթականի և առողջապահականի տարանջատումը ուղղված է այդ բաղադրիչների առավել խորքային՝ ըստ առանձին ոլորտների ուսումնասիրությանը: Սոցիալական գործոնների ինդեքսն այս դեպքում վերաբերում է միայն եկամուտների անհավասարությանը:

** Մոդելում ընդգրկված փոփոխականների ընտրությունն իրականացվել է դրանց կոռելյացիոն մատրիցի կառուցման և արտաքսման մեթոդով: Նախնական փուլում ընդգրկվել է ավելի քան 50 փոփոխական, այնուհետև մոդելից դուրս են բերվել այն փոփոխականները, որոնք կոռելյացիոն ուժեղ կապ ունեն (R ≥ 10,71):

Տնտեսական գործոններն են՝ 12. համախառն ազգային արդյունքը մեկ շնչի հաշվով (ՀԱԱ), 13. առևտրաշրջանառության ծավալը (Ա), 14. բյուջեի դեֆիցիտը (ԲԴ), 15. տնտեսության վարկավորման ծավալները (ՏՎ), 16. օտարերկրյա ուղղակի ներդրումները (ՕՈՒՆ), 17. գնաճը (Գ), 18. տնտեսական ազատության ինդեքսը (ՏԱԻ):

Սոցիալական գործոններն են՝ 19. իրական աշխատավարձը (ԻԱ), 20. գործազրկության մակարդակը (Գործ), 21. Ջինի ինդեքսը (ՋԻ):

Կրթական գործոններն են՝ 22. մարդկային զարգացման համաթվի կրթության բաղադրիչը (ՄԶԳ-կրթ.), 23. պետության ծախսերը կրթության ոլորտում (ԿԾ):

Առողջապահական գործոններն են՝ 24. կյանքի սպասվող տևողությունը ծննդից (ԿՏ), 25. ծախսերը առողջապահության ոլորտում (ԱԾ)¹⁰:

Մոդելում ընդգրկված մի շարք փոփոխականների հաշվարկման մեթոդաբանությունը հետևյալն է.

- «Քաղաքական համակարգ» փոփոխականը (Ֆիլիպ Քիֆերի կողմավորման համակարգ)¹¹ բաժանվում է հետևյալ կատեգորիաների՝ խորհրդարանական (2 միավոր), խորհրդարանի կողմից ընտրված գործադիր իշխանության գլուխ (1 միավոր), նախագահական (0 միավոր): Քաղաքական համակարգերը ստանում են 0 միավոր, եթե պետության ղեկավարը ոչ ընտրովի մարմին է կամ ընտրվում է ուղղակի քաղաքացիների կամ ընտրողների կողմից, սակայն վարչապետի պաշտոնը բացակայում է: Ընտրովի նախագահի և վարչապետի պայմաններում համակարգը համարվում է նախագահական, եթե նախագահը՝ 1. ունի վետոյի իրավունք, որը կարող է չեղյալ համարվել միայն խորհրդարանի որակյալ մեծամասնության կողմից կամ 2. նշանակում է վարչապետին և/կամ կառավարության անդամներին և 3. կարող է ազատ արձակել խորհրդարանը՝ նշանակելով նոր ընտրություններ: Քաղաքական համակարգերը, որոնցում գործադիրն ընտրվում է խորհրդարանի կողմից, խորհրդարանական են (2 միավոր), բացառությամբ, երբ այդ խորհրդարանը չի կարող հեշտությամբ հետ կանչել գործադիրին, քանի որ դրա համար պահանջվում է ձայների 2/3-ը կամ խորհրդարանի ինքնալուծարում: Այդ դեպքերում համակարգը ստանում է 1 միավոր:

- «Սոցիալական անհանգստություններ ու քաղաքական ճնշումներ» փոփոխականը ներառում է սահմանված ժամանակահատվածում ցույցերի, գործադուլների, սոցիալական անկարգությունների քանակը և մասնավորապես ճնշումները դրանց նկատմամբ: Հաշվի առնելով նման վիճակագրության բացակայությունը, հիմնվելով տարբեր տեղեկատվական աղբյուրների ուսումնասիրությունների և վերլուծության վրա՝ դրանց գնահատականը տրվել է 0-5 սանդղակի շրջանակներում:

- «Խորհրդարանական մեծամասնություն» փոփոխականը հաշվարկվել է հետևյալ կերպ. 0 միավոր, եթե գործադիր իշխանության ղեկավարի

¹⁰ Հաշվարկների հիմք են հետևյալ աղբյուրները 08.08.2014՝ 1,2- www.govindicators.org, 3,4- <http://www.freedomhouse.org>, 5- <http://www.transparency.org>, 6, 7, 8, 10, 11 -գնահատված է հեղինակի կողմից, 9- <http://www.weforum.org/issues/global-gender-gap>, 12, 13, 15-17, 20, 21, 23-25- <http://data.worldbank.org/indicator>, 18-<http://www.heritage.org/index/>, 14, 19- [arm stat.am](http://armstat.am), 22- <http://hdr.undp.org>

¹¹ Տե՛ս **Philip Keefer**, Database of Political Institutions: Changes and Variable Definitions, The World Bank, December, 2012, էջ 3-4:

կուսակցությունը ունի բացարձակ մեծամասնություն օրենսդիր իշխանության մարմնում, 1 միավոր, եթե մանդատների բաշխումը համեմատաբար հավասար է, 2 միավոր, եթե բացարձակ մեծամասնությունը պատկանում է ընդդիմությանը:

- «Կրոն» փոփոխականի սահմանումը հիմնված է այն հետազոտությունների վրա, որոնք հաստատում են քրիստոնեության և ժողովրդավարության սերտ փոխկապվածությունը և ոչ քրիստոնյա մշակույթների քիչ համատեղելիությունը ժողովրդավարությանը: «Կրոն» փոփոխականում առանձնանում է երկու կատեգորիա՝ «քրիստոնյա» (1 միավոր) և «ոչ քրիստոնյա» պետություններ (0 միավոր):

- Հակամարտության առկայության ազդեցությունը ժողովրդավարության վրա գնահատվել է հետևյալ կերպ՝ հակամարտության բացակայություն (2), պասիվ հակամարտության առկայություն. պետությունը կոնֆլիկտային իրավիճակում է այլ պետության/պետությունների հետ, որը, սակայն, չի ուղեկցվում ակտիվ ռազմական գործողություններով (1), ակտիվ հակամարտության առկայություն. պետությունը կոնֆլիկտային իրավիճակում է այլ պետության/պետությունների հետ, որն ուղեկցվում է ակտիվ ռազմական գործողություններով (0): Տվյալների նորմալացման ժամանակ որպես առավելագույն արժեք (max) ընդունվում է 2-ը, իսկ նվազագույն (min)՝ 0-ն:

Բոլոր փոփոխականները նորմալացվում են հետևյալ բանաձևով՝*

$$X' = \frac{x_i - \min \{x_i\}}{\max \{x_i\} - \min \{x_i\}}$$

որտեղ՝

x_i -ն i-րդ բնութագրիչ ցուցանիշի մեծությունն է,

$\min \{x_i\}$ - ն i-րդ բնութագրիչ ցուցանիշի նվազագույն արժեքն է,

$\max \{x_i\}$ - ն i-րդ բնութագրիչ ցուցանիշի առավելագույն արժեքն է:

Միջերկրային վերլուծությունների ժամանակ որոշ փոփոխականների համար որպես առավելագույն և նվազագույն արժեքներ ընդունվել են աշխարհի երկրների վերջին հինգ տարվա երեք նվազագույն և երեք առավելագույն տվյալների միջինացված ցուցանիշները, իսկ մեկ երկրի դեպքում՝ նրա տարբեր ժամանակահատվածների համապատասխան արժեքները:

Յուրաքանչյուր խմբի, այսինքն՝ քաղաքական (Ք_{ԳԻ}), տնտեսական (Տ_{ԳԻ}), սոցիալական (Ս_{ԳԻ}), կրթական (Կ_{ԳԻ}), առողջապահական (Ա_{ԳԻ}) գործոնների ինդեքսների հաշվարկն իրականացվում է ժողովրդավարության վրա ազդող գործոնների նորմալացված արժեքների պարզ և կշռված միջինների հաշվարկով՝

$$Ք_{ԳԻ} = (2x(ՔԻ + ԿԸԻ + Օր. + ՄԱ + Կայուն. + ՔՀ + ԽՄ + ՍԱ + Գենդ.) + ՀԱ + Կ^{**}) / 20$$

$$Տ_{ԳԻ} = (ՀԱԱ + Ա + ՏՎ + ՕՈՒՆ + ՏԱԻ + Գ + ԲԴ) / 7$$

$$Ա_{ԳԻ} = (ՁԻ + ԻԱ + Գործ) / 3$$

* Բանաձևում բացասական ազդեցությամբ փոփոխականների (օրինակ՝ զնաճ) նվազագույն և առավելագույն արժեքները տեղափոխվել են, ուստի դրանց ցածր արժեքների դեպքում ստանում ենք նորմալացված ավելի բարձր արժեքներ և հակառակը:

** «Հակամարտության առկայություն» և «կրոն» փոփոխականների կշիռներն իջեցված են, քանի որ դրանք պետության ներքին զարգացումների արդյունք չեն: Բացի այդ, «կրոն» փոփոխականի ազդեցությունը մասամբ գնահատվում է նաև այլ փոփոխականների միջոցով (օրինակ՝ զենդերային հավասարության), իսկ մի շարք հակամարտություններ կարող են պայմանավորված լինել, օրինակ, ինքնորոշման իրավունքի պայքարով, որը ունենալով բացասական ազդեցություն պետության զարգացման վրա, այնուամենայնիվ չի հակադրվում ժողովրդավարությանը:

$$Կ_{qH} = (U_{23}\text{-կրթ.} + 40)/2$$

$$Ա_{qH} = (4S + U_{20})/2$$

Հաշվի առնելով վերոհիշյալ հինգ խումբ փոփոխականների ազդեցությունը ժողովրդավարության վրա՝ առաջարկում ենք ձևակերպել այդ գործոնների աստիճանակարգությունը. ԺՄԻ-ն (ժողովրդավարության մակարդակի ինդեքս) կհաշվարկվի՝ P_{qH} , S_{qH} , U_{qH} , $Կ_{qH}$ և $Ա_{qH}$ կշռված միջին թվաբանականի հիման վրա*.


$$\text{ԺՄԻ} = (41,5 \times P_{qH} + 32,5 \times (U_{qH} + Կ_{qH} + Ա_{qH})/3 + 26 \times S_{qH})/100$$

Այսպես՝ ներկայացված ժողովրդավարության մակարդակի ինդեքսի բանաձևի համաձայն՝ ժողովրդավարության վրա առավելագույն ազդեցությունն ունեն քաղաքական, այնուհետև՝ սոցիալական՝ ներառելով նաև կրթական ու առողջապահական բաղադրիչները, և տնտեսական գործոնները:

Մոդելի մեթոդաբանությամբ կատարված հաշվարկների հիման վրա ստացել ենք 1995-2012 թթ. համար Հայաստանի ժողովրդավարության վրա ազդող քաղաքական, սոցիալական, տնտեսական, կրթական և առողջապահական գործոնների ինդեքսների՝ գծապատկեր 2-ում ներկայացված միտումները:

Գծապատկեր 2

Հայաստանի ժողովրդավարության վրա ազդող քաղաքական, սոցիալական, տնտեսական, կրթական և առողջապահական գործոնների ինդեքսները (1995-2012 թթ.)**



Ժողովրդավարության քաղաքական գործոնների ինդեքսի կորից երևում է, որ քաղաքական զարգացումներն ընթանում են մեկ մակարդա-

* Կշիռները սահմանվել են տրամաչափարկման միջոցով, մասնավորապես՝ չափանմուշ մի շարք երկրների (Նորվեգիա, Շվեդիա, Դանիա, Իսլանդիա) ժողովրդավարության մակարդակի ինդեքսի հաշվարկման և դրանցում ենթաինդեքսների գործակիցների որոշման, ինչպես նաև ժողովրդավարության տեսական դրույթների և առկա մոդելների համապատասխան ուսումնասիրությունների հիման վրա:

** Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

կի վրա՝ փոքր-ինչ վերելքներով և վայրէջքներով, որոնք հիմնականում պայմանավորված են ընտրություններով: Հետազոտությունները վկայում են, որ Հայաստանում ժողովրդավարության մակարդակի և քաղաքական կայունության առավել մեծ անկումներ նկատվում են մասնավորապես նախագահական ընտրությունների ժամանակ, որը բնորոշ է նախագահական քաղաքական համակարգ ունեցող և անցումային շրջանում գտնվող պետություններին:

Հայաստանում նախագահական ընտրություններ են անցկացվել 1991, 1996, 1998, 2003, 2008 և 2013 թթ.:

Առաջին նախագահական ընտրությունները տեղի ունեցան 1991 թվականին. ձայների 83%-ով հաղթանակ տարավ Հայոց համազգային շարժման թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանը:

Հաջորդ նախագահական ընտրությունները խնդրահարույց էին: Պաշտոնական տվյալների համաձայն՝ Տեր-Պետրոսյանը վերընտրվել էր նախագահի պաշտոնում ձայների 51,7%-ով, իսկ ընդդիմության առաջնորդ Վազգեն Մանուկյանը (ԱԺՄ)՝ ստանալով 41%, հայտարարում էր տեղ գտած լայնածավալ կեղծիքների մասին: 1996 թ. սեպտեմբերի 25-ին 150-200 հազար ցուցարարներ գրոհեցին Ազգային ժողովի շենքը և բռնություն գործադրեցին Ազգային ժողովի խոսնակի ու փոխխոսնակի նկատմամբ¹²: Ոստիկանությունը ցրեց ցուցարարներին, ինչի հետևանքով մոտ 60 հոգի ստացան մարմնական տարբեր վնասվածքներ¹³: 1996 թ. արձանագրված քաղաքական գործոնների ինդեքսի անկումը մեծ մասամբ պայմանավորված էր քաղաքական այս ճգնաժամով (տե՛ս գծապատկեր 2):

1998 թ. մարտին նախագահական արտահերթ ընտրություններ նշանակվեցին, որը պայմանավորված էր Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման վերաբերյալ Լ. Տեր-Պետրոսյանի առաջարկած տարբերակի շուրջ առաջացած ներքին տարաձայնություններով: Այնուամենայնիվ, քաղաքական գործոնների ինդեքսի անկում նկատվում է 1999 թ., որի պատճառը հոկտեմբերի 27-ի դեպքերն էին, երբ Ազգային ժողովի շենքում տեղի ունեցավ ահաբեկչություն զինված մարդկանց կողմից¹⁴:

2003 թ. և 2004 թ. նույնպես նկատվում է քաղաքական ցուցանիշների անկում (տե՛ս գծապատկեր 2): 2003-ից սկսած՝ անկումը պայմանավորված է նշված ժամանակահատվածում ակտիվ քաղաքական իրադարձություններով: Այդ թվականին տեղի են ունեցել և՛ նախագահական, և՛ խորհրդարանական ընտրություններ, ինչպես նաև՝ հանրաքվե: Նախագահական ընտրությունների երկրորդ փուլում 67,5% արդյունքով վերընտրվեց Ռոբերտ Քոչարյանը՝ հնարավորություն ստանալով պաշտոնավարելու ևս 5 տարի: Նախընտրական և հետընտրական գործըն-

¹² Տե՛ս **Astourian, Stephan H.** From Ter-Petrosian to Kocharian: Leadership Change in Armenia. University of California, Berkeley, 2001, էջ 45:

¹³ Տե՛ս «Armenia: Amnesty International Calls for Investigations into Beatings of Opposition Supporters Following Election Protests», Amnesty International, 1996, 05.05.2014, <http://archive.amnesty.org/library/Index/ENGEUR540021996?open&of=ENG-ARM>

¹⁴ Տե՛ս **Marsden, Chr.** Shooting death of Armenian prime minister heightens crisis in the Caucasus. WSWS, 1999, 10.08.2014, <http://www.wsws.org/en/articles/1999/10/arme-o29.html>

թացները պայմանավորեցին քաղաքացիական անհնազանդությունների քանակի որոշակի աճ, որը շարունակվեց նաև 2004 թվականի գարնանը, երբ ընդդիմությունը մարտի 28-ից սկսեց ցույցերի մի շարք՝ պահանջելով Ռ. Քոչարյանի հրաժարականը¹⁵:

2008 թ. նախագահական ընտրությունները անկախ Հայաստանի պատմության մեջ ամենախնդրահարույցն էին: Ըստ փետրվարի 19-ին կայացած նախագահական ընտրությունների առաջին փուլի արդյունքների (52,8%)՝ հաղթանակ տարավ ՀՀ վարչապետ և պաշտպանության նախկին նախարար Սերժ Սարգսյանը: Փետրվարի 20-ին Երևանի Ազատության հրապարակում սկսվեցին զանգվածային հանրահավաքներ, որոնք հետագայում վերածվեցին զանգվածային անկարգությունների: Այդ իսկ պատճառով քաղաքական գործոնների ինդեքսի թերևս ամենախոշոր անկումը պայմանավորված է նշված դեպքերով (տե՛ս գծապատկեր 2): 2013 թ. ընտրություններին Սերժ Սարգսյանը վերընտրվեց ՀՀ նախագահի պաշտոնում:

Ինչ վերաբերում է խորհրդարանական ընտրություններին, ապա դրանց հետընտրական քաղաքական գործընթացների բացասական ազդեցությունը ժողովրդավարության վրա առավել մեղմ է, քան նախագահական ընտրություններին:

Հայաստանն անկախությունից ի վեր ունեցել է Ազգային ժողովի գումարման հինգ ընտրություն՝ 1995, 1999, 2003, 2007 և 2012 թթ.:

Վերլուծելով ընտրություններին քաղաքական կուսակցությունների մասնակցության միտումները՝ նկատում ենք, որ խորհրդարանական բոլոր ընտրություններին միայն ՀՅԴ-ն և ՀՀԿ-ն են մասնակցել և հաղթահարել օրենքով սահմանված 5%-անոց արգելքը, իսկ ՀԿԿ-ն և ԱԺՄ-ն պատգամավորական տեղեր զբաղեցրել են միայն առաջին (1995 թ.) և երկրորդ (1999 թ.) գումարման Ազգային ժողովում: Օրինաց երկիրը իր կայուն ներկայությունն է ունեցել սկսած ԱԺ երկրորդ, իսկ ԲՀԿ-ն և ԺԿ-ն՝ չորրորդ (2007 թ.) գումարման ընտրություններից: Ընդհանուր առմամբ կարող ենք փաստել, որ ԱԺ հինգ գումարումների կուսակցական կազմը ընտրությունից ընտրություն մեծ մասամբ տարբեր է եղել: Նկատելի է նաև, որ անկուսակցականների թիվը հետզհետե նվազել է (տե՛ս աղյուսակ 1):

ՀՀ ԱԺ հինգ ընտրությունների արդյունքները վկայում են Հայաստանում քաղաքական համակարգի կայացման ինչպես դրական, այնպես էլ բացասական գործընթացների մասին: Նշենք, որ Հայաստանի անկախացումից ի վեր թերևս ամենահանգիստը 2007 թ. խորհրդարանական ընտրություններն էին: Միևնույն ժամանակ, ժողովրդավարության մակարդակի ինդեքսի վրա ամենաբացասական ազդեցությունն ունեցան 2012 թ. խորհրդարանական ընտրություններին արձանագրված արդյունքները, երբ մոդելում հաշվարկվող «խորհրդարանական մեծամասնություն» փոփոխականը հասավ նվազագույնի (0), քանի որ ՀՀ նախագահի կուսակցությունը բացարձակ մեծամասնություն ձեռք բերեց խորհրդարանում՝ ստանձնելով «միանձնյա» որոշումներ ընդունողի լիազորություններ և՛ օրենսդիր, և՛ գործադիր մարմիններում: Ուժերի դասավորվածության այս

¹⁵ Տե՛ս **Ishkanian A. Democracy.** Building and Civil Society in Post-Soviet Armenia, London: Routledge, 2008, էջ 44-45:

պարագայում նվազագույնի են հասնում նաև ժողովրդավարական համակարգի կայացմանն ուղղված 2005 թ. նոյեմբերի 27-ի հանրաքվեով կատարված սահմանադրական փոփոխությունները, որոնք ուղղված էին Նախագահի լիազորությունների սահմանափակմանը և կառավարության կազմավորման հարցում ԱԺ դերի մեծացմանը:

Աղյուսակ 1

ՀՀ Ազգային ժողովում կուսակցությունների պատգամավորական տեղերի հարաբերակցությունը¹⁶

Կուսակցություններ, դաշինքներ, մասնակիցներ	ՀՀ Ազգային ժողովի ընտրություններ										
	1995		1999		2003		2007		2012		
	Մ	Հ	Մ	Հ	Մ	Հ	Մ	Հ	Մ	Հ	
«Հանրապետություն» միավորում ¹⁷	68	20	-	-	-	-	-	-	-	-	-
«Շամիրամ»	-	8	-	-	-	-	-	-	-	-	-
ՀԿԿ	4	6	2	8	-	-	-	-	-	-	-
ԱԺՄ	2	3	2	4	-	7*	-	-	-	-	-
ԱԻՄ	-	3	-	-	-	-	-	-	-	-	-
ՀՈԱԿ	1	-	-	-	-	-	-	-	-	-	-
ՀՅԴ	1	-	3	5	-	11	-	16	1	5	
«Միասնություն» դաշինք ¹⁸	-	-	33	29	-	-	-	-	-	-	
«Օրինաց երկիր» կուսակցություն	-	-	2	4	7	12	2	8	1	5	
«Իրավունք և միաբանություն» դաշինք ¹⁹	-	-	1	6	-	-	-	-	-	-	
ՀՀԿ	-	7	-	7	10	23	22	41	29	40	
«Արդարություն» դաշինք ²⁰	-	-	-	-	1	14	-	-	-	-	
«Ազգային միաբանություն»	-	-	-	-	-	9	-	-	-	-	
ՍԱԿ	-	-	-	-	-	6	-	-	-	-	
Համահայկական աշխատավորական կուսակցություն	-	-	-	-	1	-	-	-	-	-	
«Դաշինք» կուսակցություն	-	-	-	-	-	-	1	-	-	-	
ԲՀԿ	-	-	-	-	-	-	7	18	9	28	
«Ժառանգություն»	-	-	-	-	-	-	-	7	-	5	
ՀԱԿ	-	-	-	-	-	-	-	-	-	7	
Թափուր տեղեր	2	-	-	-	-	-	-	-	-	-	
Անկուսակցականներ	72	-	32	-	37	-	9	-	1	-	
Ընդամենը	150	40	75	56	56	75	41	90	41	90	

¹⁶ Տվյալների աղբյուրը տես Nohlen D., Grotz F. and Hartmann C. (eds). Elections in Asia & the Pacific: A Data Handbook, London, Oxford University Press, 2001, ՀՀ ԿԸՀ պաշտոնական կայք՝ <http://www.elections.am/electionsview/> ԵԱՀԿ-ի վերջնական հաշվետվությունները ՀՀ ընտրությունների վերաբերյալ, 18.05.2014, <http://www.osce.org/odihr/elections/armenia>

¹⁷ «Հանրապետություն» դաշինքում ընդգրկվել են հետևյալ կուսակցությունները՝ ՀՀԸ, ՀՀԿ, ՀՈԱԿ, ՀԶԴՄ, ՍԴՀԿ, «Մտավորական Հայաստան»:

* 7 - ընտրություններին մասնակցել է դաշինքով:


¹⁸ «Միասնություն» դաշինքում ընդգրկվել են հետևյալ կուսակցությունները՝ ՀՀԿ և ՀԺԿ:

¹⁹ «Իրավունք և միաբանություն» դաշինքում ընդգրկվել են հետևյալ կուսակցությունները՝ ԱՄԿ, ԱԻՄ:

²⁰ «Արդարություն» դաշինքում ընդգրկվել են հետևյալ կուսակցությունները՝ ՀԺԿ, ԱԺՄ, ԱԻՄ, ՀԴԿ, ԱԺԴԿ, ԱԺԿ, «Հանրապետություն»:

Գծապատկեր 3

Խորհրդարանում մեծամասնական և համամասնական ընտրակարգով պատգամավորական տեղերի հարաբերակցությունը²¹



Աղյուսակ 2

Խորհրդարանում մեծամասնական և համամասնական ընտրակարգերով պատգամավորական տեղերի հարաբերակցությունը

Ընտրակարգ	1990 ²²	1995	1999	2003	2007	2012
Մեծամասնական	260	150	75	56	41	41
Համամասնական	0	40	56	75	90	90
Ընդհանուր	260	190	131	131	131	131

Հարկ է նշել նաև, որ ընտրությունից ընտրություն փոփոխություններ են կատարվել 1999 թ. ՀՀ ընտրական օրենսգրքի²³ 95-րդ հոդվածում, որի

²¹ Տվյալների աղբյուր են՝ «ՀՀ Սահմանադրական օրենք» (ընդունվել է 27.03.1995 թ.), 5-րդ հոդվ., «ՀՀ օրենքը Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (ընդունվել է 03. 07. 2002 թ.), 55-րդ հոդվ., կետ 1 և 2, «ՀՀ օրենքը Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (ընդունվել է 19. 05. 2005 թ.), 57-րդ հոդվ., կետ 1 և 2:

²² 1990 թ. օգոստոսի 24-ին ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը որոշեց Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը վերանվանել Հայաստանի Հանրապետություն, իսկ գործող տասներկուերորդ գումարման Գերագույն խորհուրդը համարել Հայաստանի Հանրապետության առաջին գումարման Գերագույն խորհուրդ (տե՛ս 19.08.2014), <http://parliament.am/parliament.php?id=parliament&lang=arm>

²³ Ուժը կորցրած է ճանաչվել 2011 թ. ՀՀ ընտրական օրենսգրքի ընդունմամբ, որում մեծամասնական և համամասնական ընտրակարգերով ընտրվող պատգամավորների թվի հարաբերակցությունը ամրագրված է 103-րդ հոդվածով (տե՛ս 19.08.2014), <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=2020#5>

համաձայն՝ յուրաքանչյուր անգամ վերանայվել է մեծամասնական և համանասնական ընտրակարգերով ընտրված պատգամավորների թվի հարաբերակցությունը՝ հօգուտ վերջինիս (տե՛ս գծապատկեր 3, աղյուսակ 2): Այս հանգամանքը վկայում է բազմակուսակցական համակարգի ձևավորման և կայացման գործընթացի մասին:

Անդրադառնալով մոդելում ընդգրկված քաղաքական այլ փոփոխականներին՝ նշենք, որ «քաղաքական կայունության» և «օրենքի գերակայության» ցուցանիշները, որոշակի տատանումներով հանդերձ, դիտարկվող ժամանակահատվածում համեմատաբար բարելավվել են: Ընդ որում, օրենքի գերակայության ամենացածր ցուցանիշը (34,45) գրանցվել է 1996 թ., քաղաքական կայունությանը (22,12)՝ 1998-2000 թթ. քաղաքական ճգնաժամի տարիներին²⁴:

Կոռուպցիայի ընկալման ինդեքսը 1998-2012 թթ. ընկած ժամանակահատվածում 0-10 սանդղակի միջակայքում (2012 թ. մեթոդաբանությամբ՝ 0-100) բարելավվել է ընդամենը 1 միավորով՝ 174 պետությունների շարքում գրավելով 105-րդ տեղը, 2013 թ.՝ 94-րդ տեղը: Հայաստանում կոռուպցիոն ռիսկերի պատճառ են իշխանության և պետական համակարգի սերտաճումը գործարարության հետ, շահերի բախման իրավիճակի ոչ արդյունավետ կառավարումը, օրենսդրական սողանքները, ինչպես նաև՝ կոռուպցիայի նկատմամբ հանդուրժողականությունը:

Ըստ Freedom House-ի՝ Հայաստանում մամուլը անազատ է: Ընդ որում, դիտարկելով Հայաստանի գնահատականների ժամանակագրական շարքը՝ նկատում ենք, որ մինչև 2001 թ. ներառյալ հայաստանյան մամուլը որակվել է որպես մասնակի ազատ, 2002-2013 թթ.՝ անազատ: Անցումը «մասնակի ազատ»-ից «անազատ» կարգավիճակի Freedom House-ը հիմնավորում է իշխանությունների կողմից քաղաքական քննադատությունը լռեցնելու փորձերով և առաջատար անկախ հեռուստակայանի՝ «Ա1+»-ի գործունեության դադարեցմամբ՝ արձանագրելով մամուլի վրա քաղաքական ուժերի ճնշումները: Քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների ոլորտները, ըստ կազմակերպության գնահատման, «մասնակի ազատ» են: Նշենք, որ քաղաքացիական ազատությունների միավորը (4) այս տարիներին մնացել է անփոփոխ, իսկ ինչ վերաբերում է քաղաքական իրավունքներին, ապա դրանք ունեցել են տարբեր տատանումներ: Գնահատականը վատթարացել է (6) սկսած 2008 թ.՝ պայմանավորված նախագահական ընտրություններին ընդդիմադիրների ձերբակալություններով և քաղաքական այլ ճնշումներով: 2012-ից սկսած նկատվել է դրական տեղաշարժ²⁵:

Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից հաշվարկվող Համաշխարհային գենդերային բացակ (Global Gender Gap) ինդեքսի ուսումնասիրությունները վկայում են, որ Հայաստանում քաղաքականությունն այն ոլորտն է, որտեղ գենդերային անհավասարությունն առավել է արտահայտված, քանի որ պետությունը զբաղեցնում է 115-րդ տեղը 136 պետությունների շարքում: Համաշխարհային գենդերային բացակի «տնտեսա-

²⁴ Տե՛ս (մուտքը՝ 19.08.2014)՝ <http://info.worldbank.org/governance/wgi/index.aspx#home>

²⁵ Տե՛ս «Freedom House»-ի պաշտոնական կայք, 19.08.2014, www.freedomhouse.org

կան մասնակցության և հնարավորությունների» ենթաինդեքսի հաշվարկներով Հայաստանը 82-րդ տեղում է, «առողջության և գոյատևման» տվյալներով՝ 131, իսկ «կրթության մակարդակ»-ով՝ 29-րդ տեղում: Վերջինիս պարագայում անհավասարությունը հոգուտ կանանց է մասնավորապես բարձրագույն կրթության ոլորտում: 2013 թ. միավորների վերջնական հաշվարկով Հայաստանը 94-րդ տեղում է²⁶:

Ինչ վերաբերում է տնտեսական գործոնների ազդեցությանը ժողովրդավարության մակարդակի ինդեքսի վրա, ապա նշենք, որ սկսած 1990-ական թվականների կեսերից Հայաստանը դարձել է արագ զարգացող անցումային երկրներից մեկը. 1994–2001 թթ. ընթացքում գրանցվել է կայուն միջինը տարեկան 5% տնտեսական աճ, 2002-2007 թթ. տնտեսական աճը եղել է երկնիշ, որը, սակայն, ֆինանսատնտեսական ճգնաժամի պատճառով նվազել է: 2008 թ. վերջին սկսած տնտեսական անկումն առավել արագացավ՝ 2009-ին՝ գրանցելով տնտեսական աճի երկնիշ անկում (-14,2%) (տես գծապատկեր 2)²⁷:

Ֆինանսատնտեսական ճգնաժամը չէր կարող շրջանցել նաև սոցիալական ոլորտը, ուստի, սկսած 1998 թ.-ից, առաջին անգամ 2009 թ. գրանցվեց աղքատության մակարդակի աճ: 2010 թ. ճգնաժամը շարունակեց բացասական ազդեցություն ունենալ. աղքատության մակարդակը աճեց, բևեռացվածությունը՝ խորացավ: Միայն 2011 թ.-ից աղքատության մակարդակը սկսեց նվազել՝ 2012 թ. կազմելով 32,4%²⁸: Գծապատկեր 2-ում ներկայացված սոցիալական գործոնների ինդեքսի դինամիկայից նկատում ենք, որ 1995-2000 թթ. տեղի է ունեցել աննշան աճ, իսկ 2001 թ.՝ կտրուկ անկում՝ դիտարկվող ժամանակահատվածում գրանցելով գործազրկության ամենաբարձր ցուցանիշը՝ 38,4%²⁹: Այնուհետև նկատվում է սոցիալական գործոնների ինդեքսի կայուն աճ՝ մինչև ֆինանսատնտեսական ճգնաժամով պայմանավորված կտրուկ անկումը:

Կրթության ոլորտում պետական ծախսերի դինամիկան ուսումնասիրելիս նկատում ենք, որ չնայած ֆինանսատնտեսական ճգնաժամի առկայությանը՝ 2009 թ. կրթության ծախսերը՝ որպես ՀՆԱ մասնաբաժին, ավելացել են՝ գրանցելով դիտարկվող ժամանակահատվածի ամենաբարձր ցուցանիշը (3,9 ՀՆԱ%): 2013 թ. կրթական ծախսերը կազմել են ՀՆԱ 2,9%, ինչը 1,7 անգամ փոքր է նախկին Խորհրդային Միության երկրների 2010 թ. նույն ցուցանիշի միջինից³⁰: Այս ժամանակահատվածում Մարդկային զարգացման համաթվի (ՄԶՀ) կրթության բաղադրիչը 0,68-ից աճել է 0,839-ի: 1980 թ.-ից մինչև 2012 թ. կրթության միջին տևողությունը ավելացել է 1,6 տարով, իսկ կրթության սպասվող տևողությունը՝ 2,3 տարով: Եվ

²⁶ Տես **Ricardo Hausmann, Laura D. Tyson, Berkeley, Saadia Zahidi**. The Global Gender Gap Report, World Economic Forum, Geneva, 2013, էջ 10, 13:

²⁷ Տես «The Necessity for Economic Diversification and Export Expansion, Armenia Economic Report», EDRC, RA Ministry of Economy, Yerevan, October, 2010, էջ 9-16:

²⁸ Տես ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն պաշտոնական կայք, ` 19.08.2014, www.armstat.am

²⁹ Տես նույն տեղը:

³⁰ Տես «ՀՀ 2014-2015 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր», էջ 170:

առհասարակ Հայաստանը, ըստ նշված համաթվի, դասվում է մարդկային զարգացման բարձր մակարդակ ունեցող երկրների թվին³¹, իսկ կրթական գործոնների ինդեքսը ընդհանուր առմամբ դրական ազդեցություն է ունեցել ժողովրդավարության մակարդակի վրա (տե՛ս գծապատկեր 2):

Համաշխարհային բանկի տվյալների համաձայն՝ առողջապահության ոլորտում պետական և մասնավոր ծախսերը Հայաստանում 1995-2012 թթ. աստիճանաբար նվազել են՝ 2012 թ. գրանցելով 4,5% ՀՆԱ-ի նկատմամբ³²: Ինչ վերաբերում է առողջապահության բյուջեին, ապա 2012 թ. այն կազմել է ՀՆԱ-ի 1,64%, ինչը վկայում է, որ պետական այլ ծախսերի համեմատ առողջապահության ծախսերի մակարդակը ցածր է: Դիտարկելով առողջապահական գործոնների ինդեքսի դինամիկան նշված ժամանակահատվածում՝ կարող ենք նկատել երկու կտրուկ անկում՝ 2008 թ. և 2011 թ. (տե՛ս գծապատկեր 2), որոնք պայմանավորված են այս ոլորտում պետական և մասնավոր ծախսերի կրճատմամբ: Այդ ծախսերի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2000 թվականին:


Ինչպես նշել էինք մոդելի մեթոդաբանությունը նկարագրելիս, վերը բերված գործոնների ինդեքսի (տե՛ս գծապատկեր 2) կշռված միջիններից ձևավորվում է ժողովրդավարության մակարդակի ինդեքսը (տե՛ս գծապատկեր 3):

Գծապատկեր 3-ում ներկայացված են ժողովրդավարության մակարդակի ինդեքսները 1995-2012 թթ.: Այդ ժամանակահատվածում ժողովրդավարության մակարդակի ինդեքսն ընդհանուր առմամբ ունի դրական աճի միտում, և որոշակի տատանումներով այն տարեցտարի բարելավել է իր ցուցանիշները: Նկատելի է, որ դիտարկվող ժամանակահատվածի առաջին հատվածում տատանումներն ավելի հաճախակի են, քան երկրորդ: Մասնավորապես, սկսած 2001 թվականից, ինդեքսների աճի միտումը ավելի հարթ է ընթանում, ինչը նշանակում է, որ վերջին տասնամյակում ժողովրդավարությունը Հայաստանում առավել համախմբված է դարձել: Երկրորդ հատվածի միակ կտրուկ անկումը տեղի է ունեցել 2009 թվականին ֆինանսատնտեսական ճգնաժամի պատճառով, որը, անշուշտ, բացասական ազդեցություն է ունեցել ժողովրդավարական գործընթացների, մասնավորապես տնտեսական և սոցիալական ոլորտների վրա: Նախքան տնտեսական ճգնաժամը 1999 և 2001 թվականներին տեղի է ունեցել ժողովրդավարության մակարդակի ինդեքսի ևս երկու անկում, որոնցից առաջինը պայմանավորված է հոկտեմբերի 27-ին Ազգային ժողովում տեղի ունեցած ահաբեկչությամբ և տնտեսական ցուցանիշների նվազմամբ, իսկ երկրորդը՝ տնտեսական և սոցիալական գործոնների ինդեքսների միաժամանակյա անկմամբ: Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի տատանումների ցածր մակարդակը (ստ. շեղ. = 0,06, միջին = 0,5) վկայում է, որ Հայաստանում անցումը դեպի ժողովրդավարություն տեղի է ունենում սահուն և առանց ցնցումների:

³¹ Տե՛ս ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրի պաշտոնական կայք, 19.08.2014, <http://hdr.undp.org/en/statistics/hdi>

³² Տե՛ս ՀԲ պաշտոնական կայք 19.08.2014, <http://data.worldbank.org/indicator/SH.XPD.TOTL.ZS>

Հայաստանի ժողովրդավարության մակարդակի ինդեքսը (1995-2012 թթ.)*



Հետազոտության շրջանակներում ռեգրեսիայի վերլուծության միջոցով դուրս են բերվել մոդելում ընդգրկված քաղաքական, տնտեսական, սոցիալական, կրթական, առողջապահական գործոնների ինդեքսների այն փոփոխականները, որոնք առավել նշանակալի ազդեցություն ունեն Հայաստանի ժողովրդավարության մակարդակի վրա:

Ստացված տվյալների համաձայն՝ մոդելում ընդգրկված քաղաքական ցուցանիշներից նշանակալի կապ է հաստատվել ժՄԻ-ի³³ և քաղաքական իրավունքների ու քաղաքացիական ազատությունների ինդեքսի, քաղաքական կայունություն / բռնության բացակայություն և օրենքի գերակայություն փոփոխականների միջև.

$$Y' = 0,014x_1 - 0,079 \text{ (Adj. } R^2=0,596),$$

որտեղ՝ Y' -ը ժՄԻ-ն է (ժՄԻ, որից դուրս է բերվել օրենքի գերակայություն փոփոխականը), x_1 -ը՝ օրենքի գերակայությունը:

$$Y' = 0,004x_2 + 0,33 \text{ (Adj. } R^2=0,538),$$

որտեղ՝ Y' -ը ժՄԻ-ն է (ժՄԻ, որից դուրս է բերվել քաղաքական կայունություն/ բռնության բացակայություն փոփոխականը), x_2 -ը՝ քաղաքական կայունություն/ բռնության բացակայությունը:

$$Y' = 0,093x_3 + 0,06 \text{ (Adj. } R^2=0,351),$$

որտեղ՝ Y' -ը ժՄԻ-ն է (ժՄԻ, որից դուրս է բերվել քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների ինդեքսը), x_3 -ը՝ քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների ինդեքսը:

Մոդելում ընդգրկված տնտեսական գործոններից նշանակալի կապ է

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

³³ ժՄԻ-ն ժողովրդավարության մակարդակի ինդեքսն է, որից դուրս է բերվում համապատասխան անկախ փոփոխականը յուրաքանչյուր զույգային ռեգրեսիայի վերլուծության ժամանակ:

հաստատվել ժՄԻ-ի և 1 շնչի հաշվով ՀԱԱ-ի ու առևտրաշրջանառության միջև.

$$Y' = 0,005x_4 + 0,392 \text{ (Adj. } R^2=0,731\text{)},$$

որտեղ՝ Y' -ը ժՄԻ-ն է (ժՄԻ, որից դուրս է բերվել ՀԱԱ-ն 1 շնչի հաշվով), x_4 -ը՝ ՀԱԱ-ն 1 շնչի հաշվով (\$100):

$$Y' = -0,006x_5 + 0,873 \text{ (Adj. } R^2 = 0,428\text{)},$$

որտեղ՝ Y' -ը ժՄԻ-ն է (ժՄԻ, որից դուրս է բերվել արտաքին առևտրաշրջանառությունը), x_5 -ը՝ արտաքին առևտրաշրջանառությունը (% ՀՆԱ-ի նկատմամբ):

Սոցիալական գործոնների ինդեքսում նշանակալի կապ է դիտվել ժՄԻ-ի և Ջինի ինդեքսի միջև.

$$Y' = -0,49x_6 + 0,695 \text{ (Adj. } R^2 = 0,776\text{)},$$

որտեղ՝ Y' -ը ժՄԻ-ն է (ժՄԻ, որից դուրս է բերվել Ջինի ինդեքսը), x_6 -ը՝ Ջինի ինդեքսը:

Կրթական գործոնների ռեգրեսիոն վերլուծության արդյունքում ստացել ենք հետևյալ հավասարումները.

$$Y' = 0,95x_7 - 0,308 \text{ (Adj. } R^2 = 0,861\text{)},$$

որտեղ՝ Y' -ը ժՄԻ-ն է (ժՄԻ, որից դուրս է բերվել ՄՁՀ կրթության բաղադրիչը), x_7 -ը՝ ՄՁՀ կրթության բաղադրիչը:

$$Y' = 0,078x_8 + 0,3 \text{ (Adj. } R^2 = 0,640\text{)},$$

որտեղ՝ Y' -ը ժՄԻ-ն է (ժՄԻ, որից դուրս է բերվել պետության ծախսերը կրթության ոլորտում փոփոխականը), x_8 -ը՝ պետության ծախսերը կրթության ոլորտում (ՀՆԱ %):

Առողջապահական ցուցանիշների համար ստացել ենք հետևյալ հավասարումը.

$$Y' = 0,024x_9 - 1,2 \text{ (Adj. } R^2 = 0,905\text{)},$$

որտեղ՝ Y' -ը ժՄԻ-ն է (ժՄԻ, որից դուրս է բերվել կյանքի սպասվող տևողություն փոփոխականը), x_9 -ը՝ կյանքի սպասվող տևողությունը:

Այսպես՝ քաղաքական գործոններից Հայաստանի ժողովրդավարության վրա նշանակալի ազդեցություն ունեն քաղաքական կայունություն և օրենքի գերակայություն փոփոխականները, որոնց դրական փոփոխությունը մեկ միավորով կհանգեցնի ժՄԻ-ի աճին՝ համապատասխանաբար 0,004 և 0,014 միավորներով: Նշված փոփոխականները պայմանավորում են կախյալ փոփոխականի տատանումների 54-60%-ը: Քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների ինդեքսի փոփոխությունը մեկ միավորով կպայմանավորի ժՄԻ-ի փոփոխությունը 0,09 միավորով:

Ժողովրդավարության վրա ազդում են նաև ՀԱԱ-ն և առևտրաշրջանառությունը: 1 շնչի հաշվով ՀԱԱ-ի աճը 100 դոլարով, իսկ արտաքին առևտրաշրջանառության նվազումը 1%-ով ՀՆԱ-ի նկատմամբ կհանգեցնեն ժՄԻ-ի աճին՝ համապատասխանաբար 0,005 և 0,006 միավորներով: Առանձնակի ուշադրության է արժանի առևտրաշրջանառության բացասական ազդեցության հանգամանքը ժողովրդավարության մակարդակի ինդեքսի վրա: Հնարավոր պատճառներից կարող է լինել Հայաստանի արտաքին առևտրաշրջանառության մեջ առկա անհավասարակշռությունը: Առևտրաշրջանառության բացասական մնացորդը մեր տնտեսության խնդիրներից մեկն է, որը, անշուշտ, վնասում է ներքին շուկային:

Սոցիալական ցուցանիշներից Ջինի գործակցի նվազումը 0,1 միավորով կհանգեցնի ժՄԻ-ի աճին 0,05 միավորով՝ պայամանավորելով կախյալ փոփոխականի տատանումների 78%-ը:

Մարդկային զարգացման համաթվի կրթության բաղադրիչի աճը 0,1 միավորով, իսկ կրթության ոլորտում պետության ծախսերի փոփոխությունը 1%-ով ՀՆԱ-ի նկատմամբ կհանգեցնեն ժՄԻ-ի փոփոխությանը՝ համապատասխանաբար 0,09 և 0,078 միավորներով: Մասնավորապես ՄՁՀ կրթության բաղադրիչն ունի դետերմինացիայի բավական բարձր գործակից և պայամանավորում է ժողովրդավարության մակարդակի ինդեքսի տատանումների 86%-ը:

Առողջապահական գործոններից նշանակալի կապ է հաստատվել ժՄԻ-ի և կյանքի սպասվող տևողության միջև, և վերջինիս դրական փոփոխությունը 1 տարով կբերի ժՄԻ-ի աճին 0,02 միավորով:

Ամփոփելով նշենք, որ ռեգրեսիայի վերլուծությունը ցույց է տալիս, որ ժողովրդավարության մակարդակի ինդեքսի վրա առավելապես ազդում են քաղաքական իրավունքներն ու քաղաքացիական ազատությունները, քաղաքական կայունությունն ու օրենքի գերակայությունը, Ջինի գործակիցը, առևտրաշրջանառության ծավալները, ՀԱԱ-ն ու մի շարք այլ կրթական և առողջապահական գործոններ: Ինչպես արդեն նշել ենք, այդ գործոններից բավական բարձր դետերմինացիայի գործակիցներ ունեն Ջինի ինդեքսը և ՄՁՀ կրթության բաղադրիչը: Ջինի ինդեքսը ցույց է տալիս, որ հայ հասարակությունում առկա է եկամուտների անհավասար բաշխում, այսինքն՝ հասարակության բևեռացվածություն և միջին խավի բացակայություն, ինչը բացասաբար է անդրադառնում ժողովրդավարական գործընթացների զարգացման վրա: Հայտնի է, որ Հայաստանում գրագիտության մակարդակը 99,6 տոկոս է, որը բավականին բարձր ցուցանիշ է և համարվում է համընդհանուր տարրական կրթության հիմքը՝ էական դեր ունենալով աղքատության կրճատման, կայուն զարգացման և ըստ այդմ՝ ժողովրդավարության ապահովման գործում: Ժողովրդավարության համախմբման գործընթացում դրական տեղաշարժ ապահովվելու նպատակով նախ և առաջ անհրաժեշտ է ուշադրության կենտրոնում պահել նշված գործոնները:

***Բանալի բառեր** – ժողովրդավարության մակարդակի ինդեքս, քաղաքական, սոցիալական, տնտեսական, կրթական, առողջապահական գործոնների ինդեքս, ժողովրդավարության չափման մոդել, փոփոխականներ, ցուցանիշներ, ռեգրեսիայի վերլուծություն*

АРУСЯК АЛЕКСАНИЯ – Индекс уровня демократии в Армении (1995–2012). – Современные демократические тенденции привели к формированию и совершенствованию инструментов, позволяющих оценить, сравнить между собой и объяснить демократические процессы в разных странах и на разных этапах развития. Выработана модель, посредством которой оценивается уровень демократии (индекс уровня демократии). Она позволяет определить, в какой степени развита демократия в той или иной стране в то или иное время, а также сравнить различные страны по уровню сформированности в них демократических институтов. В статье измеряется уровень демократии в Армении (1995–2012) и анализируются факторы, от которых более всего зависит её развитие.

Ключевые слова: индекс уровня демократии, индекс политических, социальных, экономических факторов, индекс факторов образования, здравоохранения, переменные показатели, регрессионный анализ

ARUSYAK ALEKSANYAN – *The Index of Democracy Level of Armenia (1995-2012)*. – Contemporary democratic developments around the world make a need for processing tools to evaluate, to compare and to explain democratization processes across countries and over the time. The following article presents the model for assessing democracy (Index of Democracy Level-IDL), based on the method of index construction. This approach gives an opportunity to analyze the level of democracy of the given country in its different periods as well as to compare different countries by democracy level. In the article Armenian democracy in the time span between 1998 and 2012 is modeled and is estimated as well as factors mostly influencing democracy in Armenia by means of regression analysis are determined in order to reveal conditions and means for development of democracy.

Key words: Index of Democracy Level, index of political, social, economic, education, health factors, democracy assessment model, democracy assessment/measuring model's variables, indicators, regression analysis

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԶԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ
INFORMATION ABOUT THE AUTHORS

- 1. ԱՆԴՐԱՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ** – ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ

АНДРАНИК ГРИГОРЯН – аспирант кафедры истории Армении ЕГУ
ANDRANIK GRIGORYAN – PhD student of the Chair of Armenian History, YSU
Էլ. փոստ՝ andranikgs@gmail.com
- 2. ԱՇՈՏ ԵՆԳՈՅԱՆ** – քաղաքական գիտությունների դոկտոր, դոցենտ, ԵՊՀ քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի վարիչ

АШОТ ЕНГОЯН – доктор политических наук, доцент, заведующий кафедрой теории и истории политической науки ЕГУ
ASHOT ENGOYAN – Sc. D. in Politics, Associate Professor, Head of the Chair of Theory and History of Political Science, YSU
Էլ. փոստ՝ aengoyan@rambler.ru
- 3. ՅՈՒՐԻ ՄՈՍՏՅԱԵՎ** – պատմական գիտությունների թեկնածու, Ռյազանի Ս. Ա. Եսենինի անվան պետական համալսարանի ընդհանուր պատմության և միջազգային հարաբերությունների ամբիոնի դոցենտ

ЮРИЙ МОСТЯЕВ – кандидат исторических наук, доцент кафедры всеобщей истории и международных отношений Рязанского государственного университета им. С. А. Есенина
YURI MOSTYAEV – PhD, Associate Professor of the Chair of General History and International Relations, Ryazan State University after S. A. Yesenin
Էլ. փոստ՝ mostishe@yandex.ru
- 4. ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ** – պատմական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայ եկեղեցու պատմության և եկեղեցաբանության ամբիոնի դոցենտ

АРАМ ОГАНЕСЯН – кандидат исторических наук, доцент кафедры истории армянской церкви и экклесиологии ЕГУ
ARAM HOVHANNISYAN – PhD, Associate Professor of the Chair of the History of Armenian Church and Ecclesiology, YSU
Էլ. փոստ՝ ahov@mail.ru, gretameri3@gmail.com
- 5. ԱՇՈՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ** – քաղաքական գիտությունների թեկնածու, ԵՊՀ քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի դոցենտ

АШОТ АЛЕКСАНИЯН – кандидат политических наук, доцент кафедры теории и истории политической науки ЕГУ
ASHOT ALEKSANYAN – PhD, Associate Professor of the Chair of Theory and History of Political Science, YSU
Էլ. փոստ՝ ashalex@ysu.am

6. ԳԱՐԻԿ ՔԵՐՅԱՆ – քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի վարիչ

ГАРИК КЕРЯН – доктор политических наук, профессор, заведующий кафедрой политических институтов и процессов ЕГУ

GARIK KERYAN – Sc. D. in Political Sciences, Professor, Head of the Chair of Political Institutes und Processes, YSU

Էլ. փոստ՝ garik_keryan@mail.ru, g.keryan@mail.y-su.am

7. ԱՐՈՒՍՅԱԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ – քաղաքական գիտությունների թեկնածու, ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի դասախոս, փորձագետ

АРУСЯК АЛЕКСАНИЯН – кандидат политических наук, преподаватель и эксперт Центра европейских исследований ЕГУ

ARUSYAK ALEKSANYAN – PhD, Lecturer and Expert at the Center for European Studies, YSU

Էլ. փոստ՝ arusyak.aleksanyan@yahoo.com

**«ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ» ՀԱՆԴԵՍԻ
«ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
ՇԱՐՔԻ 2014 Թ. ՀԱՄԱՐՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բաղդասարյան Տիգրան – Գիտության ոլորտում հայ-ֆրանսիական համագործակցությունը 1992-2013 թթ.....	1.13*
Գյանջումյան Վալերիյա – Թուրքիայի հայկական քաղաքականությունը արդի փուլում (ռուս.).....	2.30
Գրիգորյան Անդրանիկ – Միջազգային ռազմական համագործակցության հայեցակարգային հիմնադրույթների մասին.....	3.3
Ենգոյան Աշոտ – Եվրասիական միության երկրների գաղափարախոսական ուղենիշները (ռուս.).....	3.12
Էլիբեգովա Անժելա – Ղուբայում զանգվածաբար թաղվածների գերեզմանոցը՝ որպես քաղաքական միջի ստեղծման գործիք Ադրբեջանում (ռուս.).....	2.16
Թորոսյան Շիրակ – Արդահանի խնդիրը հայ-վրացական հարաբերություններում (1920 թ. հունվար-օգոստոս).....	2.3
Ժամհարյան Արմեն – «Արաբական գարունը» Մադրիդում և Թուրքիան.....	1.21
Հովհաննիսյան Արա – Հայ-սիրիական առևտրատնտեսական հարաբերությունները (1991-2011 թթ.)	1.30
Հովհաննիսյան Արամ – 1254 թ. կնքված հայ-մոնղոլական պայմանագրի գնահատության շուրջ	3.30
Հովհաննիսյան Գագիկ – Խաղաղապահ գործունեությունը Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության համակարգում.....	1.3
Մոստյան Յուրի – Բրիտանական աշխարհառաջնավարությունը Հնդկական օվկիանոսի շրջանում Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեին (ռուս.).....	3.21
Սուլախյան Գայանե – ԱՊՀ երկրների ինտեգրացիոն գործընթացների շուրջ (ռուս.).....	2.24

* Թվերից առաջինը նշանակում է հանդեսի համարը, իսկ երկրորդը՝ հոդվածի էջը:

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

<i>Ալեքսանյան Աշոտ</i> – Կանանց քաղաքացիավարական ներկայացվածության հիմնախնդիրները ՀՀ-ում	3.36
<i>Ալեքսանյան Արուսյակ</i> – Հարավային Կովկասի, ԵվրԱզԵՍ-ի և ԵՄ-ի քաղաքական կայունության ինդեքսների համեմատական վերլուծություն.....	1.42
<i>Ալեքսանյան Արուսյակ</i> – Հայաստանի ժողովրդավարության մակարդակի ինդեքսը (1995-2012 թթ.).....	3.60
<i>Հովսեփյան Արմինե</i> – Թուրքիայի հարավկովկասյան քաղաքականության արդի դրսևորումները	1.55
<i>Մանուկյան Սահակ</i> – Հայերենին տիրապետելը՝ որպես համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնելու պարտադիր պայման.....	1.74
<i>Ջանգոզյան Ստելլա</i> – Էթնիկական ինքնությունը որպես Սփյուռքի ձևավորման և պահպանման գործոն (ռուս.)	1.64
<i>Սիմյան Տիգրան</i> – Շեղված հաբիտուսը (Թոմաս Մանի օրինակը).....	2.57
<i>Ստեփանյան Լիլիթ</i> – Քաղաքացիական հասարակության ընթացման հարցի շուրջ	2.35
<i>Ստեփանյան Նունուֆար</i> – Կանխատեսման տեխնիկաների (գործիքներ) կիրառությունը քաղաքական որոշումներ ընդունելիս	2.49
<i>Վարազյան Մերի</i> – Քաղաքացիական ծառայության կայացման հայեցակարգերը ՀՀ-ում	2.41
<i>Քեռյան Գարիկ</i> – Կուսակցությունների տիպավորման գաղափարաքաղաքական սկզբունքի կիրառման հարցի շուրջ	3.47

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Հանդիսավոր նիստ՝ նվիրված Ջոն Կիրակոսյանի ծննդյան 85-ամյակին ..	2.72
Պրոֆեսոր Էդիկ Զոհրաբյանի ծննդյան 75-ամյակը	2.70

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ * СОДЕРЖАНИЕ * CONTENTS

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ
INTERNATIONAL RELATIONS**

Անդրանիկ Գրիգորյան – Միջազգային ռազմական համագործակցության
հայեցակարգային հիմնադրույթների մասին **3**
Andranik Grigoryan – О концептуальных аспектах международного военного
сотрудничества
Andranik Grigoryan – On the Issue of Conceptual Aspects of International
Military Cooperation

Աշոտ Ենգոյան – Եվրասիական միության երկրների գաղափարախոսա-
կան ուղենիշները (ռուս.) **12**
Ashot Engoyan – Идеологические ориентиры стран Евразийского союза
Ashot Engoyan – The Ideological Guidelines of Eurasian Union States (rus.)

Յուրի Մոստյաև – Բրիտանական աշխարհառազմավարությունը Հնդկա-
կան օվկիանոսի շրջանում Երկրորդ համաշխարհային պատերազ-
մի նախօրեին (ռուս.) **21**
Yuri Mostyaev – Британская геостратегия в зоне Индийского океана на-
кануне Второй мировой войны
Yuri Mostyaev – British Geostrategy in the Region of the Indian Ocean in the
Wake of the Second World War (rus.)

Արամ Հովհաննիսյան – 1254 թ. կնքված հայ-մոնղոլական պայմանագրի
գնահատության շուրջ **30**
Aram Hovhannisyán – К оценке армяно-монгольского договора 1254 года
Aram Hovhannisyán - On Evaluation of the Treaty Between the Cilician King
Hetum I and Great Ilkhan of Mangu Signed in 1254

**ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ПОЛИТОЛОГИЯ
POLITICAL SCIENCE**

Աշոտ Ալեքսանյան – Կանանց քաղաքացիավարական ներկայացվածու-
թյան հիմնախնդիրները ՀՀ-ում **36**
Ashot Aleksanyan – Проблемы цивилиархического представительства жен-
щин в Армении
Ashot Aleksanyan – The Main Issues of Civiliarchic Representation of Women in
Armenia

Գարիկ Քերյան – Կուսակցությունների տիպավորման գաղափարաքաղաքական սկզբունքի կիրառման հարցի շուրջ.....	47
<i>Гарик Керян</i> – Проблема типологии партий по политико-идеологическому принципу	
<i>Garik Keryan</i> – Typology of Parties Based on the Political and Ideological Principles: Scientific-Methodological Issues	
Արուսյակ Ալեքսանյան – Հայաստանի ժողովրդավարության մակարդակի ինդեքսը (1995-2012 թթ.).....	60
<i>Арусяк Алексанян</i> – Индекс уровня демократии в Армении (1995–2012)	
<i>Arusyak Aleksanyan</i> – The Index of Democracy Level of Armenia (1995-2012)	
Տեղեկություններ հեղինակների մասին.....	76
Сведения об авторах	
Information about the Authors	
«Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի «Միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն» շարքի 2014 թ. համարների տարեկան բովանդակությունը.....	78
Содержание журнала "Вестник Ереванского университета" (серия "Международные отношения, политология") за 2014 г.	
The annual contents of the "International Relations, Political Science" issues of the "Bulletin of Yerevan State University" in 2014	

Պատիճ` 77716

Խմբագրության հասցեն. Երևան, Ալեք Մանուկյան փող., 1, 107
Адрес редакции: Ереван, ул. Алека Манукяна 1, 107
Address: 1, 106, Alek Manoukian str., Yerevan, Republic of Armenia

Հեռ. 060 710 218, 060 710 219

Էլ. փոստ` ephbanber@ysu.am
Կայք` ysu.am

Վերստուգող սրբագրիչ`
Контрольный корректор
Proofreader

Գ. Գրիգորյան
Г. Григорян
G. Grigoryan

Համակարգչային ձևավորում`
Компьютерная верстка
Computer designer

Մ. Աբգարյան
М. Абгарян
M. Abgaryan

Ստորագրված է տպագրության 10. 12. 2014:
Տպաքանակ` 100: Չափսը` 70x108 1/16: Թուղթ` օֆսեթ:
Տպագրական 5 մամուլ:

.....
«Լիմուշ» ՍՊԸ, Երևան, Պուշկինի փող., 40-76: